


ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

**ԱԿՆԱԴԿՆԵՐ
ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ**

Հատոր 2

Երևան - 2015



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

ВАЗГЕН Г. АМБАРЦУМЯН

ОЧЕРКИ
ИСТОРИИ АРМЯНСКОЙ ЛЕКСИКОГРАФИИ
(X-XVIII вв.)

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО <<ГИТУТЮН>> НАН РА
2015

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA
H. ACHARYAN INSTITUTE OF LINGUISTICS

VAZGEN G. HAMBARDZUMYAN

GLIMPSES ON THE
HISTORY OF THE ARMENIAN LEXICOGRAPHY
(X-XVIIIth cc.)

YEREVAN
<<GITUTYUN>> PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2015

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

**ԱԿՆԱՐԿՆԵՐ
ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
(X-XVIII դդ.)**

Հատոր 2

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015

Տպագրվում է
ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԳ 09.198. 1

ԳՄԴ 81.2

Հ 205

Պատասխանատու խմբագիր
Բանասիր. գիտ. թեկնածու Ն.Գ.Հովհաննիսյան

Գրախոսներ
Բանասիր. գիտ. թեկնածու, դոց. Ա. Լ. Սարգսյան
Բանասիր. գիտ. թեկնածու, դոց. Թ. Ա. Ասոյան

Համբարձումյան Վ.Գ.

Հ 205 Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (X-XVIII դդ.) / (Պատ. խմբ. Ն.Գ.Հովհաննիսյան).- Ե., ՀՀ ԳԱԱ <<Գիտություն>> հրատ., 2015, էջ:

Աշխատությունը նվիրված է հայ բառարանագրության պատմության համառոտ ուրվագծմանը, ինչպես նաև X դ., ավելի ուշ՝ XVII դ. վերջին և XVIII դ. երևան եկած մի քանի հուշարձանների բնագրագիտական և լեզվաբանական քննությանը՝ լրացուցիչ փաստերի օգտագործմամբ և համեմատաբար ավելի մանրամասն վերլուծությամբ:

Գիրքը նախատեսված է բանասերների, պատմաբանների և հայ գրավոր մշակույթի հարցերով հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 809.198. 1(091):941(479.25)

ԳՄԴ 81.2Հ+63.3(2Հ)

ISBN 978-5-550-01597-1

Վազգեն Համբարձումյան, 2015

«Nemo de annis sed meritis suis
quisque aestimandus est»
(«Ոչ ոք ի տարերց [այսպէս], բայց
յարդեանց իւրեանց ամենայն ոք յարգելի է»):
Ստեփանոս Ռօշքայ
(«Գանձ հայոց լեզուի», մասն Բ, աւարտ):

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատության առաջին հատորը լույս է տեսել տարիներ առաջ: Ժամանակին հավաքած նյութը շարադրելու համար անհրաժեշտ եղավ դիմել լրացուցիչ տվյալների (օրինակ՝ Ստ. Ռոշքայի ձեռագիր բառարանի դեպքում), ճշգրտել և առավել ամբողջական դարձնել հետագա տարիների հավաքածը և առանձնացնել նախորդ հատորի հետ միասին ամբողջություն ներկայացնող նյութը՝ կապված ոչ միայն քննության ընդհանուր սկզբունքների, այլև կոնկրետ հարցադրումների հետ:

Տարիների ընթացքում այս թեմայով լույս ենք ընծայել առանձին հոդվածներ, որոնց հավելում ենք նորերը, և իբրև մեկ ամբողջություն՝ այժմ միանգամայն նոր շարադրանքով ներկայացնում առանձին գրքով:

Այս հատորը նվիրվում է հայ բառարանագրության համեմատաբար առանցքային պատմությանը՝ նոր տվյալների ընդգրկմամբ, ինչպես նաև մինչ օրս ոչ բավարար չափով քննված մի քանի բառարանների («բառացանկերի») լեզվական ի նյութի ուսումնասիրությանը:

Մասնավորապես տալիս ենք հայ բառարանագրության պատմության ուրվագիծ՝ ըստ առանձին շրջանների, ըստ այդմ անդրադառնում դրանցում երևան եկած կարևորագույն աշխատանքներին:

Այնուհետև, առանձին ուշադրության առարկա են 10-րդ դ. հայերեն-լատիներեն բառացանկը, Ստ. Ռոշքայի բառարանը և Եր. Մեղրեցու բառարանը, որոնք այստեղ քննարկվում են հիմնականում բառագիտական, մասամբ բնագրագիտական-աղբյուրագիտական տեսանկյունից:

Ֆրանսիայի Օտուն քաղաքի գրադարանի ֆոնդերից հայտնի բառացանկը (90 բառ պարունակող) 19-րդ դ. 80-ական թթ. մինչև գրեթե մեր օրերը գրավել է ուսումնասիրողների ուշադրությունը: Սակայն դեռևս կան սպառիչ լուծում չստացած

հարցեր, մանավանդ հայերենի պատմական հնչյունաբանության, բարբառների պատմության առումով: Այդ բառացանկից հետո ևս երևան են գալիս տարբեր բնույթի և ծավալի բառացանկեր, կան նաև հայերեն այբուբենի վերաբերյալ նյութեր պարունակող բառարաններ (բառացանկեր, տառերի զուգադիր ցանկեր և այլն), որոնք հայոց գրերի հնչյունական (հնչույթաբանական) տեղաշարժերի առումով առանձին քննության առարկա չեն եղել (օրինակ՝ հայերեն «Հայր մերը»-ի լատիներեն գրադարձությունը, Ֆ. Ռիվոլայի, Հ. Վիլլոտի, Աստ. Ներսեսովիչի երկլեզվյան բառարանների նյութը, հայերեն-լատիներեն մի շարք ձեռագիր ցանկեր, հայերեն և լատիներեն գրերի զուգադիր շարքեր՝ տեղ գտած ձեռագրերում կամ հնատիպ գրքերում և այլն): Դրանց անդրադառնալը որոշ իմաստով օգնում է առավել ամբողջական պատկերացում ունենալ, ի մասնավորի, Օտունի բառացանկի վերաբերյալ:

Ստ. Ռոշքայի ձեռագիր բառարանը քննում ենք երկու նպատակով, նախ՝ այն տեսնել հայ բառարանագրության պատմության լայն ծիրի մեջ, իրեն պատշաճող տեղում, այնուհետև՝ ստեղծել տրամադրություն այն հրատարակելու և ըստ այդմ ուսումնասիրելու համար: Բառարանը զգալի տարբերություններ ունի հետագա բառարանների համեմատությամբ՝ թե՛ օգտագործված գրավոր աղբյուրների, թե՛ վերջիններիս պարունակած նորանոր բառերի և բառային նոր իմաստների առումով: Ինչպես հ. Ղ. Ալիշանն է ընդգծում, Ռոշքայի բառարանի աղբյուրների մի զգալի մասն այդպես էլ անհայտ է մնացել հայ մատենագրությանը՝ դրանց կորստյան պատճառով: Լեզվական քննությունը իրականացվում է ոչ ըստ տեսածի (in visu), այլ տարբեր հոդվածներում և ձեռագրացուցակի նկարագրության մեջ տեղ գտած փաստերի հիման վրա:

Եր. Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ին նվիրված բաժնում կատարում ենք «կասկածելի և անստույգ» համարված երեքուկես տասնյակից ավելի բառերի մեկնություն (դրանք նախկինում ուշադրության առարկա չեն եղել), ինչպես նաև բառարանում ինքնաբերաբար տեղ գտած լատինաբան հայերենին բնորոշ մեկ տասնյակից ավելի ձևերի (գերազանցապես քերականական ձևեր, որոնք բառահոդվածի գլխաբառեր են դիտվել, այդ պատճառով էլ մնացել են բառագիտորեն անհասկանալի և անմեկնաբանելի), բարբառային (խոսակցական), այլև օտար

(փոխառյալ), նոր կամ չբառարանագրված (ՆՀԲ-ն, օրինակ, չունի) բառերի, քերականական (միայն անվանական և բայական՝ իբրև բառահոդվածի գլխաբառ) ձևերի, արտասանական (հնչյունական) տարբերություն ունեցող (երկգրությամբ հանդես եկող) միավորների քննություն և այլն:

Աշխատանքը գրված է ձեռքի տակ եղած նյութի միայն մի մասի (թերևս՝ մեծ մասի) օգտագործմամբ, իսկ դա նշանակում է, որ այս բնագավառում կան հետագա աշխատանքների ձեռնամուխ լինելու անհամեմատ մեծ հնարավորություններ, և դա առաջին հերթին բացատրվում է հայերեն ձեռագրերի հարստությամբ (պարունակած <<գաղտնիքներով>>), որոնց բացահայտումը և գիտական արժևորումը ուսումնասիրողից պահանջում են ամենօրյա աշխատանքի որոշակի տոկոսնություն:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում բանասիրական գիտությունների թեկնածու Ն. Գ. Հովհաննիսյանին՝ աշխատանքի ձեռագիրը խմբագրելու, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Լ. Սարգսյանին և բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Թ. Ա. Ասոյանին՝ աշխատանքի ձեռագիրը գրախոսելու համար:

Միրով կրնդունենք ամեն մի տեղին դիտողություն և առաջարկություն:

ՈՒՐՎԱԳԻԾ ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Հայ գրավոր մշակույթը հարուստ է ոչ միայն բարձրարժեք ինքնուրույն և թարգմանական գրականությամբ, այլև բառարաններով: Դրանք երևան են գալիս մեր լեզվի ամենավաղ շրջանում (5-րդ դ.) և շարունակաբար ստեղծվում նաև մեր օրերում:

Հայերեն բառարանները նույնպես ըստ ծավալի և բովանդակության, նյութի ընդգրկման և կառուցվածքի, հետապնդած նպատակի և այլ լեզուների հետ ունեցած առնչության միանգամայն տարբեր են և բազմազան: Հայտնի են տպագիր և ձեռագիր, ինքնուրույն և թարգմանական, ընդարձակ և ոչ ծավալուն բազմաթիվ բառարաններ, որոնք ունեն ոչ միայն մշակութային, այլև լեզվաբանական արժեք:

Բառարան տերմինն այս դեպքում հասկացվում է լայն իմաստով, այսինքն՝ որպես այդպիսին դիտվում են և՛ բուն բառարանները, և՛ բառգրքույկները, բառացանկերը, տերմինարանները (տեղադրուսները), մատենակից հավելված- <<բառարանները>> և այլն:

Բառարանը, ինչպես ընդունված է ասել, տվյալ լեզվի բառերի հավաքածու է, մի տեսակ շտեմարան, որում բառերը և հարակից միավորները ամբողջանում են ոչ թե պատահականորեն, այլ որոշակի սկզբունքներով և կառուցվածքով:

Ամեն մի բառարան սովորաբար կոչված է բավարարելու իմացական և մշակութային որոշակի պահանջ, ուստի այն կազմվում է առաջին հերթին ժամանակի թելադրանքով: Բառարանի բուն նպատակը ամենից առաջ տվյալ լեզվի կամ լեզուների ընդհանուր բառապաշարի, առանձին դեպքերում նաև վերջինիս ոճերի և արտահայտությունների, դարձվածային միավորների, այլև տերմինների և տերմինային անվանումների մանրամասն բացատրություն է, կոնկրետ ուսուցումը և ճիշտ կամ տեղին գործածությունը: Բառարանը նաև տվյալ լեզվի բառապաշարի պատմության վկայությունն է, որովհետև նրանում ամբարված բառամթերքը հավաստում է, թե տվյալ իմաստը կրող բառը երբ է հանդես եկել լեզվում, իր տեղը գտել նրա բառային ամբողջության (ֆոնդի) մեջ:

Բառարանը ստեղծվում է ոչ միայն մեկ լեզվի, այլև երկու և ավելի լեզուների սովորական և առանձնահատուկ (տերմինային) բառապաշարի ամբողջացման և

մեկնաբանման, որոշ դեպքերում՝ թարգմանության և փոխադարձ հարստացման նպատակով:

Հայ առաջին բառարանները սկզբնապես ունեն, այսպես կոչված, <<խանձարուրային>> (<<ինկուբացիոն>>) բնույթ: Դրանք այլ բան չեն, քան տեքստի տողերի մեջ (<<տողամիջյան>>) կամ լուսանցքներում, նույնիսկ բառերին կից տրվող <<բառամեկնություն>>-բացատրություններ, տեքստին հավելվող սովորական նշումներ, սեղմ ցանկեր և այլն: Իսկ ավելի ուշ ի հայտ են գալիս ոչ ծավալուն բառարաններ և համառոտ բառգրքույկներ:

Բերենք մեկ-երկու օրինակ:

1. Ա. Մեյեն իր հոդվածներից մեկում, որ վերնագրված է <<Եզնիկի մի հատվածի իմաստի մասին>>, անդրադառնում է Մեթոդիոսի մի հատվածի մեջ հանդիպող հուն. *ποιότης* (լատ. *qualitas* <<որակ>>) բառին, որի մասնագիտական թարգմանության համար հայերենում համարժեք բառ չգտնելով՝ այն թարգմանվում է մի քանի բառով, այսինքն՝ նկարագրական բացատրությամբ (սա նշում է նաև Եզնիկի բնագիրն ուսումնասիրող Լ. Մարիեսը): Մեյեն գրում է. <<Ինչպես ցույց է տալիս պր. Մարիեսը, Եզնիկը համադաս երեք բառ է օգտագործում այնտեղ, որտեղ ուզում է *ποιότης* բառը թարգմանել <<որակ>> իմաստով՝ *արդուց եւ զարդուց եւ կերպարանց արարիչ*>>¹: Եվ սա միակ օրինակը չէ, որ կարելի է ցույց տալ Եզնիկի երկում՝ հիմնված Մարիեսի և վերջինիս դիտարկմանն անդրադարձած Մեյեի այդօրինակ նկատառման վրա: Մեյեն գրում է նաև, որ <<Նույնպես և *φποιος*-ն արտահայտվել է *անկերպարան եւ անզարդ եւ անարգ*-ով>> և այլն² :

2. Ճիշտ նախորդի նման մի դիտարկում ևս ունի Մեյեն՝ այս անգամ <<Եղիշեի մի հատվածի մասին>> հոդվածի այն մասում, որում խոսում է բնագրում տեղ գտած իրանական <<Երան եւ Տաներան>> կապակցության մասին՝ գրելով հետևյալը. <<Եղիշեի ձեռագրերը, բացառությամբ *Անձևացեսցի*, ունեն *Երան եւ Տաներան*, փոխանակ *Աներան* սպասելի ձևի: ...*տաներան*-ի հայերեն *տ*-ն ամենայն հավանականությամբ բացատրական տառ է. *տ*-ի միջոցով *ան*-ը մեկնաբանվել է որպես ժխտական ձև. գիտենք, որ հայերենում *տ*-ն բարդ բառերում ժխտական

¹ Տե՛ս Ա. Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978, էջ 504:

² Նույն տեղում:

իմաստ ունի (տե՛ս Հյուբշման, Arm. Gramm., I, էջ 495): Բացատրական տառը հեշտությամբ կարողացել է գողվել օտար բառին»³ :

Այնուհետև, մեզանում լույս են տեսնում հայ հին գրական տարբեր կարգի հուշարձանների դժվարին բառերի բացատրությանը, ինչպես նաև բանաստեղծական երկերի բառապաշարի մեկնաբանությանը վերաբերող բառարաններ կամ բառգրքայիկներ:

Ուստի ժամանակի ընթացքում բառարանների ստեղծումն անընդհատ կատարելագործվում է: Եվ երբեմնի երևան եկած պարզագույն, սովորական բառացանկ-«բառարանների» դիմաց այսօր ինչպես այլ ժողովուրդների, այնպես էլ մեր ժողովրդի՝ դարերի ընթացքում ստեղծած գրավոր մշակույթն ըստ հնարավորին ամփոփվում է հանրագիտարանային բառարաններում, որոնք լույս են տեսնում տասնյակ հատորներով:

Մեր գրավոր մշակույթի գանձարանում հայտնի են մի քանի տասնյակից ավելի մեծ ու փոքր, ինչպես նաև մի քանի հարյուրից ավելի համառոտ ու ծավալուն, ամբողջական և որոշակի կառուցվածք ունեցող բանասիրական (բացատրական), այլև թարգմանական բառարաններ:

Բովանդակության տեսանկյունից բառարանները լինում են երեք տիպի՝ ուսումնական, գիտական և մշակութային: Դրանք ընդհանուր բնույթի, ինչպես նաև ճյուղային (մասնագիտական) բառարաններ են: Վերջիններիս համեմատաբար կատարյալ և համապարփակ տեսակը մեծ ու փոքր հանրագիտարաններն են: Մեզանում հանրագիտարանային բառարաններ եղել են և՛ ոչ վաղ անցյալում, և՛ նոր ժամանակներում: Նշենք, օրինակ, Արսեն Դպրի «Գիրք սահմանաց յոգնադիմի իրողութեանց» (= «Տարատեսակ երևույթների սահմանումների գիրք», Կ.Պոլիս, 1749, 528 էջ), Մատթեոս Թեոփիլյանի «Բառգիրք երեւելի արանց» (հհ. 1-2, Վեն., 1839, երկուսը միասին՝ 2067 էջ), Մինաս Բժշկյանի «Համառօտ նկարագիր վարուց երեւելի արանց» (Վեն., 1850, 966 էջ) բառարանները:

Որոշակի նպատակ են հետապնդում նաև տերմինաբանական բառարանները կամ, ինչպես ընդունված է անվանել, տերմինարանները, որոնք պարունակում են մեկ կամ երկու և ավելի լեզուների մասնագիտական բառապաշարը: Ունենք հայերեն

³ Նույն տեղում, էջ 507:

բազմաթիվ ճյուղային (տերմինային) բառարաններ, որոնք ստեղծվել են ոչ միայն անցյալում, այլև մեր օրերում, կազմվել են այս կամ այն բնագավառի տերմինների և տերմինային անվանումների բացատրության, դրանց կանոնարկման և միասնականացման, երբեմն նաև թարգմանության նպատակով:

Մեզանում համեմատաբար լավ են ուսումնասիրված, այսպես կոչված, խոշոր բառարանները⁴: Այնինչ փոքր ծավալի, հատկապես այս կամ այն ձեռագիր մատյանին կամ գրքին կից ներկայացվող «բառարանները» (հավելված-բառացանկերը և այլն) մինչև վերջին ժամանակներս չեն եղել առանձին ուշադրության առարկա⁵:

Հայ բառարանագրության ավելի քան 1600-ամյա պատմությունը փորձել ենք բաժանել մի քանի շրջանի՝

- 1) նախնական շրջան (5- 9-րդ դդ.),
- 2) միջնադարյան շրջան (10-16-րդ դդ.),
- 3) նոր շրջան (17-19-րդ դդ.),
- 4) նորագույն շրջան (20-դ. առ այսօր):

Այս շրջաններում էլ, տարբեր ինտենսիվությամբ, ստեղծվում են թե՛ ձեռագիր և թե՛ տպագիր բառարաններ, որոնք ոչ միայն առանձին և ինքնուրույն, այլև թարգմանական բնույթի են: Հայերեն երկլեզվյան (երեքլեզվյան և այլն) բառարանները երևան են գալիս մեծ մասամբ մշակութային, երբեմն նաև գիտական հետաքրքրության պայմաններում: Դրանք հիմնականում ուսումնական և կրթական նպատակ հետապնդող բառարաններ են:

ա) Նախնական շրջանում քիչ չեն այն դեպքերը, երբ հայերեն դժվար հասկանալի, այլև օտար բառերը և արտահայտությունները («ոճերը»), հատկապես թարգմանության բերումով, արժանանում են, այսպես կոչված, տեքստից դուրս լրացուցիչ մեկնաբանության (բացատրության), նույնիսկ «տարերային» ստուգաբանության: Այս երևույթը նկատելի է, օրինակ, Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ, հայ մեկնողական գրականությանը վերաբերող ձեռագրերում,

⁴ Տե՛ս Ն. Մ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V-XV դդ.), Երևան, 1966: Նույնի, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (XVI – XVII դդ.), Երևան, 1971: Գ. Կ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968: G. B. Djahukian, Armenian Lexicology // «Dictionaries. An international Encyclopedia. Lexicology», New York-Berlin, 1991: Ռ. Մ. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, Երևան, 2010 և այլն:

⁵ Վ. Գ. Համբարձումյան, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (XVII դ. վերջ - XIX դ.), հ. 1, Երևան, 2006, էջ 8-25:

հին և միջնադարյան հայ հեղինակների ինքնուրույն և թարգմանական բազմաթիվ երկերում: Հայ պատմիչների գործերում ևս (մասամբ) նկատելի են բառամեկնողական օրինակներ, մանավանդ այս կամ այն երևույթի օտարլեզվյան անուն հանդիսացող բառերի և տերմինների դեպքում («գոր կոչի», «որ է» և այլն հարակից ձևակերպումներով):

բ)Միջնադարյան շրջանում ևս, ինչպես գիտենք, մեզանում ինքնուրույն գրականությանը զուգընթաց գրեթե միշտ կատարվել են թարգմանություններ, որոնց բառապաշարի և ոճերի ճիշտ ընկալման, ուսուցման և լայն գործածության համար անհրաժեշտ է եղել բացատրել որոշ բառեր և տերմիններ՝ դրանք ներկայացնելով բառացանկերով կամ բառաշարքերով: Ըստ այդմ կազմվել են տարբեր ծավալի թարգմանական բառարաններ:

Դրանցից, թերևս, առաջինը 9-րդ դ. վերջին և 10-րդ դ. սկզբին հայտնի հայերեն-լատիներեն համառոտ բառացանկն է, որ ձեռագիր վիճակով պահվում է Ֆրանսիային գրադարաններից մեկում: Ձեռագիրը լույս է ընծայվել ավելի ուշ, պարունակում է առօրյա գործածության և եկեղեցական միջավայրին վերաբերող մի քանի տասնյակ բառեր և անվանումներ, որոնք ոչ ամբողջովին են մեկնաբանված⁶:

Հետագայում ևս ստեղծվում են քերականական-ուղղախոսական, մեկնողական-բացատրական բառարաններ, որոնք մեծ մասամբ մինչև այժմ ձեռագիր են: Նշենք, օրինակ, Արիստակես Գրչի (12-րդ դ.) ուղղագրական բառարանը, անհայտ հեղինակների կազմած «Բառք քերականի», «Հանդես բանաստեղծաց», «Բառք քերդողական» բառարանները, Գր. Նարեկացու «Մատենանոթերգութեան» երկի (բացառությամբ 2-8-րդ գլուխների) դժվարին կամ անհասկանալի բառերի բառարանը և այլն: Հայտնի են նաև Փիլոն Եբրայեցու, Գաղիանոս բժշկապետի երկերի հայերեն թարգմանությունների ոչ այնքան դյուրին բառերի (տերմինների) բացատրական բառարանները, որոնք նույնպես առ այսօր ձեռագիր են՝ կարոտ մանրամասն ուսումնասիրման⁷: Այս շրջանում երևան են գալիս ձեռագիր փոքր ծավալի երկլեզվյան, ավելի ուշ՝ նաև բազմալեզվյան բառարաններ,

⁶ Տե՛ս ստորև (էջ 37-58):

⁷ Գաղիանոսի բառացանկին մասամբ անդրադարձել է Ն. Բյուզանդացին; Տե՛ս Ն. *Բիզանդացի*, Հայկական բառաքնություն (ուղղութիւնք ընթերցուածոց մատենագրութեանց նախնեաց և նշանակութեան բառից ինչ), Կ.Պոլիս, 1880:

որոնք ստեղծվել են գործնական-կիրառական, գլխավորապես ուսումնական նպատակով:

զ) Հայ բառարանագրությունը նոր մակարդակի է բարձրանում՝ տպագրության հիմնումից հետո, հատկապես 17-րդ դ. ի վեր, երբ հայ մշակույթի նկատմամբ առաջանում է նոր հետաքրքրություն եվրոպացի կրոնական-եկեղեցական, ինչպես նաև այլ բնագավառների հայագգի և օտար երևելի դեմքերի, գիտության տարբեր ճյուղերի ներկայացուցիչների շրջանում: Նկատենք, որ մի կողմից՝ հայ քրիստոնեական եկեղեցին, մյուս կողմից՝ հայերենը դառնում են եվրոպացի ուսումնասիրողների լայն ուշադրության առարկան, մանավանդ ժամանակի ինչ-ինչ խնդիրներին գործնական լուծում տալու առումով: Այս տեսանկյունից առավել ուշագրավ են դառնում, օրինակ, եկեղեցական-կրթական բնագավառի խնդիրները: Վերջիններս լուծելու նպատակով գրվում են համապատասխան գրքեր, մեծ մասամբ՝ դասագրքեր, կազմվում են տարբեր ծավալի և բովանդակության բառարաններ և այլն:

Առհասարակ 17-18-րդ դդ. մեզանում տեղի է ունենում գիտական-կրթական և մշակութային նոր վերելք, որի ընթացքում երևան են գալիս նաև զգալի թվով արժեքավոր, հիմնականում երկլեզվյան ծավալուն բառարաններ՝ բացատրական կամ թարգմանական բնույթի: Երկլեզվյան այդ կարգի բառարանների մի եզրում սովորաբար հայերենն է, իսկ մյուսում՝ միջնադարյան լատիներենը, որը Եվրոպայի կաթոլիկ եկեղեցու պաշտոնական լեզուն էր: Այս շրջանում ստեղծվում են մի քանի արժեքավոր բառարաններ, որոնց ընդգրկած նյութի բառագիտական ուսումնասիրությունն ունի մեծ կարևորություն հայոց լեզվի ընդհանուր բատապաշարի պատմության տեսանկյունից: Նախ՝ բացատրիկ է Միլանի Ամբրոսյան դպրոցի հայագետ Ֆրանցիսկոս Ռիվոլայի «Հայերեն-լատիներեն բառարան»-ը («<Dictionarium armeno-latinum>», Միլան, 1621, 2-րդ տպագր.՝ Փարիզ, 1633): Այնուհետև՝ առավել ուշագրավ են հետևյալները՝ Աստվածատուր Ներսեսովիչ, «<Լատիներեն-հայերեն բառարան>» («<Dictionarium latino-armenum>», Հռոմ, 1695, 596 էջ, երկայուն շարվածք, շուրջ 17,500 բառահոդված), Երեմիա Մեղրեցի, «<Բառգիրք հայոց>» (Լիվոռնո, 1698, 344 էջ, շուրջ 10, 000 բառահոդված, 2-րդ տպագր., Կ.Պոլիս, 1728-1729, 576 էջ, նույնքան բառահոդված), Հակոբ Վիլլոս

<<Լատիներէն-հայերէն նոր բառարան>> (<<Dictionarium novum latino-armenium>>),
Հոռոմ, 1714, 772 էջ, Առաջաբան՝ 28 էջ, երկայուն մանր շարվածք, շուրջ 26,000
բառահոդված):

18-րդ դ. լույս են տեսնում նաև այնպիսի բառարաններ, որոնց նպատակն է
եղել ըստ հնարավորին ամբողջական ձևով ներկայացնել հին հայերենի (գրաբարի)
բառապաշարն՝ ըստ պահպանված ինքնուրույն կամ թարգմանական գրական
հուշարձանների, այլև ռուսական մշակույթի հետ շփվող հայությանը ռուսերենի
քերականությանը և բառապաշարին հաղորդակից դարձնելը:

Այդ շրջանում, հայտնի է, հայության զգալի հատվածների բանավոր խոսքն
այլ լեզուներով էր իրականանում: Նպատակ է դրվում նախ՝ հայերենի տարրական
քերականությունների կողքին դնել մատչելի թարգմանական բառարաններ՝
այլախոսությունից մայրենի լեզու վերադառնալու համար, այնուհետև՝ ժամանակի
հանրությանը հասու դարձնել նախորդ դարերի ազգային գրավոր մշակույթը, որը
նորը ստեղծելու անսպառ միջոց է: Իսկ դա, ինչպես պարզվում է, արվում էր նաև
բառարանների միջոցով:

Այդպիսին է, ամենից առաջ, Մխիթար Սեբաստացու <<Բառգիրք հայկազեան
լեզուի>> աշխատությունը (հ. 1, Վեն., 1749, 1251 էջ, Առաջաբան՝ 22 էջ, երկայուն
մանր շարվածք, շուրջ 54,500 բառահոդված, հ. 2, Վեն., 1769, 1249 էջ, երկայուն մանր
շարվածք, շուրջ 54,500 բառահոդված)⁸: Աննախադեպ երևույթ է այս բառարանը.
կազմված է իր ժամանակի եվրոպական բառարանագրության չափանիշներով, ունի
հայ գրավոր մշակույթի մեջ առաջնեկի համբավ ոչ միայն իր կառուցվածքով,
բառարանագրման սկզբունքներով, նյութի ընդգրկման բազմակողմանիությամբ և
ծավալով, բառահոդվածների մշակման եղանակներով, գլխաբառային միավորներն
այլ լեզուների՝ հունարենի, լատիներենի և տաճկերենի հետ համադրելու հիմունքով,
բառերի աշխարհաբար լիարժեք բացատրության և համապատասխան բնագրային
վկայությունների բնույթով: Ավելին, նկատենք, որ այս բառարանի, այլև հետագայում
(դրանից երկու-երեք տասնամյակ անց) ձեռնարկված և 19-րդ դ. 30-ական թթ. լույս
ընծայված <<Նոր հայկազյան բառարան>>-ում հայերեն, լատիներեն և մյուս
լեզուներով զուգահեռները լիովին հաշվի են առնվել եվրոպացի հայերենագետների

⁸ Հմմտ. Գ. Կ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 514:

կողմից՝ հայերենի և ցեղակից լեզուների վերաբերյալ համեմատական քննության մեջ, նշենք նաև այն, որ նրանցից մի քանիսը (Պետերման, Լագարդ, Գոշե, Հյուբշման և ուրիշներ) հայերենին ծանոթացել կամ հայերենի դասեր են առել Մխիթարյան հայրերից՝ Վենետիկում⁹:

Այնուհետև, նույն ժամանակում լույս են տեսնում ռուս-հայերեն և հայ-ռուսերեն բառարանագրության առաջին նմուշները, որոնք նշանակալից են ոչ այնքան ծավալի և կառուցվածքի, որքան կոնկրետ նպատակի՝ երկու լեզուների շփումների առումով: Դրանցից առաջինն է Կլեոպատրա Սարաֆյանի «Գիրք, որ կոչի բանալի գիտութեան» (Ս. Պետերբուրգ, 1788, 285 էջ) աշխատությունը, որը վերջում ունի երկլեզվյան բառարան՝ հայերեն-ռուսերեն (շուրջ 1970 բառային միավոր) և ռուսերեն-հայերեն (շուրջ 2500 բառային միավոր), երկրորդը՝ Գրիգոր Խալդարյանի «Շաւիղ լեզուագիտութեան» (Ս. Պետերբուրգ, 1788, 156 էջ) գիրքը, որն ավելի կատարյալ բառարանագրական գործ է¹⁰:

Հայ երկլեզվյան բառարանագրության մեջ անգերագնահատելի գործ է Ստեփանոս Ռոշքայի «Գանձ հայոց լեզուի» ընդհանուր խորագրով հայերեն-լատիներեն և լատիներեն-հայերեն բառարանը: Այն մինչև այժմ ձեռագիր է, ունի ընդհանուր հաշվով 1279 էջ ծավալ, ընդ որում հայերեն-լատիներեն մասն ավելի ընդարձակ է (943 երկայուն էջ), քան լատիներեն-հայերենը (336 երկայուն էջ): Հ. Ղևոնդ Ալիշանի գնահատությամբ՝ այն չի զիջում Մխիթարյան հայրերի կազմած «Նոր հայկազյան բառարան»-ին, ավելին՝ պարունակում է շուրջ 5000 նոր բառեր, որոնք չկան հիշյալ բառարանում՝ ինչ-ինչ հանգամանքների բերումով, ամենից առաջ Ռոշքայի ձեռքի տակ եղած շատ գրքերի անտեղյակ լինելու պատճառով: Ավելացնենք, որ բառարանի հայերեն-լատիներեն մասը ոչ այնքան երկլեզվյան, որքան թարգմանական բնույթի է, այսինքն՝ լատիներենը ոչ թե հավասարապես զուգադրվում է հայերենին, այլ վերջինիս համար կատարում է, այսպես կոչված, հոմանշային լրացումի դեր:

Ինչպես Մխ. Սեբաստացու, այնպես էլ Ստ. Ռոշքայի՝ իր ժամանակի մեջ ամենաձավալուն և համակողմանի, իսկ բառարանային մշակման տեսանկյունից

⁹ Այս հարցի մանրամասն քննարկումն ապագայի գործ է, կարևոր հայերենի համեմատական ուսումնասիրության պատմության տեսանկյունից:

¹⁰ Տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 67-111:

բարձր արժանիքներ ունեցող բառարանները (մեկը՝ տպագիր, մյուսը՝ ձեռագիր) մեզանում վենետիկյան և լեհահայոց մշակութային միջավայրում ստեղծված գործեր են, որոնք այսօր ևս լավագույն օրինակ են հետազայում այս բնագավառում ավելի ծավալուն աշխատանքների ձեռնամուխ լինելու համար, մանավանդ որ դրանց ի հայտ գալուց հետո անցել են տասնամյակներ, և այդ ընթացքում հայտնի են դարձել հին գրական հայերենով գրված մի շարք ձեռագրեր, կազմվել են բազմաթիվ ձեռագրերի քննական բնագրեր, որոնց լեզվական նյութը դեռևս բառարանագրված չէ: Նկատենք, որ դրանցից առաջինը, տպագիր լինելու հանգամանքով, նոր ուղի էր հարթում տարբեր տիպի (հատկապես՝ երկլեզվյան, երեքլեզվյան¹¹ և այլն) բառարաններ ստեղծելու, առհասարակ բառարանագրության հետագա առաջընթացի համար, մի կարևոր դեր, որ կարող էր ունենալ նաև երկրորդը, եթե նախորդի նման ևս արժանացած լիներ տպագրության:

Հայ բառարանագրությունը առաջ էր գնում նաև 19-րդ դ., ընդ որում ավելի բազմապլան և ավելի բազմաբովանդակ ընդգրկումով: Այսպես, բացատրական բառարանների կողքին առանձնապես մեծ կարևորություն են ձեռք բերում թարգմանական կամ ավելի կոնկրետ՝ երկլեզվյան, երեքլեզվյան և բազմալեզվյան բառարանները:

Այս ընթացքում, ինչպես մտավոր կյանքի մյուս բնագավառներում, այնպես էլ բառարանագրության մեջ ծավալվող աշխատանքներն իրարից զգալապես տարբերվում են թե՛ հայերենին առնչվող այս կամ այն լեզվի ընդգրկման տեսանկյունից, թե՛ անհրաժեշտ բառարաններ կազմող մշակութային-կրթական միաջավայրի առումով: Ըստ այսմ 19-րդ դ. մի կողմից՝ ստեղծվում են ոչ միայն հայերենի բառապաշարն ինքնին ընդգրկող, այլև անգլերենին, ֆրանսերենին, ռուսերենին, պարսկերենին, վրացերենին, թուրքերենին առնչվող բազմաթիվ

¹¹ Ի դեպ՝ այնքան էլ ճիշտ չէ *եռալեզվյան բառարան* անվանման առաջին՝ *եռալեզվյան* բաղադրիչի գործածությունը նոր տիպի՝ երեք լեզվով բառարանների անվանման համար, որովհետև նախ՝ հայ բանասիրության մեջ *եռալեզվյան* (նաև՝ *եռալեզու*) տերմիններն արդեն «գրադեցված են», դրանք գործածվում են Դարեհ Վշտասայանի հին պարսկերեն և երկու այլ լեզվով արձանագրության անվանման դեպքում, այնուհետև՝ ժամանակակից հայերենում *երեքլեզվյան* բառը նոր կազմություն է ի տարբերություն հին կամ գրաբարյան *եռալեզու* կամ *եռալեզվյան* կազմության, ուստի տվյալ դեպքում ավելի նախընտրելի է:

բառարաններ, մյուս կողմից՝ ավելի բազմազան է դառնում նման բառարանների բովանդակությունը՝ լեզվական նյութի ծավալի տեսանկյունից:

Այս շրջանում առավել աչքի ընկնող բառարան է Գ. Ավետիքյանի, Խ. Սյուրմեյանի և Մ. Ավգերյանի «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (հհ. 1-2, Վեն., 1836-1837, երկուսը միասին՝ 2207 էջ, Առաջաբան՝ 20 էջ, երկայուն մանր շարվածք, ավելի քան 55,000 բառային միավոր¹²) աշխատությունը, որը մինչև այժմ չգերազանցված գործ է հին գրական հայերենի բառապաշարի հավաքման, ըստ ամենայնի բացատրության, բառահոդվածները բնագրային ընտրովի, սպառիչ օրինակներով հաստատագրելու, ինչպես նաև հայերեն գլխաբառը հունարենի, լատիներենի և թուրքերենի հետ հաիեմատելու տեսակյունից¹³: Սա մի լիաժավալ բառարան է, որը, ինչպես արդեն վերը նշեցինք, հիմք է հանդիսացել ոչ միայն հետագա մի շարք բառարանների ստեղծման, այլև օտար տարբեր լեզվաբանների կողմից հնդեվրոպական (ցեղակից) մյուս լեզուների հետ հայերենը համեմատելու համար:

Նշենք նաև Մ. Ջախջախյանի «Բառգիրք հայերեն և իտալերեն» (Վեն., 1837, 1534 էջ, 60,000 բառային միավոր) աշխատանքը, որը համալրված է բազմաթիվ նոր բառերով, և որոնք նշանակվում են գլխաբառի սկզբում աստղանիշով: Սա մի տեսակ թարգմանական-բացատրական բառարան է, որ չի կորցրել իր կարևորությունը նաև մեր օրերում:

Այնուհետև, արժեքավոր են Հ. Ավգերյանի կազմածները՝ «Բառարան համառօտ ի գաղղիականէ ի հայ» (Վեն., 1812, 594 էջ, 23,000 բառային միավոր), «Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական» (Վեն., 1817, 708 էջ, 35,000), «Բառարան անգլիերէն և հայերէն» («Dictionary English and Armenian», Վեն., 1821, 983 էջ, 2-րդ հրատ.՝ Վեն., 1868, 838 էջ) և «Բառարան հայերէն և անգլերէն» («Dictionary Armenian and English», Վեն., 1825, առաջաբան՝ 24, բառարան՝ 640 էջ, 35,000 բառահոդված, հայերենի իր աշակերտ լորդ Ջ. Բայրոնի մասնակցությամբ),

¹² Այս և հետալսու բառարանների բառահոդվածների քանակի վերաբերյալ տվյալները մեծ մասամբ նշում ենք ըստ Գ. Կ. Գասպարյանի աշխատության, մասամբ՝ ըստ մեր հաշվումների, կամ էլ ըստ բառարանների տիտղոսաթերթերի նշումների:

¹³ Սույն բառարանը վերջին տարիներին (1979-1981 թթ.) Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը լույս ընծայեց նմանահամոլությամբ (Ֆաքսիմիլե), ուստի գիտական որոշ (մանավանդ լեզվաբանական) աշխատանքներում հաճախ թյուրիմացաբար հղում է տրվում այդ նմանահանյալին՝ իբրև ըստ այդ տեղի և ժամանակի հրատարակություն, որն ամեննին ճիշտ չէ:

<<Բառագիրք գաղղիերենի հայ և ի տաճիկ>> (Վեն., 1840, 745 էջ, 35,000 բառային միավոր) և այլն:

<<Նոր հայկազյան բառարանի>> նյութի օգտագործմամբ ռուսական միջավայրում ստեղծվում է Ադ. Խուդաբաշյանի <<Բառարան ի հայկական լեզուի ի ռուսաց բարբառ>> (հհ. 1-2, Մոսկվա, 1838, շուրջ 35,000 բառահոդված) աշխատությունը, որն այսօր էլ անհրաժեշտ է գրաբարից ռուսերեն թարգմանության համար¹⁴:

Այսպիսով, նշենք, որ ֆրանսերենին, անգլերենին և ռուսերենին առնչվող հիշյալ բառարանները մեծ նշանակություն են ունեցել հայերի և եվրոպացիների մշակութային շփումների գործում, այլև պիտանի գրքեր են նաև մեր օրերում:

Նկատենք, որ <<Նոր բառգիրք հայկազեան լեզուի>> աշխատությունը գրեթե մշտապես հիմք է հանդիսացել 20-րդ դ. երևան եկած մի քանի նոր, ծավալուն բառարանների ստեղծման համար: Այսպես, օրինակ, Ստ. Մալխասյանցը այդ բառարանի այն մասը, որն անցել է նոր գրական հայերենին, լիովին ներառել է իր <<Հայերեն բացատրական բառարան>>-ի (հհ. 1-4, Ե., 1944-1945, 2-րդ հրատ., Անթիլիաս-Լիբանան, 1955-1956, շուրջ 120,000 բառահոդված) մեջ: Այդպես նաև Հ.Աճառյանը <<Հայերեն արմատական բառարան>>-ը (հհ. 1-7, Ե., 1927-1935, 2-րդ հրատ., հհ. 1-4, Ե., 1971-1979, պարունակում է 11, 100-ից ավելի բառեր և բառարմատներ) կազմելիս ամբողջովին քաղել է այդ բառարանի արմատական բառերը: Հիշենք նաև վերջին տարիներին լույս տեսած մի քանի բառարաններ, որոնք իրենց գերակշիռ մասով ստեղծված են այդ բառարանի հենքի վրա. օրինակ՝ Ռ. Ս. Ղազարյանի <<Գրաբարի բառարան>>-ը (Անթիլիաս-Լիբանան, 2004, 1330 էջ)¹⁵, <<Գրաբարի հոմանիշների բառարանը>>-ը (Անթիլիաս-Լիբանան, 2006, 701 էջ)¹⁶,

¹⁴ Ի դեպ՝ այդ բառարանից մեծապես օգտվել ենք ժամանակին՝ <<Տարոնի պատմության>> լեզվին և նոր շրջանի գրաբարի պատմությանը նվիրված մեր ատենախոսությունների ռուսերեն թարգմանության ժամանակ:

¹⁵ Հեղինակը նշում է հետևյալը. <<Բառարանի բառացանկի ընտրութեան համար հիմնական սկզբնաղբիւր է ծառայել դարագլուխ կազմող <<Նոր բառգիրք հայկազեան լեզուի>> հոյակապ աշխատութիւնը>>, այլև <<Հ. Աճառեանի <<Հայերեն արմատական բառարանը>>, որտեղից քաղել ենք հայ հին մատենագրութեան տարբեր երկերում վկայուած և ժամանակի ընթացքում մեծանուն հեղինակի կողմից յայտնաբերուած մի ամբողջ շարք նորագիտ բառեր, որոնք արձանագրուած չեն ՆՀԲ-ում>> (Ռ. Ղազարեան, նշվ. բառարան, էջ 5):

¹⁶ Իսկ այս դեպքում նշվում է հետևյալը. <<Հոմանիշների որոշման և ընտրութեան ամբողջ ընթացքում ուղեցոյց ենք ունեցել նշանաւոր Նոր հայկազեան բառարանը (Նոր բառգիրք հայկազեան

<<Գրաբարի դարձուածաբանական բառարանը>>-ը (Ե., 2012, 279 էջ, մեր հաշվումներով՝ 2562 դարձվածային միավոր), Լ. Խաչատրյանի <<Գրաբարի ուսումնական բացատրական բառարան>>-ը (Ե., 2013, 408 էջ, 10,000 բառ):

19-րդ դ. 1-ին կեսին և 3-րդ քառորդին հիմք է դրվում պարսկերեն-հայերեն բառարանագրությանը: Այդ բնագավառում մեծ արժեք է ներկայացնում Գ. Պալատացու <<Բառարան պարսկերեն ըստ հայերեն այբուբենի հերթականութեան>> (Կ.Պոլիս, 1816, 775 էջ, շուրջ 30,000 բառահոդված) գիրքը, որում բերվում է նաև պարսկերենի ընդարձակ քերականությունը, իսկ բառահոդվածները բացատրված և թարգմանված են գիտական անգերազանցելի մակարդակով, այլև գրքի վերջում տրվում են հայերեն բազմաթիվ բառերի (և արմատների) ստուգաբանություններ (էտիմոլոգիա), որոնք գիտական առումով մեծ մասամբ հաջողված են և հավաստի այն աստիճան, որ հետագայում հաշվի են առնված և օգտագործված, օրինակ, Հ. Հյուբշմանի՝ հայերենին նվիրված ստուգաբանական աշխատանքներում, ինչպես նաև Հ. Աճառյանի <<Հայերեն արմատական բառարան>>-ում¹⁷:

Այս նույն ժամանակամիջոցում ավելի մեծ թափ է ստանում հայ-ռուսական բառարանագրությունը: Նկատենք, որ Կդ. Սարաֆյանի և Գ. Խալդարյանի՝ վերը նշված բառարաններից հետո երևան են գալիս այնպիսի արժեքավոր աշխատանքներ, ինչպիսիք են, օրինակ, Հ. Ալամդարյանի <<Համառոտ բառարան ի ռուսաց լեզուէ ի հայերէն>> (Մոսկվա, 1821, 9000 բառահոդված), Ադ. Խուդաբաշյանի վերը նշված բառարանը, այլև Կ. Պոպովյանի <<Ռուսերէն-հայերէն համառոտ բառարանը>> (Մոսկվա, 1841, շուրջ 5,800 բառային միավոր), Գ. Երեցփոխյանի <<Բառարան ի ռուսաց լեզուէ հայերէն>> (Թիֆլիս, 1854, մոտ 45,000), Մ. Բերոյանի <<Ռուս-հայերէն-ֆրանսերէն լիակատար բառարանը>> (կազմվել է 1830-1880-ական թթ., ռուսերեն Ա տառից մինչև Паром բառահոդվածը, մոտ 3070 էջ, ամբողջական տպագրված լինելու վերաբերյալ կան ոչ վերջնական տվյալներ)¹⁸: Այսպես նաև Ռ. Պատկանյանը փորձ է

լեզուի, հտ. Ա-Բ, Վենետիկ, 1836-37), որը միաժամանակ հիմք է ծառայել բնագրային վկայութիւնների մեծագոյն մասից օգտուելիս>> (Ռ. Ղազարեան, նշվ. բառարան, էջ 3):

¹⁷ Ավելի մանրամասն տե՛ս Բ. Լ. Չուգասզյան, Պարսկերեն- հայերեն առաջին տպագիր բառարանը.- <<Տեղեկագիր>> (հասարակական գիտություններ), 1962, 12, էջ 73-93: Նույնի, Հայ-իրանական գրական առնչություններ, Երևան, 1963, էջ 169-200:

¹⁸ Տե՛ս Հ. Ա. Ղազիկեան, Յուզակ հայ մատենագրութեան և հանրագիտարան հայ կեանքի, Վենետիկ, 1909-1912, էջ 338: Գ. Կ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 185:

արել կազմելու ռուսերեն-հայերեն մի բառարան (տպագրվել է ընդամենը մեկ մամուլ՝ 16 էջ)¹⁹:

Այդ և այդ կարգի ավելի փոքր ծավալի այլ աշխատանքներ, որոնք երկլեզվյան (թարգմանական) բառարանագրության նմուշներ են, ժամանակին մեծ նշանակություն են ունեցել ռուս-հայկական լեզվամշակութային կապերի ամրապնդման և հետագա զարգացման հիմքեր դնելու գործում: 19-րդ դ. վերջին քառորդին ևս առաջընթաց ունի ոչ միայն հայ-ռուսական, այլև հայերենի և այլ լեզուների բառապաշարն ընդգրկող թարգմանական բառարանագրությունը: Այդ տարիներին են ստեղծվել մի շարք հիմնարար աշխատանքներ:

Դրանցից առաջինը հիշատակելի է Ն. Բյուզանդացու «Բառագիրք ի գաղղիերեն լեզուէ ի հայերեն» (Կ.Պոլիս, 1884, 1304 էջ, 50,000 բառահոդված և գրեթե նույնքան արտահայտություն) աշխատանքը, որը կազմվել է ֆրանսիացի բառարանագիր Է. Լիտրեի, այլև Ֆրանսիական ակադեմիայի մեծ բառարանների ընդհանուր բառապաշարը նկատի առնելով, թեև, ինչպես զիտենք, Բյուզանդացին իր բառարանի ոչ միայն հայերեն, այլև ֆրանսերեն բաժնում նորանոր բառեր է ավելացրել, որոնք «պակասում էին Է. Լիտրեի և, հատկապես, Ֆրանսիական ակադեմիայի բառարաններում: Իր ժամանակին այդ նոր բառերի մասին Բյուզանդացին հայտնել է Լիտրեին, որը սիրով ընդունել է և որոշ բառեր մուծել իր բառարանի հավելվածային բաժնում»²⁰: Այս մասին վերջին տարիներին հայտնի է դարձել ավելի հավաստի տեղեկություն, այն է՝ պատմաբան-հնագետ Խ. Հովհաննիսյանցին ուղղված նամակներից մեկում անվանի բանասեր-բառարանագիրը գրում է. «Թղթակցած եմ ընդ Littre-ի, գորոյ Յ նամակս հրատարակած եմ ի գլուխ բառարանիս. հաղորդած եմ այլևայլ ստուգաբանութիւն բառից, յորոց մեծանուն լեզուագէտն հրատարակած է ինն հատ իմ անուամբս (M. Néandre N. de Byzance, arménien) j'Additions իւր supplément-ին, Paris, 1877,

¹⁹ Տե՛ս *И. Кусикьян, Словарь Рафаэля Патканяна // "Исследования по истории культуры народов Востока", М., 1960, էջ 105-107:*

²⁰ *Գ. Կ. Գասպարյան*, նշվ. աշխ., էջ 209: Հմմտ. *Ս. Կ. Բարլեզիզյան*, Ֆրանսերեն-հայերեն բառարանագրական երեք գլուխգործոցներ // «Հայագիտություն և գուգադրական լեզվաբանություն», պրակ Ե, Երևան, «Լինգվա» հրատ., 2006, էջ 57-63:

ընդունելով զիմ կարծիս>> (ի դեպ, այդ բառերն են՝ barbiton, boucassin, caraque, carnal. cendal, chat, chebec, gulipot, occonète)²¹:

Այստեղ նշենք նաև Մ. Նուպարյանի «Բառարան ֆրանսերենից աշխարհաբար հայերեն» (Կ.Պոլիս, 1889, 2-րդ հրատ., ն. տ., 1892, 1115 էջ), Ե. Տեմիրճիպաշյանի «Բառարան ֆրանսերենից հայերեն» (Կ.Պոլիս, 1896, 942 էջ, 40,000 բառային միավոր, 2-րդ հրատ., ն.տ., 1930, 1205 էջ, 50,000 բառային միավոր). Ա.Կոյլալյանի «Բառագիրք գերմաներեն-հայերեն» (Վիեննա, 1884-1889, 1682 էջ, 120,000 բառահոդված) աշխատանքները, Կ. Յաղուբյանի «Հայերեն-ռուսերեն բառարանը» (Թիֆլիս, 1891, 228 էջ, 30,000 բառահոդված): Գործածության առումով ժամանակին լայն ճանաչում է ունեցել Մ. Գաբամաճյանի «Նոր բառգիրք հայերեն լեզուի, պատկերագար» (Կ.Պոլիս, 1892, 30,000 բառահոդված, 2-րդ հրատ., ն. տ., 1907-1910, 1412 էջ, 60,000 բառահոդված) աշխատանքը, որը պարունակում է ոչ միայն հին հայերենի, այսինքն՝ «նախնյաց լեզվի», այլև նոր գրական լեզվի և բարբառների բառամթերքի մի զգալի մասը՝ ընդհանուր բացատրություններով և ծանոթություններով:

Առավել մեծ ուշադրության է արժանի Մխիթարյան միաբանության անդամ, անվանի բանասեր-գիտնական Մ. Քաջունու մասնագիտական-հանրագիտարանային երկհատոր բառարանը, որն ունի «Բառգիրք արուեստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց» (ֆրանսերեն-հայերեն, հ. 1, Վեն., 1891, 1192 էջ, 11,000 բառահոդված, հ. 2, Վեն., 1892, 878 էջ, 14,000 բառահոդված) խորագիրը, այլև նույնը՝ համառոտ (հայերեն-ֆրանսերեն, Վեն., 1893, 258 էջ, 28, 000 բառահոդված): Նրանում գրեթե յուրաքանչյուր բառահոդված ունի գիտական պատշաճ մակարդակով բացատրություն և համարժեք թարգմանություն, որոնք շատ անգամ ուղեկցվում են համապատասխան նկարներով, գծագրերով և պատկերներով: Նկատենք, որ այդ բառարանը մինչև օրս չի կորցրել իր օգտակարությունը, գիտության տարբեր ճյուղերի մասնագետների «սեղանի գրքերից» մեկն է:

Մյուս կարևոր գործը հ. Ղ. Ալիշանի «Հայբուսակ կամ հայկական բուսաբառութիւն» (Վեն., 1895, 697 էջ) յուրատեսակ հանրագիտարանային աշխատությունն է, որում ի մի է բերված տարբեր աղբյուրներից քաղված 3400

²¹ Տե՛ս *Ռ. Մ. Ղազարյան*, Լեզվաբանական ուսումնասիրություններ, էջ 335:

հայերեն, լատիներեն, ֆրանսերեն, տաճկերեն և արաբերեն բուսանուն, և որոնք բավականին որոշակի պատկերացում են տալիս Հայկական լեռնաշխարհի այն ժամանակի բուսական աշխարհի (ֆլորայի) մասին:

19-րդ դ. վերջին քառորդի ակնառու, թերևս, առավել մեծ ուշադրության արժանի գործ է Թ. Աստվածատրյանի «Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց» (Երուսաղեմ, 1895) բառարանը, որը, ինչպես հայտնի է, կազմվել է 1860 թ. Վենետիկում տպված «Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց»-ի հիման վրա:

Բառարանի հրատարակումը հետապնդում էր թե՛ գիտական և թե՛ ուսումնական նպատակ: Որքան էլ Ա.Մեյեն թերահավատ է եղել այս հարցում (համարելով այն «արատավոր և թերի»)²², Աստվածատրյանի կազմած համաբարբառը ժամանակի բառարանագրության մեծագույն ձեռքբերումներից է, մինչև այժմ գործածելի: Միանգամայն ճիշտ է նկատված, որ «այսօր էլ այն լայնորեն օգտագործվում է տարբեր բնագավառների մասնագետների կողմից: Բազմապիսի մասնագետներ (առաջին հերթին՝ լեզվաբաններ) այդ համաբարբառի հիման վրա կատարում են գիտական զանազան ուսումնասիրություններ»²³: Մյուս կողմից՝ նշենք, որ բոլոր դեպքերում այն հիմք է հանդիսացել թե՛ նախկինում և թե՛ մեր օրերում (տեխնիկական միջոցների լավագույն պայմաններում) ստեղծել ավելի նորը, որն, իրոք, ստեղծված է²⁴:

Հայ բառարանագրությունը աննախադեպ առաջընթաց է ունենում 20-րդ դ. ընթացքում, ընդ սմին ոչ միայն տարբեր բնույթի, այլև միանգամայն տարբեր լեզուների առնչությամբ. հատկանշական ձեռքբերումներից է մասնագիտական (ճյուղային) բառարանների ստեղծումը:

Այս շրջանում լույս տեսած բառարաններից առավել ուշագրավ են մի քանիսը. օրինակ՝ Հ. Դաղբաշյանի «Լիակատար բառարան ռուսերենից հայերեն» (Թիֆլիս, 1903, 125, 000 բառային միավոր) և «Լիակատար բառարան հայերենից ռուսերեն» (Թիֆլիս, 1906, 90,000 բառային միավոր) թարգմանական-բացատրական բառարանները, որոնցում ըստ հեղինակի մատնանշման՝ նուրբ այբբենական կարգով

²² Տե՛ս Ա.Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 452-453:

²³ Գ. Կ. Թոսունյան, նշվ. աշխ., էջ 144:

²⁴ Հմմտ. Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, Ս. Էջմիածին, 2012:

ընդգրկվել է «ռուսերեն լեզուի լիակատար բառամթերքը, լիակատար բառամթերք սսելով (նա) հասկացել է ոչ միայն ռուսերեն, այլև այն բազմաթիւ բառերը, որոնք արդէն ընդունուել և գործածական են դարձել ռուսերենի մէջ»²⁵:

Նորագոյն շրջանում աչքի ընկնող բառարաններ են կազմվում նոր գրական հայերենի արևմտյան տարբերակի և մեկ այլ լեզվի (հիմնականում՝ անգլերեն, ֆրանսերեն) բառամթերքի զուգադրական-թարգմանական ամբողջացման, բացատրության և մեկնաբանման նպատակով:

Այսպէս, Գ. Լուսինյանի «Նոր բառագիրք պատկերագարդ ֆրանսահայ» (հհ. 1-2, Փարիզ, 1900, եռապուս, մեծադիր 1864 էջ, 120,000 բառահոլված, 2-րդ հրատ.՝ Կ.Պոլիս, 1909-1910, 1877 էջ) աշխատանքը, արևմտահայ միջավայրում լայն ճանաչում գտած գործ է, որը հայ միջավայրում ունեցել է մեծ նշանակություն երկու լեզուների՝ հայերենի և ֆրանսերենի ուսուցման համար: «Գ. Լուսինյանի բառարանը նախորդների համեմատությամբ ամենածավալունն է, մի հանգամանք, որ բավական էր մտավորականության ու լայն հասարակության ուշադրությունը գրավելու համար»²⁶:

Արևմտահայ միջավայրի իմացական առաջընթացի նպաստի առումով ուշադրության արժանի գործեր են նաև Հ. Չազմաճյանի «Ընդարձակ բառարան անգլերեն-հայերեն» (Բոստոն, 1922, 1424 էջ, 100,000 բառային միավոր, 2-րդ հրատ.՝ Բեյրութ, 1952 և այլն), Մ. Գոյումճյանի «Ընդարձակ բառարան հայերեն-անգլերեն» (Կահիրէ, 1950, 1158 էջ, 70,000 բառային միավոր. վերջում ունի տերմինարան) աշխատանքները, որոնք գրեթէ ամենանգամյա գործածության բառարաններ են եղել գրական և կրթական, գրահրատարակչական և այլ հաստատությունների մասնագետների, մամուլի աշխատողների համար:

Տպագրվում են նաև բազմաթիվ փոքր ծավալի, հիմնականում առձեռն կամ նորմատիվ բնույթի երկլեզվյան (հայերեն-անգլերեն, անգլերեն-հայերեն, հայերեն-ֆրանսերեն, ֆրանսերեն-հայերեն, իտալերեն-հայերեն և այլն) բառարաններ, բառգրքույկներ, որոնց բուն նպատակը եղել է բավարարել ժամանակի ուսումնական-կրթական պահանջները: Նշենք նաև, որ այս շրջանում է, որ երևան են գալիս արհեստական լեզուների (*ունիվերսալ հայերեն, էսպերանտո* և այլն), ինչպէս նաև

²⁵ Յ. Ս. Դադրաշեան, նշվ. աշխ., էջ III:

²⁶ Ա. Կ. Բարլեզիզյան, նշվ. աշխ., էջ 61:

հայերեն բարբառային բառերի բառարաններ: Նման գործերից առաջին հերթին հիշատակելի են, օրինակ, Տ. Նավասարդյանի «Բառգիրք Արարատեան բարբառի» (Թիֆլիս, 1903, 132 էջ, 3000 բառային միավոր), Ս.Ամատունու «Հայոց բառ ու բան» (Վաղարշապատ. 1912, 727 էջ, 14,000 բառային միավոր) բառարանները:

Այս ոլորտում առավել աչքի ընկնող աշխատանք է Հ.Աճառյանի «Հայերեն գաւառական բառարան»-ը (Թիֆլիս, 1913, 1168 էջ, 30,000 բառային միավոր, կից ունի հայ բարբառների բնութագրման ուրվագիծ):

1920-ական թթ. ի վեր լույս են տեսնում անհամեմատ մեծ թվով բանասիրական, թարգմանական, ուսումնական և տերմինաբանական բառարաններ, բառացանկեր և տերմինարաններ, որոնք, իրենց հերթին, ունենին հասարակական և իմացական կյանքի նոր պայմաններում գիտության և տեխնիկայի զարգացմանը, դպրոցական և բուհական կրթության գործը խթանելու նպատակ: Հրապարակ են գալիս բացատրական, ստուգաբանական, հոմանշային, դարձվածաբանական նոր, տարբեր ծավալի բառարաններ, որոնք տպագրվում են նախկինը մեծապես գերազանցող տպաքանակով, զարկ է տրվում հասարակական, բնական և տեխնիկական գիտությունների տարբեր ճյուղերի վերաբերող տերմինաբանական բառարանների ստեղծմանը:

Այս շրջանում են իրենց լավագույն բառարանները ստեղծել մեծանուն բանասեր-լեզվաբաններ Ստ. Մալխասյանցը, Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, Ա. Ղարիբյանը, Է. Աղայանը, Հ. Բարսեղյանը, Ա. Սուքիասյանը և ուրիշներ:

Այսպես, նախքան ժամանակի բառարանագրության գլուխգործոց «Հայերեն բացատրական բառարան»-ը ձեռնարկելը Մալխասյանցը հեղինակակիցների հետ կազմել էր «Ռուս-հայերեն բառարան երկաթուղային տերմինների» (Թիֆլիս, 1925, 178 էջ, 10,000 տերմինային միավոր), և հակառակը՝ «Հայ-ռուսերեն բառարան երկաթուղային տերմինների» (Թիֆլիս, 1927, 149 էջ, 10, 000 տերմինային միավոր) աշխատանքները, որոնք մեզանում, ինչպես գիտենք, ճյուղային (մասնագիտական) բառարանագրության կարևոր ձեռքբերում են, թերևս առայժմ չգերազանցված՝ այդ բնագավառը նկատի առնելով:

Իսկ «Հայերեն բացատրական բառարանի» ստեղծումը ժամանակի հայ իրականության համար բացառիկ երևույթ էր: Այն ունեցել է և շարունակում է

ունենալ կարևորություն <<թե՛ գործնական և թե՛ բանասիրական տեսակետներից>>: Բառարանի բուն <<ծրագրի>> մասին հեղինակը գրում է հետևյալը. <<Այս բառարանը պարունակելու է հայերեն լեզուով գրված ու խօսված²⁷ բոլոր բառերը մեր մատենագրության սկզբից մինչև մեր ժամանակները, այսինքն՝ բառամթերքները գրաբարի, ստորին գրաբարի, ռամկօրենի, արդի գրական լեզուի և գաւառական բարբառների՝ իրենց ոճաբանութիւններով, հին և նոր ժամանակի փոխառեալ բառերը երոպական կամ արևելեան լեզուներից, ցոյց տալով նրանց ծագումը, գրական լեզուի ու բարբառների բառերի ամեն մի նշանակութեան համար համապատասխան օրինակներ, քերականական ցուցումներ և այլն>>²⁸: Այդ բառարանը այսօր ևս, թեև կան հետազայում կազմված ավելի ծավալուն և արդիական բառարաններ, չի կորցրել իր բուն նշանակությունը, այն է՝ ընդհանուր հայերենի այն բառապաշարի ամբողջական միատեղումը, որ անհրաժեշտ էր 1930-ական թթ. իրականության (գիտության, մշակույթի, կրթության և այլն) համար²⁹:

Մեծ է Մ. Աբեղյանի ներդրումը հայերեն ճյուղային բառարանների ստեղծման, առհասարակ՝ մասնագիտական բառարանագրության մեջ: Առաջին անգամ նա է մեզանում ձեռնարկում ռազմական բառարանի ստեղծման գործը, այն էլ հայերենի և ռուսերենի զուգադրությամբ: Հայտնի է անվանի հայագետի կազմած <<Ռուս-հայերեն ռազմական բառարանը>> (Ե., 1925, 724 էջ, 17, 000 տերմինային միավոր), որի կարիքը եղել է այդ բնագավառի տերմինաբանության նորմավորման, այլև զուգահեռ գործածության առումով: Այսօր էլ, հայոց նորաստեղծ բանակի զորավարժություններում և այլ ոլորտներում գործածվում են շատ տերմիններ, որոնք ստեղծվել են Մ. Աբեղյանի կողմից և ներկայացվել հիշյալ բառարանում: Այնուհետև, Աբեղյանը հեղինակակիցների հետ գրել է <<Անատոմիական տերմիններ>> (լատիներեն-ռուսերեն-հայերեն, Ե., 1934, 112 էջ, 2700 տերմինային միավոր), <<Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարան>> (Ե., 1951, 471 էջ, 20,000 տերմինային միավոր) աշխատանքները: Դրանք ժամանակին ունեցել են լայն գործածություն, ընդ որում տվյալ ճյուղի տերմինաբանության մշակման և կարգաբերման նշանակություն,

²⁷ Մեջբերման մեջ պահվում է հեղինակային <<ուղղագրությունը>>:

²⁸ Մտ. Մալխասեանց, նշվ. բառարան, էջ Է (= 7):

²⁹ Ավելի մանրամասն տե՛ս Լ. Բ. Պետրոսյան, Մտ. Մալխասյանցի <<Հայերեն բացատրական բառարանը>> (թեկն. դիս., ձեռագիր), Երևան, 1953:

իսկ հետագայում նկատի են առնվել նույնպիսի նոր բառարանների ստեղծելիս, մասնավանդ նոր պահանջների բերումով:

Հ. Աճառյանի բառարանագրական գլուխգործոցը, ինչ խոսք, «Հայերեն արմատական բառարան» է, որն իր բնույթով և ընդգրկումով մինչև օրս մնում է չգերազանցված: Այն ներառում է Լագարդի, Հյուբշմանի հավաքած ամբողջ նյութը, իր նախորդների արածը, ավելացնում է իրենը և ստեղծում իր ժամանակի համար մի աննախադեպ բառարան: Վերջինիս մասին Է. Աղայանը բառարանի 2-րդ հրատարակության առաջաբանում գրում է նաև հետևյալը. «Իր ընդգրկած հարուստ և բազմակողմանի նյութով բառարանը հայ լեզվաբանության, մասնավորապես ստուգաբանության, և հայերենի բառաքնության բանասիրական-ձեռագրագիտական հետազոտությունների մի անսպառ գանձարան է, և անհնարին է պատկերացնել որևէ բառագիտական հետազոտություն առանց այս բառարանի պարունակած նյութերը լիովին հաշվի առնելու»³⁰: Նկատենք նաև, որ «Արմատական բառարանը», մասնավանդ եթե նկատի ենք ունենում, որպիսով հայերենի (բառ)արմատների գրեթե կեսը մնում է չստուգաբանված («անհայտ ծագման»), ժամանակակից համեմատական լեզվաբանության համար կարող է միայն հիմք հանդիսանալ նոր լուծումների, բառաքնական լրացումների և ճշգրտումների, իսկ դա արդի հայերենագիտության կարևորագույն խնդիրներից մեկն է: Վերջիններս վերաբերում են մի կողմից՝ տեսական նոր հարցադրումներին, որ բացատրվում է հնդեվրոպական լեզուների մեջ հայերենի տվյալներին առավել մեծ տեղ տալու հանգամանքով, մյուս կողմից՝ ստուգաբանական նորագույն տեխնիկայի (մեթոդիկայի) գործադրմանը (արմատի ավելի համոզիչ վերականգնում, գիտական տառադարձման լրացում, ցեղակից ավելի մեծ թվով՝ հայտնի կամ ընդունելի դարձած լեզուների տվյալների հաշվառում և այլն):

Մեծանուն հայագետը հեղինակ է նաև «Թուրքերեն փոխառեալ բառեր հայերենի մեջ (Պոլսի, Վանի, Ղարաբաղի և Նոր Նախիջևանի բարբառներում)» (Մոսկվա-Վաղարշապատ, 1902, 381 էջ, 4200 բառային միավոր), «Հայոց անձնանունների բառարան» (հհ. 1-5, Ե., 1942-1962, միասին՝ 3138 էջ), «Եւրոպական փոխառեալ բառեր հայերենի մեջ (օտար բառերը Պոլսի ժողովրդական հայերենում)»

³⁰ Է. Բ. Աղայան, Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» // Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 1971, էջ 2 (= 6):

(Վիեննա, 1951, 185 էջ, 860 բառահոդված) աշխատությունների: Անվանի լեզվաբանը այլ հեղինակների հետ կազմել է «Ռուս-հայերեն բառարան շինարարական կառուցվածքների» (Ե., 1928, 306 էջ, 7500 բառային միավոր) աշխատանքը:

1950-ական թթ. հետո բառարանագրական լայն գործունեություն է ծավալում Ա. Ղարիբյանը, որպես ոչ միայն հեղինակ կամ հեղինակակից այս կամ այն բառարանի, այլև «Հայկական համաբարբառ»-ի ստեղծման գիտական կազմակերպիչ և ղեկավար (մեկ տասնյակից ավելի հատորներ, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն): Բացառությամբ մի քանի այլ երկերի (Ավ. Իսահակյան և ուրիշներ)՝ դրանք հայ հին հեղինակների (5-րդ դ. և հետագա պատմիչներ, Գր.Նարեկացի և ուրիշներ) բնագրային համաբարբառներ են, գրեթե ամենօրյա գործածության բառարաններ հայոց լեզվի պատմության հարցերի ուսումնասիրության համար³¹:

Այսպես, Ա. Ղարիբյանի առանձին, այլև հեղինակակիցների հետ միասին տարբեր տարիների ստեղծված բառարաններից են հետևյալները. «Ուղղագրական համառոտ բառարան» (Ե., 1940, 103 էջ, 4500 բառային միավոր), «Հայերեն ուղղագրական նոր բառարան» (Ե., 1945, 185 էջ, 12,000 բառային միավոր), «Հայ-ռուսերեն բառարան» (Ե., 1947, 379 էջ, 28,000 բառային միավոր), «Դպրոցական ուղղագրական բառարան» (Ե., 1956, 215 էջ, 13,000 բառային միավոր), «Դպրոցական ուղղագրական բառարան» (Ե., 1965, 215 էջ, 17,000 բառային միավոր) և այլն: Հիշյալ բառարանները սովորաբար ունեցել են մեկից ավելի հրատարակություն, դրանք ամենից առաջ հետապնդել են կրթական-ուսումնական նպատակ:

Այնուհետև, Ա. Ղարիբյանի բառարանագրական մեծ ներդրումը «Ռուս-հայերեն բառարան» (Ե., «Հայաստան» հրատ., 1968, 3-րդ հրատ., 1982, 1436 էջ, 85,000 բառահոդված, շուրջ 100,000 «բառ և դարձվածք») գործն է, որը մինչև այժմ մնում է անգերազանցելի, իսկ իր ընդգրկմամբ՝ բացառիկ: Հեղինակը ռուսերեն համարժեքի հայերեն թարգմանության ընթացքում հանդես է բերել բառաստեղծի բավականին ինքնատիպ մոտեցում՝ ստեղծելով նոր բառեր, որոնք հիմնականում պատճենումներ են կամ դիպվածային կազմություններ³²:

³¹ Ավելի մանրամասն տե՛ս Գ. Գ. Թոսունյան, նշվ. աշխ.:

³² Տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Արարատ Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարան»-ում գործածված հեղինակային նորաբանությունների մասին //«Հայագիտական հանդես» (Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական համալսարան)(13), Երևան, 2010, էջ 31-39: Այս բառարանին անդրադառնալու ենք նաև առանձին՝ մեկ այլ աշխատանքում:

Այս բառարանին, տիպային առումով, հաջորդել է Ա. Հ. Սեկոյանի «Ռուս-հայերեն ուսումնական բառարան»-ը (Ե., «Լույս» հրատ. 1978, 338 էջ, 14,300 բառային միավոր)՝ նախատեսված «հայկական դպրոցների աշակերտների, ինչպես և բուհերի հայկական բաժինների ռուսաց լեզու սովորող ուսանողների համար»³³ : Բառարանի վերջում (էջ 339-359), իբրև հավելված, կա «դարձվածքային արտահայտությունների» երկլեզվյան բառացանկ:

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հեղինակային խումբը (Ե. Տեր-Մինասյան, Ս. Գևորգյան, Վ. Փոթեյան, Հ. Համբարձումյան, Հ. Կուսիկյան) 1950-ական թթ. ձեռնամուխ է լինում մի կարևոր աշխատանքի, որն իրավամբ համարվում է լուրջ ձեռքբերում հայերեն-ռուսերեն բառարանագրության բնագավառում: Նկատի ունենք «Ռուս-հայերեն բառարանը» (հհ. 1-4, Ե, 1954-1958, ընդհանուր ծավալը՝ 2578 էջ, շուրջ 90, 000 բառային միավոր): Այն ունեցել է լայն գործածություն՝ ոչ միայն առհասարակ, այլև մեկ լեզվից մյուս լեզու թարգմանության համար: Այդ բառարանի արժանիքներին և ինչ-ինչ թերացումների անդրադարձել են այն իր ամբողջության մեջ գնահատող մասնագետները, որը հիմնականում տեղին է³⁴: Եվ ամենևին չի բացառվում այն, որ այդ բառարանը հետագայում ավելի ընդարձակ բառարան ստեղծելու նախօրինակ է եղե գուգակցվող լեզուների հետագա զարգացմանը, մանավանդ բառապաշարի հարստացմանն առնչվող:

Իսկ 1960-ական թթ. նույն ինստիտուտի հեղինակային մեկ այլ խումբ (Վ. Առաքելյան, Գ. Գասպարյան, Հ. Կոստանյան, Ա. Հակոբյան, Ս. Ղազարյան, Ա. Մուրվալյան, Ն. Պառնասյան, Լ. Պետրոսյան, Ա. Սուքիասյան, Խ. Վեմյան, Ե. Տեր-Մինասյան, Թ. Չիլինգարյան, Վ. Փոթեյան, Ա. Քոչոյան) ձեռնամուխ է լինում մեկ այլ տիպի և ավելի մեծ ծավալի բառարանի ստեղծման գործին, և տարիներ անց տպագրվում է «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» (հհ. 1-4. 1969-1980, երկայուն շարվածք՝ 2720 էջ) վերնագրով: Բառարանը պարունակում է նոր գրական հայերենի երկու՝ արևելահայ և արևմտահայ տարբերակների «բառապաշարն ու դարձվածքները», և ինչպես «Առաջաբան»-ում է նշվում, «Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» համեմատությամբ այստեղ ավելացված են տասնյակ հազարավոր բառեր ու իմաստներ, որոնք կամ ժամանակին

³³ Ա. Հ. Սեկոյան, նշվ. բառարան, էջ 8:

³⁴ Տե՛ս Գ. Կ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 470-478:

տեղ չեն գտել այդ բառարանում, կամ հանդես են եկել նրա հրատարակումից հետո»³⁵: Բառարանն, իրոք, ունի լայն ընդգրկում, նրանում <<բառեր և դարձվածքներ>>, այլև <<իմաստներ>> են քաղված 1930-40-ական թթ. ստեղծված մեծ մասամբ՝ գեղարվեստական, մասամբ՝ այլ կարգի (գիտական, մշակութային և այլն) գրականությունից: Այսպես, օրինակ, բառարանում բերվում են բառեր, որոնք կիրառված են միայն Ա. Բակունցի երկերում (հմմտ. *ախորժ*, *աղբաջուր*, *աղջկատես*, *անգրաղ*, *անձրևախառն*, *ատամնաձև*, *ինքնատուրք* <<իր անձի տուրք՝ գլխահարկ>>, *բացուտ* <<բացատ>>, *գեղանիստ*, *դիրքապահ*, *եսանալ* <<ուշանալ, հետ ընկնել>>, *ծոմոատել*, *կեծանալ*, *կից անել* <<կես անել, կիսել>>, *կոճակավոր*, *կրնկակոխ անել* <<տրորել>>, *հազարբերան*, *համախոսական* <<ընդհանուր կարգադրություն՝ հրահանգ>>, *հողաչափ* <<հող չափագրող (անձ)>>, *ճենճերահոտ*, *մաշկահոտ*, *շաղաթաթախ*, *շար ընկնել* <<շարվել, շարք կազմել>>, *ոսպատեղ*, *ջրաքար*, *սառցահամ*, *տավարատեր*, *քարանձավարնակ*, *քարափոր* <<քարի մեջ փորած>>, *քոլք* և այլն):

Այնուամենայնիվ այս բառարանը ևս չունի այն ընդգրկումը, որպիսին է նոր ժամանակների գրական հայերենը՝ գործառական տարբեր ոճերի մեջ ներառվող գրավոր հուշարձաններով, և պատահական չէ, որ բառարանի հրապարակմանը ժամանակի առումով գրեթե զուգընթաց երևան եկավ Է. Աղայանի կազմած բառարանը, որը բառաքանակի առումով ավելի ընդգրկուն է:

Այնուհետև, բառարանը իր աղբյուրների ցանկում նշվող գրքերից ոչ միշտ է ըստ ամենայնի <<բառեր, դարձվածքներ և իմաստներ>> քաղել:

Այսպես, Ա. Շիրվանզադեի պատմվածքներում հանդիպում են բառեր, որոնք չկան այդ բառարանի մեջ (հմմտ. *բոցախառն*, *բոցաշտարակ*, *խիտաբույս*, *հակախոսություն*, *կշտակեր* <<կուշտ կերած>>, *հողափոշի*, *նավթագործարան*, *նավթաթաթախ*, *նավթակաթսա* և այլն), չկան նաև Ա. Բակունցի երկերում գործածված որոշ բառեր (հմմտ. *առաջնակ* <<առաջնեկ>>, *գրենաղիք* <<մի զբաղմունքի տեր>>, *թաղնել* <<թաղկել, շոգից կուչ գալ>>, *շույ* <<զգեստի ինչ-որ մաս>>, *վարկայություն*, *ցեխապատ* <<ցեխի պատ>> և այլն):

³⁵ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1969, էջ V:

Վերը նշեցինք, որ այդ բառարանին գրեթե զուգընթաց լույս է տեսնում Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ը (Ե., 1976, 1616 էջ, 135.000 բառ և 11, 000 դարձվածաբանական միավոր), որը նոր գրական հայերենի բացատրական բառարանների պարունակած բառահոդվածների քանակի առումով մեզանում առայժմ ամենաճավալունն է, բնորոշվում է բառարանային միավորների ստույգ և հստակ բացատրություններով³⁶: Բոլորովին վերջերս տպագրվեց բառարանի համառոտ տարբերակը՝ «Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան» (Ե., 2014, 1328 էջ) վերտառությամբ³⁷:

1970-ական թթ. լույս են տեսնում հայոց լեզվի բառապաշարի տարբեր բաղադրիչներին (տերմիններ և տերմինային անվանումներ, հոմանիշներ, հականիշներ և համանուններ, դարձվածային միավորներ և այլն), ուղղագրությանը և ուղղախոսությանը վերաբերող աշխատանքներ, որոնք ունենում են որոշակի կարևորություն հայերենի իմաստային (բովանդակության պլանի) ծավալվածության պատկերացման, ինչպես նաև գրական կանոնավորման, բառի կամ իմաստի ճիշտ գործածության համար: Օրինակ՝ Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարան»-ը (Ե., 1967, 685 էջ, 83,000 բառ և դարձվածաբանական միավոր), այլև վերջինիս համալրված, բացատրական բառարանի սկզբունքով ներկայացված «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»-ը (Ե., 2002), Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան»-ը (Ե., 1973), Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան»-ը (Ե., 1975), Հ. Պետրոսյանի «Հայերենագիտական բառարան»-ը (Ե., 1987, 686 էջ), Հ. Պետրոսյանի, Թ. Ղարազյուլյանի, Ս. Գալստյանի «Լեզվաբանական բառարան»-ը (Ե., 1975, 320 էջ), Ե. Գևորգյանի «Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան»-ը (Ե., 2003), Տ. Մ. Ավետիսյանի «Հայոց ազգանունների բառարան»-ը (Ե., 2000, 2-րդ լրացված հրատ., 2010, երկայուն 404 էջ), Բ. Հովակիմյանի «Հայոց ծածկանունների բառարան»-ը (Ե., 2005) և այլն:

³⁶ Բառարանը լույս է տեսել մեկ հատորով (երկու գրքով, երկրորդն ունի «շարունակություն» նշումը), և գիտական գրականության մեջ երբեմն նշվում է իբրև երկու հատորով լույս տեսած, որն անիրական է:

³⁷ Այս բառարանին (բուն և համառոտված) անդրադառնալու ենք առանձին՝ մեր հետագա աշխատանքում:

Իր տեսակի մեջ յուրօրինակ է Բ. Ղազարյանի «Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան»-ը (Ե., 1982, 7860 էջ, մոտավորապես 36, 200 բառ): Սա ընտրանքային նյութի հիման վրա կազմված բառարան է, որն ըստ այդմ հնարավորություն է ընձեռում գաղափար ունենալու ժամանակակից հայերենի բառային միավորների գործածության տեմպերի մասին:

Յուրօրինակ է նաև «կոլեկտիվ աշխատանքի արդյունք» հանդիսացող «Հայոց լեզվի հանգաբառարան»-ը (կազմողներ և մասնակիցներ՝ Ռ. Ավետիսյան, Ս. Բաղդասարյան, Վ. Գասպարյան, Վ. Գրիգորյան, Ս. Մխիթարյան, Ա. Պետրոսյան, Պ. Պողոսյան, Օ. Ջավախյան, Գ. Ջահուկյան) (Ե., 1976, 626 էջ, շուրջ 42, 000 բառ), որին կից (վերջում) բերվում են երկու կարգի «հարացույցներ»՝ ներկայացնելով (հեղինակների հորջորջմամբ) «անվանական ձևակազմություն» (174 ձևակազմիչներով, էջ 628-654) և «բայական ձևակազմություն» (23 ձևակազմիչներով՝ աղյուսակի վրա) հանդիսացող իրակությունների բաշխվածությունը: Կարելի է կարծել, որ նման բառարանի առկայությունը նպաստում է բառերի բառակազմական և ձևակազմական ինչ-ինչ նրբությունների համատեղ վերհանմանն ու ճանաչմանը:

Բացի Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի՝ վերը նշած բառարանից արդի հայերենի դարձվածային միավորների բառարանային մշակմանն են վերաբերում (համեմատաբար ծավալուն) ևս երկուսը. նկատի ունենք Խ. Գ. Բաղիկյանի «Ուսումնական դարձվածային բառարան»-ը (Ե., 2012) և Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածաբանական բացատրական բառարան»-ը (Ե., 2011, 1404 էջ, 25,310 դարձվածքներ) աշխատանքները: Այդ բառարանների ընդգրկումը, բացատրությունների մանրամասնությունը վկայում են նոր գրական հայերենի բառապաշարի իմաստային և գործառական հարստության մասին:

Միջին գրական հայերենի կառուցվածքի, բառապաշարի գիտական (հատկապես բառարանային) ուսումնասիրությունը լայն ուշադրության առարկա է եղել վերջին տասնամյակներին. նկատի ունենք համապատասխան բառարանների ստեղծումը: Հայոց լեզվի միջին շրջանի բառապաշարն ի մի է բերված Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան» (հհ. 1-2, Ե., 1987-1991, միասին՝ 892 էջ, 2-րդ բարեփոխված հրատ.՝ մեկ հատորով, Ե., 2009, 836 էջ) գրքում:

Լույս են տեսել գրաքարի բառապաշարին վերաբերող այնպիսի բառարաններ, որոնցում հաշվի են առնված գրական նաև նոր հուշարձանների տվյալները. Ռ. Ղազարյան, «Գրաքարի բառարան» (հհ. 1-2, Ե., 2000, 2-րդ հրատ., Անթիլիաս-Լիբանան, 2004, 1330 էջ), Ռ. Ղազարյան «Գրաքարի հոմանիշների բառարան» (Ե., 2006, 2-րդ հրատ., Անթիլիաս-Լիբանան, 2006, 701 էջ), Ռ. Ղազարյան, «Գրաքարի դարձվածաբանական բառարան» (Ե., 2012, 279 էջ, 2562 բառարանային միավոր), Լ. Հովհաննիսյան, «Գրաքարի բառարան. նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր» (Ե., 2010, 293 էջ), Լ. Խաչատրյան, «Գրաքարի ուսումնական բառարան» (Ե., 2013, 408 էջ 10, 000 բառ) և այլն:

Հայերենի բառապաշարի պատմության տեսանկյունից ուշադրության են արժանի նաև այն աշխատանքները, որոնք, նվիրված լինելով հին կամ միջին շրջանի մատենագիրների, եկեղեցական գործիչների երկերի լեզվական ուսումնասիրությանը, այլև թարգմանությանը, առանձին դեպքերում դրանցում կա՛մ ուղղակիորեն, կա՛մ հավելվածի ձևով ներկայացվում են բազմաթիվ բառեր և բառիմաստային նոր կիրառություններ, որոնք անհրաժեշտ են հայերենի ընդհանուր պատմական բառարանի ստեղծման համար³⁸: Ավելացնենք նաև, որ համակարգչային և թվայնացման ձևով հրապարակվել են հին, այլև նորահայտ գրավոր աղբյուրների քննական բնագրերը, որոնց բառապաշարի ամբողջացումը դառնում է հայ բառարանագրության արդիական խնդիրներից մեկը:

Ցեղակից լեզուների և հայերենի ուսումնասիրության բնագավառում իր կարևոր տեղն ունի Գ. Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարան»-ը (Ե., 2010, 819 էջ), որը լույս է տեսել հետմահու, կազմվել է հեղինակի քարտարանի հիման վրա³⁹:

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժինը տարիներ շարունակ (1970-80-ական թթ.) ձեռնամուխ էր եղել հայերենի բարբառների քարտագրական հավաքման, տվյալ դեպքում բառարանագրման մի հսկայածավալ աշխատանքի, որն իրագործողները (Ա. Գրիգորյան, Թ. Չիլինգարյան, Ա. Հակոբյան, Հ. Կոստանյան, Գ. Գասպարյան և այլք) այդպես էլ հրապարակված չտեսան տարիների

³⁸ Դրանք բավականին մեծ թիվ են կազմում, ուստի այստեղ չենք նշում, մանավանդ որ բառարաններ չեն, այլ գիտական այս կամ այն աշխատությանը կից հավելվածային բառացանկեր:

³⁹ Ավելի մանրամասն տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Գ. Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարանի» մասին.- «Ջահուկյանական ընթերցումներ: Միջազգային գիտաժողովի զեկուցումներ (Երևան, 2014., հունիսի 11-12)», Երևան, 2014, էջ 257-262:

իրենց անխոնջ աշխատանքի արդյունք ձեռագիր ծավալուն բառարանը, որը Ս. Ամատունու «Հայոց բառ ու բան» (Վաղարշապատ, 1912), Հ.Աճառյանի «Հայերեն գաւառական բառարան» (Թիֆլիս, 1913) աշխատանքներից հետո նոր, ավելի ամբողջական աշխատանք է այդ բնագավառում և այժմ է ընկնում ոչ միայն իր ծավալով, այլև բառարանագիտական մշակման սկզբունքներով: Միայն տարիներ հետո հնարավոր եղավ լույս ընծայել այն՝ «Հայոց լեզվի բարբառային բառարան» վերնագրով (հհ. 1-7, Ե., 2001-2012, երկայուն, ամբողջը միասին 2768 էջ): Հատորների անոտացիայի մեջ ամեն անգամ նշվում է, որ «բառարանն ամփոփում է ավելի քան 100,000 բարբառային բառեր, դարձվածքներ, կայուն բառակապակցություններ ու ոճական արտահայտություններ, որոնք քաղված են մոտ 200 գրավոր աղբյուրներից և ընդգրկում է 220 բարբառներ ու խոսվածքներ»:

Նույնպիսի աշխատանք է Ա.Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարան»-ը (Ե., 2013, երեքսյուն մանր շարվածք, 846 էջ), որ մնայուն աշխատանք է, որովհետև գիտական ինքնօրինակ սկզբունքներով և բանիմացությամբ ներկայացված է Արցախ աշխարհի լեզվական-բարբառային ողջ հարստությունը. բառարանն ունի ծավալուն «Ներածություն» (երկայուն 23 էջ), որում սեղմ և գրեթե սպառիչ ներկայացվում է բարբառի հնչյունական, բառապաշարային, դարձվածային, իմաստային յուրահատկությունները, որոնք բառարանն օգտագործելիս շատ կարևոր են, այլև բերվում են օգտագործված աղբյուրների և տեսական-գիտական գրականության համապարփակ ցանկեր:

Հանրագիտարանային մեծ արժեք է ներկայացնում Թ. Հակոբյանի, Ստ. Մելիք-Բախշյանի, Հ. Բարսեղյանի «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ը (հհ. 1-5, Ե., 1976-2004):

Իսկ բոլորովին վերջերս լույս տեսած աշխատանքներից ուշագրավ է Ռ. Գորգաձեի «Հայերեն-վրացերեն բառարան»-ը (Ե., 2004), այլև «Վրացերեն-հայերեն բառարան»-ը (Ե., 2005, որոնք նորություն են հայերենի և վրացերենի բառապաշարի ոչ միայն ընդհանուր զուգադրության, այլև բառակազմական-իմաստաբանական տիպաբանության համար:

Նոր գրական հայերենի և ժամանակակից օտար լեզուների դպրոցական և բուհական կրթության ոլորտում կարևոր ձեռքբերումներ են հետևյալ աշխատանքները. Հ. Ասմանգուլյանի և Մ. Հովհաննիսյանի խմբագրությամբ

<<Անգլերեն-հայերեն բառարան>> (Ե., 1991, 30,000 բառ, 1144 էջ), Գ. Մ. Անդրեասյան, <<Գերմաներեն-հայերեն բառարան>> (Ե., 1976, 904 էջ, 40,000 բառ), Ա. Կ. Բարլեզիզյան, <<Հայերեն-ֆրանսերեն բառարան>> (Ե., 2009, 40,000 բառահոդված, 30,000 դարձվածային միավոր և արտահայտություն, 972 էջ), Ն. Բարաթյանի <<Հայերեն-անգլերեն բառարան>> (Ե., 2002, 592 էջ, շուրջ 50,000 բառ և բառակապակցություն), այլև <<Անգլերեն-հայերեն բառարան>> (Ե., 2011, 951 էջ, շուրջ 70,000 բառ և բառակապակցություն) և այլն:

Արդի հայերենի գրական երկու տարբերակների բառապաշարի նորակազմ բառերը, նոր իմաստային կիրառությունները, իբրև ընդհանուր համալրում, չեն վրիպել մեր օրերի բառարանագիր ուսումնասիրողների ուշադրությունից: Վերջին տասնամյակների գրական մամուլի էջերից, անվանի հեղինակների երկերից քաղվել և կազմվել են կա՛մ ընդհանուր, կա՛մ հեղինակային լեզվի նորաբանությունների բառարաններ: Այսպես հայտնի են Հ. Հ. Մեսրոպյանի <<Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսի երկերի բառարան (Նոր բառեր և իմաստներ)>> (Մոնրեալ, 2000, 318 էջ, շուրջ 1700 բառ), Ս.Ա. Էլոյանի <<Արդի հայերենի նորաբանությունների բառարան (նոր բառեր, իմաստներ, դարձվածքներ, բառակապակցություններ, արտահայտություններ, հապավումներ)>> (Ե., 2002, 492 էջ, 7715 բառ, բառակապակցություն և դարձված) և Փ. Գ. Մեյթիխանյանի <<Նոր բառերի բացատրական բառարան>> (Ե., 1996, 210 էջ, 3,000 բառ) աշխատանքները⁴⁰:

Հայ բառարանագրության ներկայիս փուլում անհամեմատ մեծ ծավալ ստացավ, այսպես կոչված, ճյուղային (մասնագիտական), ընդ որում ինքնուրույն և թարգմանական բնույթի բառարանների ստեղծումը՝ բնական և հասարակական գիտությունների, գրականության և արվեստի տարբեր ճյուղերի (նույնիսկ մասնագիտությունների) վերաբերյալ: Նշենք, օրինակ, Ա. Սիմոնյանի և Ի. Բատիկյանի <<Անգլերեն-ռուսերեն-հայերեն կենսաբանական բառարան>>-ը (Ե., 2011, 1016, ավելի քան 80,000 տերմին), որը ծավալուն և համապարփակ մասնագիտական տերմինների և տերմինային անվանումների շտեմարան է: Նյութի մանրամասն և ընդգրկուն մշակման առումով բավականին հաջողված են նաև Հ.

⁴⁰ Նախավերջինի մասին ավելի մանրամասն տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Սեդա Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան (Երևան, <<Նաիրի>> հրատ., 2002, 492 էջ) // <<Պատմաբանասիրական հանդես>>, 2003, 1, էջ 292-294:

Ղազարյանի «Մարմնի մասերի անվանումներով հայերեն-ռուսերեն-անգլերեն դարձվածքների բառարան» (Ե., 2010, 576 էջ) և այլն:

Հայ բառարանների ցանկը լրացնում են հանրագիտարանները, որոնք ստեղծվել են թե՛ անցյալում, թե՛ մանավանդ մեր օրերում: Նման բառարանների սկիզբը, ինչպես նշել ենք, Արսեն Դպրի բառարանն է (Կ.Պոլիս, 1749), որին հետագայում հաջորդում են տարբեր բնույթի և ծավալի նույնպիսի աշխատանքներ, ընդ որում ոչ միայն մեկ հատորով, այլև բազմահատորյակով, որոնց անդրադառնալը տվյալ դեպքում դուրս է մեր բուն նպատակից:

Արդի հայագիտության առաջընթացի նոր, ինքնակա պայմաններում մեծ թափ է ստացել նաև հայ բառարանագրությունը, որի հիմնական ուղղություններից մեկն է ճյուղային, մասնավորապես թարգմանական և մասնագիտական բառարանների ստեղծումը: Այս բնագավառում կան հսկայական ձեռքբերումներ, կան նաև անելիքներ:

Հայերենի բառապաշարի, հատկապես վերջին տասնամյակներին իրագործվող համակարգչային գրանցումը, ինչ-որ չափով գալիս է լրացնելու տպագիր («թղթային») բառարանագրության գործը: Այն թեև տեխնիկապես ավելի ինտենսիվ է, սակայն իմացական (ճանաչողական), առավել ևս կիրառության (բառարանի օգտագործման) առումով, թերևս, չունի առավելություններ: Այդուհանդերձ, բառարանագրության այս նոր եղանակը ևս անհրաժեշտ է և ընդունելի նոր բառարաններ ստեղծելու համար:

ՕՏՈՒՆԻ «ՀԱՅԵՐԵՆ-ԼԱՏԻՆԵՐԵՆ ԲԱՌԱՑԱՆԿԸ»

Այս բառացանկն ունի բացառիկ կարևորություն հայոց լեզվի պատմության համար: Այստեղ ներկայացնում ենք բառացանկի սեղմ վերլուծությունը՝ նպատակ ունենալով հետագայում ավելի մանրամասն քննել այն:

Հայագիտության մեջ ընդունված է հայ-հռոմեական (լատինական) մշակութային առնչությունները բաժանել երկուսի՝ հայ-հռոմեական (մ.թ.ա. 66 - մ.թ. 423 թթ.) և հայ-լատինական (14 - 18-րդ դդ.)⁴¹: Նման բաժանումը ինչ-որ չափով պայմանական է, հիմնված է այն իրական հիմքի վրա, որ այդ ժամանակներում, իրոք, եղել են հայերի և հռոմեացիների (կամ հռոմեական-եկեղեցական քարոզչության) միջև անմիջական ռազմաքաղաքական, մշակութային (հիմնականում՝ եկեղեցական) առնչություններ: Դա չի բացառում այն հանգամանքը, որ այլ ժամանակներում ևս եղած լինեն առանձին, այլև առանձին շփումներ հայերի և հռոմեացիների միջև (առևտուր, ուխտագնացություն և այլն): Այդպիսիք, թերևս, մշտապես եղել է, սակայն պետք է շեշտել, որ դրանք չեն կրել այնքան սերտ և անմիջական (իրավապես ճանաչելի) բնույթ, որքան նշված երկու կարգի առնչությունները:

Համեմատաբար վերջին տարիներին լույս են տեսել այնպիսի աշխատանքներ, որոնցում այդ առնչությունները նշվում են ավելի վաղ ժամանակների համար (XI դ., նույնիսկ՝ X դ.)⁴²:

Ըստ այսմ ուշագրավ է Օտունի երկլեզվյան բառացանկը (IX դ. վերջ - X դ. սկիզբ), որին նվիրվել են տարբեր բնույթի, հատկապես բնագրագիտական (տեքստաբանական) և լեզվաբանական մի շարք աշխատանքներ, և դրանք, անշուշտ, այդ բառացանկի կարևորության վկայություն են: Սակայն կան դեռևս սպառիչ լուծում չստացած հարցեր, մանավանդ հայերենի ընդհանուր պատմության, մասնավորապես հնչյունաբանության առումով:

Բառացանկի «լեզուն», որքան կարելի է դատել հայերեն բառերի տառադարձությունից, մի կողմից՝ արտացոլում է ժամանակի արտասանությունը

⁴¹ Տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Հայերը և հռոմեացիներ. լեզվական շփումներ // «Երկիր» (օրաթերթ), 13-ը նոյեմբերի, 1991: Նույնի, Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.), Երևան, 2010:

⁴² Հմմտ. Մ. Դեղեյան, Հայ վանականները և ուխտավորները Արևմտյան Եվրոպայում X դարի վերջում և XI դարի սկզբում // «Պատմա-բանասիրական հանդես», 1984, 3, էջ 21-36:

(անկախ տառադարձողի՝ հայերենի իմացության մակարդակից), մյուս կողմից՝ տառադարձական տարբերությունները հնչյունական <<շեղումներ>> են, թեկուզ ժամանակի գրական լեզվից (գրաբարից), մի տեսակ ներկայացնելովում են բանավոր խոսքի (եթե ոչ՝ որևէ բարբառի) լեզվական վիճակը:

Նման տարբերությունների (<<շեղումների>>) հարցը գրեթե միշտ եղել է հայերենագիտության ուշադրության սահմաններում:

Այսպես, Ա. Մեյեն, այցելելով Էջմիածին, տեղում ուսումնասիրում է Աստվածաշնչի (հատկապես՝ Ավետարանների) և ուրիշ հին ձեռագրերի (Ագաթանգեղոս, Եզնիկ, Եղիշե և այլն) գրչագրերը և հանգում ուշագրավ մտքի՝ կապված հայերենի հնչույթային, մասամբ նաև քերականական տարբերությունների հետ, որոնք, ինչ խոսք, ժամանակին նորություն են եղել հայոց լեզվի պատմության և համեմատական ուսումնասիրության տեսանկյունից: Օրինակ՝ Աստվածաշնչի մի գրչագիր-ձեռագրում (№ 102) Մեյեն, ի թիվս այլ երկակի տարբերությունների քննարկման, *h > hu* շփոթի մասին գրում է հետևյալը. <<Ճիշտ է, որ *սիրեցես* կանոնավոր տիպն անգամ որոշ ձեռագրերում փոխարինվել է *սիրեցես*-ով. և հատկապես Էջմիածնի 102 ձեռագիրը, որը 971-981 թթ. միևնույն գրչի կողմից արտագրված զանազան բնագրերի ժողովածու է, այդ մասին բազմաթիվ օրինակներ է տալիս, ինչպես կարելի է տեսնել ձեռագրի հատվածների հիանալի հրատարակությունից, որ լույս է ընծայել այր. Գալուստ Տեր-Մկրտչյանը (Արարատ, 1902, էջ 368 և հջ., 1903, էջ 937 և հջ.): Բայց այս ձեռագրի գրիչն ուժեղ կերպով կրել է բարբառի ազդեցությունը. այսպես, օրինակ՝ նա անկարող է տարբերակել *h*-ով և *hu*-ով ներկայացված հնչույթները և շարունակ միմյանց հետ շփոթում է այդ տառանշանները>>⁴³: Նկատենք, որ մեզ հետաքրքրող նյութի ժամանակի համար նման դիտարկումը միակը չէ, ոչ էլ հետագայում է պակասում դրանց վերաբերյալ եղած քննարկումը: Ուստի գրչագրական կամ ուղղակիորեն տեղ գտած ոչ կանոնական ձևերի օրինակները կողմնակիորեն օգնում են հիշյալ բառացանկին ավելի մանրամասն անդրադառնալու գործին: Մենք ունենք այս դեպքում որոշ կողմնակի տվյալներ:

⁴³ Ա. Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 462:

Ուստի նախքան բառացանկին վերաբերող մեր դիտարկումներին անցնելը հարկ ենք համարում սեղմ անդրադառնալ հայ-լատինական բառարանագրական այն աշխատանքներին, որոնք երևան են գալիս 14-րդ դ. հետո, առավել ևս 17- րդ դ., 18-րդ դ. 10-20-ական թթ., երբ լույս են տեսնում ոչ միայն սովորական, այլև բավականին սովոր ծավալով բառարաններ, որոնք, գրված լինելով ժամանակի գրաբար հայերենով, պարունակում են նաև խոսակցական կամ բարբառային հնչյունական, բառային և այլ կարգի երևույթների գործածության: Նման անդրադարձը ինչ-որ չափով օգնելու է ավելի իրական մոտենալու 10-րդ դ. ավանդված բառացանկին:

Բերենք դրանցից մի քանիսը՝ ըստ հնարավորին հակիրճ վերլուծությամբ:

1. Հայտնի է Հանս Շիլբերգերի (XV դ.) գրքում տեղ գտած 14-15-րդ դդ. թվագրվող հայերեն մի բնագիր (տեքստ)՝ «Հայր մերը» լատինագիր տառադարձությամբ, որում նկատելի են բարբառային (խոսակցական), հեղինակի՝ հայերենին ոչ լիովին կամ ամենին չտիրապետելու մասին վկայող տարբերություններ (սխալներ, զուգաձևություններ և այլն)⁴⁴.

Har (=հար) myer (=մյեր)⁴⁵

Har (=հար) myer (= մյեր) ur (= ուր), ergink (= երգինկ); es (= էս) surp (= սուրպ) eytza (= էյցա), annun (= աննուն) chu (= քու) ka (= կա) archawun (= արքաուն) chu (= քու); jegetzy (= յեգեցը) kam (= կամ) chu [տարբ.՝ thu] (= քու/թու), [worpes (= վորպես)] hyerginckch [=հըրեոգինկք (?)], yep (= յեպ) ergory (= երգորը); [es (= էս)] hatz (=հաց) meyr (=մյր) anhabas (=անհաբաս) tur (=տուր) myes (= մըես) eisor (= էիսոր); yep (= յեպ) theug [տարբ.՝ cheug] (= թեուգ // քեուգ) myes (= մըես) perdanatz (= պերդանաց) hentz (=հենց) myengkh [տարբ.՝ myenglich] [=միենգք // միենգլիք (?)], theugunch (=թեուգունք), meyrokch (=մյրոկք) perdabanatz (=պերդաբանաց); yep (= յեպ) my (= մի) theug (= տեուգ) myes (=մըես) y (= ի) phurtzuthiun [տարբ.՝ phwerczuchin // phwetzuchin] [=փուրցուփիուն/ փւերցուփին// փւեցուփին (?)]; haba (=հաբա), prige [տարբ.՝ bryge] (=պրիգե // բրյգե) myes (= մըես) y (= ի) tzscharen [տարբ.՝ czscheren // tzscheren (= ցչարեն // ծչերեն // ցչերեն (?))]. Amen (=Ամեն):

⁴⁴ Տե՛ս *H. Schilberger*, Reisebuch, Tübingen, 1885, էջ 117:

⁴⁵ Փոքր փակագծերում դնում ենք լատինագիր ձևերի հայերենը՝ նույնությամբ, պահելով նաև կետադրությունը: Ընդհանուր գրական հայերենից նկատվող բացահայտ շեղումներին այստեղ չենք անդրադառնում թողնելով այն մեկ այլ առիթի:

2. Ֆրանցիսկոս Ռիվոլայի երկլեզվյան <<Բառգիրք հայոց. Dictionarium armeno-latinum>> [Mediolani, MDCXXI (=1621), 479 p.]:

Բառարանն ունի միասյուն շարվածք, լատիներենով շարադրված առաջաբան (<<Linguarum studiosis operis auctor>>), յուրաքանչյուր գրով (տառով) սկսվող բառահոդվածները միատեսակ վերնագրված են՝ <<Littera Ա>>, <<Littera Բ>> և այլն:

Բառարանի բնագրային-լեզվական քննությունը կարևոր է մի քանի առումով. ա) օտար բառերի տառադարձման հիման վրա պարզել ժամանակի հայերենի արտասանությունը, բ) վեր հանել բառապաշարի հնարավոր նորաբանությունները (պայմանավորված հատկապես պատճենմամբ), գ) քննարկել բառապաշարի շերտերը՝ իբրև ժամանակի մտածողության արտահայտություն, դ) ըստ հնարավորին գաղափար կազմել բարբառային դրվածքի վերաբերյալ, ղ) բացահայտել թարգմանության որակական կողմը և այլն:

Բերենք, իբրև օրինակ, հետևյալ համեմատելի միավորները. *աբագուք* - Abacuch⁴⁶, *աբդիայ* - Abdias, *աբեթ* - Japheth, *աբեթածինք* - Progenesis Japheth, *աբեդայ* - Cœnobita, monachus, *աբեդանալ* - Cœnobarum ordini adscribi, *աբեդենց* - Cella, cœnobite, domonicilium, *աբեդուրին* - Vita cœnobitica, *աբեներ* - Abner, *աբիաթար*, *ադիութ* - Abiud, *աբիսողոմ* - Absalin, *աբիրուն* - Abiron, *աբկաժ* - Quātitas fili super digitos in cruces formam circuvoluta, *աբկրժել* - filum super digitos in forma crucis convoluere, *աբտակ և չափալայ* - colaphus, *աբտակել* - colaphis cædere և այլն:

3. ՄՄՁ № 3475-ում (1625 թ., էջ 284ա) հանդիպում է մի աստիճանական գծանկար-բառաշղթա՝ նույնատիպ եռաբաշխ 6 օղակներով, որոնցից յուրաքանչյուրը հարաբերակցային եռանդամ մեկ ամբողջություն է՝ ճանաչողության 6-ակի շեմերով: Ընդ որում եռանդամ օղակներում բերվում են իմացականորեն ամբողջական մեկ ըմբռնման (կոնցեպտի)՝ ամենավերացականից (աբստրակտից) մինչև ամենաիրական (կոնկրետ) երևույթները, այլև ձախ կողմի օղակներում՝ դրականի (+), իսկ աջ կողմի օղակներում՝ բացասականի (-) նշանակումները, հետևյալ բաշխմամբ.

⁴⁶ Բառարանում լատիներեն բառերը սովորաբար բերվում են գլխատառով:

1. *մարմնաւոր* (գործօճէյ⁴⁷) ~ *գոյացութիւն* (սուպստանցիայ) ~ *անմարմին* (ինգօրբաւոճէյ),

2. *շնչաւոր* (անիմադում) ~ *մարմին* (գօրբուս) ~ *անշունչ* (ինանիմադում),

3. *սգայուն* (սէնսիպիլէ) ~ *շնչաւոր մարմին* (անիմադում գաւորբուս) ~ *անզգայ* (ինսէնսիպիլէ),

4. *բանական* (ռացիանալէ) ~ *կենդանի* (անիմալ) ~ *անբան* (ինռացիանալէ),

5. *մահկանացու* (մաւոդալէ) ~ *բանական կենդանի* (ռացէանալէ անիմալ) ~ *անմահ* (ինմաւոդալէ),

6. *Սոկրատէս* (Սոգրատէս) ~ *մարդ* (աւմաւ) ~ *Պլատոն* (Պլատոն):

Մի կողմ թողնելով նշված հայերէն և լատիներէն բառերի ճանաչողական-իմացաբանական հարաբերակցութիւնը՝ լեզվի առումով հարկ ենք համարում նշելու միայն հետևյալը. բառացանկի հեղինակի համար հայերէնը ոչ լիովին հասու լեզու է, որը երևում է հնչունական որոշ երևոյթների <<այլաձևացումներից>>:

ա) Գրաբարյան *աւ* երկբարբառի գրութիւնն այն դէպքում, երբ 12-րդ դ. 20-30-ական թթ. մուտք էր գործել լատինագիր *օ*-ն, և հակառակը՝ երբեմն գործածվում է նաև վերջինս. *գաւորբուս* // *գօրբուս*, *գօրբօճէյ* // *ինգօրբաւոճէյ*, *աւմաւ* (իմա՝ օմօ <<մարդ>>) և այլն:

բ) Պայթական ձայնեղների դիմաց խուլեր, և հակառակը՝ խուլերի դիմաց ձայնեղներ. *սուպստանցիա* (փիւ. *սուբստանցիա*), *գօրբուս* (փիւ.՝ *կորպուս*), *սէնսիպիլէ* (փիւ.՝ *սէնսիբիլէ*), *ինսէնսիպիլէ* (փիւ.՝ *ինսէնսիբիլէ*), *անիմադում* (փիւ.՝ *անիմատում*), *Սոկրատէս* / *Սոգրատէս* և այլն:

գ) *Ո* / *օ* գրութիւնն երկվութիւնն. *գօրբօճէ* (փիւ. *գորբոճէյ*), *Պլատոն*:

դ) *Ե* / *է*, *ի* / *է* զուգահեռութիւնն. *գօրբօճէյ* (*ինգօրբաւոճէյ*) / *սուպստանցիայ*, *ռացիանալէ* / *ռացէանալէ* (անիմալ):

ե) *Լ* / *ղ* զուգահեռութիւնն. *Պլատոն* / *Պլատոն* և այլն:

4. Նույն ՄՄԶ № 3475-ում (1625 թ., էջ 285ա) կա լատիներէն-հայերէն մի սեղմ բառացանկ (ընդամենը՝ 13 միավոր, որ բերում ենք նույնությամբ). *դիֆ[է]րէնցիա* : *սահման*, *ըս բէնցիա* : *սեռ*, *օրէրացիօն* : *ներգործութիւն*, *բէրսօնա* : *անձն*, *նադուրա* :

⁴⁷ Բառացանկում լատիներէն համարժեք բառ-տերմինները բերվում են հայերէն տառադարձությամբ, ընդ որում ժամանակի արտասանությամբ և ուղղագրությամբ, որն այս դէպքում ամբողջովին կարևոր է:

բնութիւն, արսարսիում : արհեստ արհեստից, էթսիէնցիա : և գիտութիւն, սիէնցիարում : գիտութեանց, ատումնիում, մէթօսոռում, փրինցիբիա, վիամ, ապէնս: առ ամենայն մէթօսայից. սկզբանց, ճանապարհ, ունել:

Նկատելի են հետևյալ տարբերությունները:

ա) Որոշ բառերի տառադարձության մեջ առկա է պայթական բաղաձայնների ձայնեղ / խուլ, խուլ / շնչեղ խուլ հերթագայություն. *ըս քէնցիա* (գրված առանձին), *օբէրացիօն, բէրսօնա, նադուրա, փրինցիբիա* և այլն:

բ) Բերվածներից վերջին 9-13-ը հակադրվում են ոչ թե մեկը մյուսին, այլ նախ՝ լատիներեն՝ (9) *ատումնիում*, (10) *մէթօսոռում*, (11) *փրինցիբիա*, (12) *վիամ*, (13) *ապէնս*, այնուհետև՝ հայերեն (թերևս իբրև մեկ բառակապակցություն կամ նախադասություն)՝ *առ ամենայն* (9). *մէթօսայից* (10). *սկզբանց* (11). *ճանապարհ* (12). *ունել* (13)⁴⁸:

5. Աստվածատուր Ներսեսովիչի <<Բառգիրք լատինացուց և հայոց ի վերայ Աստուածաշունչ և Ժամանակագրութեան գրոց Հայոց եկեղեցոյն. Dictionarium latino-armenum super sacram scripturam, et libros Divini officis Ecclesiae Armenae>> [Roma, MDCXCXV (=1695), VIII + 596, et 14 p.]: Այս բառարանն ավելի է արժանի լեզվական առանձին քննության, քան որ հետագայի է:

6. Ավելի ուշ՝ առաջինից գրեթե մեկ դար հետո լույս է տեսնում Հակոբ Վիլլոտի <<Բառգիրք հայկական լեզուի. Dictionarium novum latino-armenium>> [Roma, MDCCXIV (=1714), ԻԸ + 772 p.]:

Օտունի երկլեզվյան բառացանկը նշվածներից և էլի ուրիշ նման <<մանր>> աշխատանքներից, որոնց կարելի է տեղեկանալ թեկուզ միայն Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերից, անհամեմատ հին է⁴⁹: Ամենից առաջ նկատենք, որ այդ բառացանկին անդրադարձել են և՛ նախկինում, և՛ համեմատաբար նոր ժամանակներում: Բառացանկի համառոտ նկարագրությունը տրվել է համեմատաբար ավելի ուշ է⁵⁰:

⁴⁸ Փակագծերում դրված թվերը մեր հավելումներն են:

⁴⁹ Վերը համառոտ ներկայացված (և նման այլ) բառացանկերի վերաբերյալ մինչև այժմ գոյություն չունի որևէ ուսումնասիրություն:

⁵⁰ Տե՛ս Catalogue général des manuscrits des bibliothèques publiques des départements, 1, Paris, 1849, էջ 13:

Այն միայն 19-րդ դ. վերջերին է եղել բնագրագիտական-բանասիրական քննության առարկա⁵¹: Փաստորեն, չհաշված Օտունի գրադարանի քարտարանը հեղինակողի և Փարիզի ձեռագրատան ընդհանուր քարտարանը կազմողի ձեռնարկումները, այս բառացանկի բուն նյութով առաջին հետաքրքրվողը Օմոնն է, որը ցանկի սկզբում գրում է հետևյալը.

<<La notice qui a été donnée dans la tome I du *Catalogue général des manuscrits des départements* du manuscrit 17A du grand séminaire d'Autun est inexacte, toute courte qu'elle est. L'auteur du catalogue n'a fait que l'emprunter à une étiquette du XVII^e siècle qui se trouve au dos du volume et sur laquelle on lit: *Opuscula et epistolæ B. Hieronymi ex dono Valterii, X sæc.* Ce manuscrit, copié vers la fin du IX^e siècle ou au commencement du X^e, ne contient en réalité qu'une série de *Lettres* de S. Jérôme, mais à la fin (fol. 156), s'est trouvé ajouté à la même époque un manuel de conversation arménien-latin qu'il est intéressant de reproduire>> [= Տեղեկությունը, որը զետեղված է Օտունի մեծ հավաքածուի 17A ձեռագրում՝ *Ընդհանուր ցանկ տարածքին վերաբերող ձեռագրերի* առաջին հատորում, որքան էլ որ համառոտ է, ճշգրիտ չէ: Ցանկի հեղինակը պարզապես փոխառել է 17-րդ դարի մի էտիկետ, որը ներկայացված է հատորի վերջում, ուր կարելի է կարդալ. <<Վալտերիոսի նվիրածից Բ. Հիերոնիմի ոչ ծավալուն մի գործ և Նամակներ, X դ. >>: Այս ձեռագիրը, պատճենված 9-րդ դարի ավարտին կամ 10-րդ դարի սկզբին, իրականում Ս. Ժերոմի *Նամակների* մի շարք է, իսկ վերջում (էջ 156) ավելացված է նույն ժամանակաշրջանի հայ-լատինական զրուցարան, որը հետաքրքիր կլինի բազմացնել⁵²:

Այնուհետև, 90-բառանոց ցանկը բաժանվում է չորս մասի՝ <<Verba seu dictiones armeniorum>> [=Բառեր կամ թե հայերեն արտասանություններ] խորագրի տակ, 1) Nomina dierum (= օրվա անուններ, 7 բառ), 2) Nomina numeri (= թվերի անուններ, 20 բառ), 3) Nomina ceterarum rerum (= այլևայլ իրերի անուններ, 51 բառ), 4) Nomina sanctarum rerum (= սրբազան իրերի անուններ, 12 բառ):

Ավելորդ չենք համարում բերել այդ ցանկը՝ ըստ առանձին մասերի:

⁵¹ Տե՛ս *H. Omont*, Manuel de conversation arménien-latin du X^e siècle // <<Bibliothèque de l'École des Chartes, Revue d'érudition, consacrée spécialement à l'étude du Moyen Age, XLIII, année 1882, Paris, Librairie d'Alphonse Picard, էջ 563-564:

⁵² *H. Omont*, նշվ. աշխ., էջ 563:

1) Nomina dierum (= օրվա անուններ, 7 բառ).

| | |
|---------------|--------------|
| Dies dominica | Kyrache, |
| Feria II | Ergout xapte |
| Feria III | Eriec xapte |
| Feria IIII | Khurec xapte |
| Feria V | Hync xapte* |
| Feria VI | Urpate |
| Feria VII | Sabpat. |

Ուրբաթ օրվա (=Hync xapte) դեպքում ծանոթագրվում է, որ ձեռագիրն ունի xapte տարբերությունը:

2) Nomina numeri (= թվերի անուններ, 20 բառ).

| | | |
|--------------|--------|----------------|
| I. Meche | XX. | Xan |
| II. Ergout | XXX. | Erchun |
| III. Eriec | XXXX. | Karraschun |
| IIII. Khuert | XXXXX. | Ischun |
| V. Hinc | LX. | Vatschun |
| VI. Viit | LXX. | Hioctanatschun |
| VII. Hioct | LXXX. | Utanatschun |
| VIII. Ut | LXXXX. | Ininta |
| VIIII. In | C. | Hariur* |
| X. Taz | M. | Hazar |

Հարիւր (= *Hariur*) թվականի դեպքում ծանոթագրվում է, որ ձեռագիրն ունի *haruir* տարբերությունը:

3) Nomina ceterarum rerum (= այլևայլ իրերի անուններ, 51 բառ).

| | | | |
|--------|---------------|--------|----------------|
| Panis | <i>Haz</i> | Sal | <i>Ahl</i> |
| Caro | <i>Misc</i> | Aqua | <i>Chure</i> |
| Vinum | <i>Chini</i> | Celum | <i>Erginc</i> |
| Caseus | <i>Paner</i> | Sol | <i>Arechac</i> |
| Ovum | <i>Chu</i> | Luna | <i>Lucenga</i> |
| Piscis | <i>Chugen</i> | Stellæ | <i>Astil</i> |

| | | | |
|-------------|-------------------|-----------|----------------|
| Terra | <i>Kcedinc</i> | Nasus | <i>Chit</i> |
| Homo | <i>Anzn</i> | Os | <i>Peran</i> |
| Capillus | <i>Mazen</i> | Labra | <i>Scirtun</i> |
| Oculus | <i>Hahc</i> | Dens | <i>Atmunc</i> |
| Supercilium | <i>Hunc</i> | Gengiva | <i>Lind</i> |
| Cilium | <i>Ardevanunc</i> | Lingua | <i>Lizu</i> |
| Barba | <i>Muruc</i> | Spina | <i>Hualn</i> |
| Facies | <i>Eriesc</i> | Dorsum | <i>Cuelc</i> |
| Auris | <i>Aganch</i> | Latus | <i>Scirt</i> |
| Collum | <i>Vise</i> | Renes | <i>Handam</i> |
| Gula | <i>Puelc</i> | | |
| Guttur | <i>Kcerchac</i> | Renes | <i>Gernac</i> |
| Pectus | <i>Scirt</i> | Coxa | <i>Andam</i> |
| Mamilla | <i>Cize</i> | Genu | <i>Scunch</i> |
| Venter | <i>Puerhe</i> | Crus | <i>Vluec</i> |
| Humerus | <i>Tigunc</i> | Pes | <i>Vaden</i> |
| Brachium | <i>Striuch</i> | Cabilia | <i>Cuech</i> |
| Manus | <i>Hab</i> | Veretrum | <i>Cliu</i> |
| Digitus | <i>Matun</i> | Testiculi | <i>Scuc</i> |
| Pugnus | <i>Prunhc</i> | Mulier | <i>Kenic</i> |

4) Nomina sanctarum rerum (= սրբազան իրերի անուններ, 12 բառ).

| | | | |
|----------|-------------------|-----------|-------------|
| Ecclesia | Vanc | Bonus | Aihich |
| Deus | Ter | Episcopus | Episcopus |
| Altare | Patarac | Monacus | Apiiguhalts |
| Crux | Chahc | Presbiter | Eresc |
| Angelus | Arrachil tevavoet | Levita | Aottroets |
| Sanctus | Supr | Xpianus | Xpuener. |

Օ. Կարիերը երկրորդն է, որ անդրադարձել է այս բառացանկին՝ գրելով առանձին աշխատանք, որն ավելի ծավալուն է, քան մյուսներինը, և որը բառի բուն իմաստով՝

լեզվաբանական աշխատանք է⁵³: Այն բաժանված է երեք մասի՝ ա) ներածություն, որն ընդհանուր վերնագիրն է («Un ancien Glossaire Latin-Arménien», էջ 7-10), բ) բառեր՝ իրենց հայերեն հնչումով («Verba seu dictiones armeniorum», էջ 11-17), գ) անվերնագիր («հնչման որոշ տարբերությունների վերաբերյալ», էջ 17-19)⁵⁴:

Բառացանկի որոշ բառերի ձայնավորների գրության մասին խոսում է նաև Ա. Մեյեն իր մի գրախոսականում՝ գրված Յ. Կարստի կիլիկյան հայերենի քերականության վերաբերյալ⁵⁵:

Բառացանկը Կարիերը բերում է նշված երեք մասերից երկրորդում, ընդ որում չորս խմբով՝ նույնպես «Verba seu dictiones armeniorum» խորագրով, և, ի տարբերություն Օմնի ցանկի, ավելացվում է լատինատառ թարգմանության հայերեն տառադարձվածը (բերում ենք նույնությամբ):

Nomina dierum (= օրվա անուններ).

1. Dies dominicum - *Kyrache* – կիրակե, կիրակե
2. Feria II – *Ergout xapte* - երկու(քշաբթի)
3. Feria III – *Eric xapte* -երեքշաբթի
4. Feria IIII - *Khurec xapte* - չորքշաբթի
5. Feria V - *Hync xapte* - հինգշաբթի
6. Feria VI *Urpāt* - ուրբաթ
7. Feria VII - *Sabpat* – շաբաթ (ն. տ., էջ 11-12)⁵⁶:

Nomina numeri (= թվերի անուններ).

8. I – *Meche* – մեկ (մեկը?)
9. II – *Ergout* – երկուք
10. III - *Eriec* - երեք
11. IIII – *Khuert* – չորք
12. V - *Hinc* – հինգ

⁵³ Un ancien Glossaire Latin-Arménien, publié et annoté par A.Carrière, Paris, MDCCCLXXXVI (=1886), 19 p.: Ի դեպ՝ Է. Աղայանը գրում է, որ Պ. դը Լագարդն է փորձել անդրադառնալ բառացանկում տեղ գտած հայերեն բառերի արտասանությանը: Տե՛ս Է. Բ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1958, էջ 106:

⁵⁴ Կարիերի աշխատանքի մասին ժամանակին գրախոսականով և առհասարակ արտահայտվել են Պ. դը Լագարդը և Ա.Մեյեն: Տե՛ս Է. Բ. *de Lagarde* (գրախոս.), Göttingische gelehrte Anzeigen, 8, 1887, էջ 292-294:

⁵⁵ *A.Meillet*, Remarques sur la grammaire historique de l'arménien de Cilicie de M. J. Karst // «Zeitschrift für armenische Philologie», B. 2, Heft 1, 1903, էջ 18-28 (հայ. թարգմ.՝ *Ա.Մեյե*, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978, էջ 441-451):

⁵⁶ Բառամիջյան գծիկների և արաբական թվերին հաջորդող կետերի նշումը մերն է:

13. VI - *Viit* – վեց
14. VII - *Hioct* – եօթ, եօթը
15. VIII *Ut* – ութ
16. VIII - *In* – ինը
17. X - *Taz* – տասը
18. XX - *Xan* – քսան
19. XXX - *Erchun* – երեսուն
20. XXXX - *Karraschun*- քառասուն
21. L - *Ischun* – յիսուն
22. LX - *Vatschun* - վաթսուն
23. LXX - *Hioctanatschun* – եօթանասուն
24. LXXX – *Utanatschun* - ութանասուն
25. LXXXX - *Ininta*⁵⁷
26. C - *Haruir* - հարուր
27. M - *Hazar* - հազար (ն. տ., էջ 12-13):

Nomina ceterarum rerum (= այլևայլ իրերի անուններ).

28. Panis – *Haz* – հաց
29. Caro – *Misc* – միս, pl. de միս
30. Vinum - *Chini* – գինի
31. Caseus – *Paner* – պանիր
32. Ovum – *Chu* – ձու
33. Piscis - *Chugn* – ձուկ
34. Sal – *Ahl* – աղ
35. Aqua – *Churc*- ջուր (ջուրը ?)
36. Celum – *Erginc* - երկինք
37. Sol – *Arechac* - առեգակ
38. Luna – *Lucenga* -լուսնկայ, լուսինկայ
39. Stellae - *Astil* – աստղ

⁵⁷ Բավականին ուշագրավ է, բայց ոչ վերջնական Կարիերի տված բացատրությունն այս *իննսուն*-ի (*Ininta*) վերաբերյալ, ըստ իս` *իննսու*, պետք է վերականգնել *ինին տասն* (?):

40. Terra – *Kcedinc* - գետինք
41. Homo – *Anzen* – անձն
42. Capillus – *Mazen* – մազն (նո՞ւմ ձեռնառնք.)
43. Oculus – *Hahc* – աչք
44. Supercilium – *Hunc* – յունք, յօնք
45. Cilium - *Ardevanunc* - *արսևանունք*
46. Nasus – *Chit* – քիթ
47. Os - *Peran* – բերան
48. Labra – *Scirtun*- շրթունք
49. Dens - *Atmunc* – ստամունք
50. Gengiva – *Lind* – լինդ
51. Lingua – *Lizu* – լիզոն
52. Barba – *Muruc* – մուրուք
53. Facies – *Eriesc* - երեսք
54. Auris – *Aganch* – ականջ
55. Collum - *Vise* – վիզ (վիզո՞ւմ ?)
56. Gula – *Puele* – փողք
57. Guttur – *Kcerchac* – խոչակ
58. Pectus – *Scirt* – սիրտ
59. Mamilla – *Cize* – ծիծ (ծիծո՞ւմ ?)
60. Venter – *Puerhe* – փոր (փորո՞ւմ?)
61. Humerus – *Tigunc* – թիկունք
62. Brachium – *Striuch* - ձեռք
63. Manus - *Hab* – ափ
64. Digtus – *Matun* – մատունք
65. Pugnus - *Prunhc* – բռունք
66. Spina - *Hualn* – ողն
67. Dorsum – *Cuelc* – կողք
68. Latus – *Scirt* – սիրտ
69. Renes – *Handam* – անդամ

- 70. Renes – *Gernac* – կոնակ
- 71. Coxa – *Andam* – անդամ
- 72. Genu – *Scunch* – ծունկ
- 73. Crus - *Uluec*- ոլոք, ոլոգ
- 74. Pes - *Uaden* – ոտն
- 75. Cabilia – *Cuech* – կոճ
- 76. Venetrum - *Cliu* – կ(....)
- 77. Testiculi - *Scuc* – ձուլք
- 78. Mulier – *Kenik* – կնիկ (ն. տ., էջ 13-16):

Nomina sanctarum rerum (= սրբազան իրերի անուններ).

- 79. Ecclesia – *vanc* – վանք
- 80. Deus – *Ter* - Տէր
- 81. Altare – *Patarag* – պատարագ
- 82. Crux – *Chahc* –խաչ
- 83. Angelus - *Arrachil tevaonet* – առաքեալ թևաւորք
- 84. Sanctus –*Supr* – սուրբ
- 85. Bonus – *Aihich* – աղէկ
- 86. Episcopus – *Episcopus* – եպիսկոպոս
- 87. Monachus – *Apiigulalts* – արեղայացու
- 88. Presbiter – *Eresc* – երէց
- 89. Levita - *Aottrocts* -,
- 90. Xpianus – *Xrucner* – Քրիստոնէ (ն. տ., էջ 16-17):

Կարիերը այս ցանկի տեղադրումից, որոշ տեղերի վերծանությունից, այնուհետև վերլուծությունից առաջ անդրադառնում է բառացանկի (ձեռագրի) բանասիրական և բնագրագիտական քննարկմանը՝ կարծիք հայտնելով գրության ժամանակի, լատիներեն ձևերի թարգմանության երկակիության, գործածության նպատակադրման մասին և այլն:

Այս հարցերին հետագա ուսումնասիրողները ևս այս կամ այն չափով անդրադարձել են՝ ամենից առաջ շեշտելով երևույթի մշակութային կողմը⁵⁸:

Այստեղ բավականին ուշագրավ են Կարիերի դիտարկումները, որոնք բերվում են ցանկին կից՝ տողատակի ծանոթագրությունների ձևով: Նա կատարում է բանասիրական լուրջ աշխատանք գրանցված ձևերի՝ հին գրական հայերենի համեմատությամբ նկատվող արտասանական և բառային շեղումների վերաբերյալ. օրինակ՝ լատ. *bonus* <<լավ>> բառը ցանկում թարգմանված է *աղէկ*, որի համար տողատակում ծանուցվում է՝ Vulg. pour *բարի* (= իսկց. *բարի*-ի փոխարեն):

Ըստ այսմ՝ 90-բառանոց ցանկի բնագրային-բանասիրական քննարկման համար Կարիերն ունի 42 ծանոթագրություն, որոնք կարելի է խմբավորել հետևյալ կերպ:

ա) *Աղէկ* (փխ. *բարի*) ծանոթագրման նման են՝ *եօթ*, *եօթը* (փխ. *եօթն*), *ինը* (փխ. *ինն*), *տասը* (*տասն*), *ութանասուն* (փխ. *ութսուն*), *հարուր* (փխ. *հարիւր*), *արեգակ* (փխ. *արեգակն*), *լուսնկայ*, *լուսինկայ* (փխ. *լուսին*), *լինտ* (փխ. *լինտը/լինդը*), *լիզու* (փխ. *լեզու*), *խոչակ* (փխ. *խոչափող*), *ծիծ*, *ծիծը* (փխ. *ստին*, *ստինք*), *կոնակ* (փխ. *կուռն*), *ծունկ* (փխ. *ծունգք*, *ծունկք*): Այստեղ կարող է լինել առարկություն. օրինակ՝ լատինագիր հայերեն ձևի տառադարձումը հաճախ տարբերվում է բնագրից (օրիգինալից), և ըստ այդմ էլ այն համեմատվում է գրաբարի հետ (իմա՝ *Hiocht* - *եօթ*, *եօթը*, *Ut* - *ութ*, *In* - *ինը*, *Taz* - *տասը* և այլն):

բ) Եղած այս կամ այն բառի նման գրանցումը ոչ թե քննվում է ինքնին, այլ գրական այլ աղբյուրների օգտագործմամբ. համեմատության եզր է ընտրված հիմնականում Մխիթար աբբա Սեբաստացու բառարանը, մասամբ՝ Յ. Շրյոդերի քերականությունը, այլև Մ. Դյուլորիեի և Պ. դը Լագարդի աշխատությունները:

գ) Որոշ դեպքերում չի նշվում բառի հայերեն համարժեքը (հմմտ. 25 *LXXXX* - *Ininta* -, 89 *Levita* - *Aottroets* -,), երբեմն էլ հայերենի դեպքում տրվում է ոչ թե եղած, այլ գրաբարյան ձևը (հմմտ. 16. *XIII In* - *ինը*, 17. *X Taz* - *տասը*, 19. *XXX Erchun* - երեսուն և այլն):

դ) Կան բառի հայերեն գրության անհարկի միջամտություններ, երբեմն բառը բերվում է հարցականով և այլն. հմմտ. 2 *Feria II Ergout xapte երկու(ք)շաբթի*, 35 *Aqua Chure ջուր (ջուրը (?))*, 55 *Collum Vise վիզ / (վիզը (?))*, 59 *Mamilla Cize ծիծ / (ծիծը (?))*, 60 *Venter Puerhe փոքր*

⁵⁸ Հմմտ. *Ս. Գ. Դոլուխանյան*, Լատիներեն-հայերեն հնագոյն բառարանը // <<Շիրակ>> (գրականութեան և արուեստներու ամսագիր), Բեյրութ, 2006, ապրիլ-յունիս, էջ 44-47:

/ *փորը* և այլն, որն ոչ այլ ինչ է, եթե ոչ բնագրում առկա ժամանակի խոսակցական ձևերի հնարավորինս հաշվի առնելու արդյունք:

ե) Տեղ է տրվում հայերեն նշանակման կրկնակ ձևերի (տարբերակների). հմմտ. *կիրակէ / կիրակէ, եօթ / եօթը, լուսնկայ / լուսինկայ, յունք / յօնք, ոլոք / ոլոգ* և այլն, որն այլ բան չէ, քան լատինագիր հայերեն բառի ոչ լիարժեք արտացոլման հետևանք. քննարկումը մնում է առկախ և այլն:

զ) Նկատելի է Օմնի ցանկից (1) տարբերվող վերականգնում (2): Հմմտ.

(1) C. Hariur - (2) C. Haruir *հարուր,*

(1) Crus - Vluec - (2) Crus - *Ulucc ոլոք, ոլոգ,*

(1) Pes - Vaden - (2) Pes - *Uaden տն:*

զ) Սահմանվում են հնչյունական որոշակի զուգադիպումներ՝ ըստ բառի կազմում դրանց գործածության դիրքային առանձնահատկությունների: Հմմտ.

1) պայթական բաղաձայնների դեպքում՝ $p > p, q > ch, kc, \eta > d, uy > p, l > g, k, c, ch, m > t, d:$

2) ձայնավորների դեպքում՝ $t >$ (բառասկզբում) $e,$ (մեկ այլ ձայնավորից առաջ) hi, n (բառասկզբում) $> u, ua, hua,$ (բառամիջում) ue, ua և այլն⁵⁹:

Հետագայում նույնպես այս կամ այն չափով խոսվում է այդ բառացանկի մասին: Դրանք, ի տարբերություն վերը քննարկված երկուսի, բավականին ակնարկային են, այլև թողնում են կողմնակի անդրադարձի տպավորություն՝ իբրև այս կամ այն չափով առնչվող իրենց բուն խնդիրներին:

Այդ աշխատանքները մի քանի խումբ են՝

ա) ընդհանուր բանասիրական⁶⁰,

բ) հայ մատենագիտության և գրականության պատմությանը վերաբերող⁶¹,

գ) հայ լեզվաբանական մտքի, այլև բառարանագրության պատմությանն առնչվող⁶²:

⁵⁹ Un ancien glossaire latin-arménien, էջ 18:

⁶⁰ Հմմտ. Կ. Կոստանեան, Հայագիտութիւնն Արևմտեան Եւրոպայում (համառոտ տեսութիւն եւ գրացուցակ), Թիֆլիս, 1910, էջ ԽԶ: Գ. Ա. Շրումպֆ, Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ-ԺԹ դար), Վենետիկ, 1895, էջ 7-9: Հ. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 571:

⁶¹ Հ. Անսայան, Հայկական մատենագիտություն, հ. Բ, Ե., 1976, էջ 1211-1212: Ա. Տեր-Ղևոնդյան (գրախոս.), <<La livre Arménien à travers les ages>> (Marseille, 1985) //- <<Պատմա-բանասիրական հանդես>>, 1987, 1, էջ 219-221: Ա. Դոլուխանյան, նշվ. աշխ.:

⁶² Գ. Բ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1960, էջ 116-117: Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 106: Գ. Կ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 46-47: Հ. Մ. Ամսլյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V - XV դդ.), էջ 37-40:

Հիշյալ, այլն ավելի ուշ երևան եկած գրեթե բոլոր աշխատանքներում, անկախ քննարկման կամ ակնարկման տարբեր չափերից, բառացանկն արժանանում է դրվատանքի՝ ամենից առաջ նկատի առնելով նրա հնությունը:

Բառացանկին անդրադարձել է նաև Ա. Մեյեն՝ Լատերի հայտնի քերականության թարգմանության առիթով, որն արել է Կարիերը. «Ի պատիվ հայ բանասեր Մ. Էմինի և հանուն Արևելյան լեզուների դպրոցի, նա (իմա՝ Կարիերը - Վ.Հ.) հրատարակում է մի հին լատին-հայ բառարան»⁶³:

Այնուհետև, Մեյեն գրում է՝ «...այն տեղեկությունները, որ պր. Կարստը տալիս է *է-ի* և *է-ի* արտասանության մասին, ուշագրավ են: Հետաքրքրական կլիներ դրանք համեմատել այն եզրակացությունների հետ, որ կարելի է հանել 9-րդ դարի վերջի կամ 10-րդ դարի սկզբի լատիններեն մի ձեռագրի լատիններեն-հայերեն բառացանկի (*glossaire*) գրության ձևերից (*Carrière, Un ancien glossaire latin-arménien*, Փարիզ, 1886): Արդարև, այստեղ *է-ն* նշված է *e-ով* թեկուզ այն շեշտված լինի, № 80, 88: Ընդհակառակն, անշեշտ *է-ն* նշված է *e-ով* թե՛ բառամիջում, ինչպես *arechac արեզակ* բառում (№ 37), թե՛ բառասկզբում, ինչպես *erginc երկինք* բառում. սակայն, երբ *է-ն* շեշտված է, այն նշված է *ie -ով՝ eriec երեք* (№ 3 և 10), *eriesc երեսք* (№ 53). *lizu-ն* «*lingua, լեզու*» (№ 51) ներկայացնում է ոչ թե հայ *է-ի* փոփոխությունը *i-ի*, այլ *լիզու* հայտնի բարբառային ձևը: Նույն բառացանկում անշեշտ *n-ն* ներկայացված է *u-ով*, մի բան, որ ճշտիվ համապատասխանում է պր. Կարստի ուսուցած կիլիկյան արտասանությանը, էջ 21, այսպես՝ *khurec xapte չորեքշաբթի* (№ 4). ոչ բառասկզբնային շեշտված *n-ն* արտահայտված է *ue-ով՝ uluec ոլոք* (№ 73, որտեղ բառասկզբի անշեշտ *n-ն* ներկայացված է նաև *u -ով*), *khuert* (կարդալ՝ *khuerc*) *չորք* (№ 11), *puelc փողք* (№ 56), *cuelc կողք* (№ 67), *cuech կոճ* (№ 75) և այլն: Եվ բառասկզբնային շեշտված *n-ն* ներկայացված է *ua-ով՝ hualn ողն* (№ 66), *uaden ոտն* (№ 74). հմմտ. Լեհաստանի հայերենում բառասկզբնային շեշտված *n-ի* յուրահատուկ արտասանությունը, որ հիշատակվում է պր. Կարստի կողմից, էջ 20, № 5 >>⁶⁴:

Մեյեն խոսում է նաև հայ. *լ / ղ* լծորդությանը, որ քննարկվում է Կարստի գրքում, և դարձյալ օգտագործվում են բառացանկի համապատասխան տվյալները՝ նույն երևույթի պատմական տեղաշարժը ճիշտ ներկայացնելու համար. «... ֆրանսերենի *ld-ի ղտ* տառադարձումը շատ խորհրդավոր է թվում, երբ կարդում ենք պր. Կարստի

⁶³ Տե՛ս «Արարատ» (ամսագիր), 1902, էջ 911 և այլն:

⁶⁴ Ա. Մեյե, նշվ. աշխ., էջ 448:

ուսումնասիրությունը. այն շատ հստակ է դառնում, երբ մտաբերում ենք, որ այն ժամանակ, երբ Կիլիկիայում սկիզբ առան ֆրանսիացիների և հայերի հարաբերությունները, այսինքն՝ 11-րդ դարում, ֆրանսերեն 1-ն բաղաձայնից առաջ քմային 1 էր և չէր հանգել ս-ին, որ այն պետք է դառնար: Այս տառադարձությունից հետևում է, թե հայերեի *ղ*-ն դեռևս այն կոկորդային ձայնեղ շփականը չէր, որ նա դարձավ հետագայում, և այն դեռևս 1-ի բնույթ ուներ: Եվ իրոք, վերոհիշյալ լատիներեն-հայերեն բառացանկում *ղ*-ն նշվում է հլ-ով՝ *ahl աղ* (№ 34), *hualn ողն* (№ 66), *ahil աղ* (№ 39), *puelc փողք* (№ 56), *hualn ողն* (№ 66), *cuelc կողք* (№67) բառերում՝ պարզապես 1-ով: Տարբերվող միակ օրինակը՝ *aichich <<bonus>>* (№ 85) *աղէկ*, ակնհայտորեն խեղաթյուրված է ամեն տեսակետից: - Այս առթիվ նշենք, ֆրանսերենի հայերեն տառադարձության եղանակները, որոնք հաստատվել են 11-րդ դարում, շարունակվել են մինչև իսկ այն ժամանակ, երբ դրանք ո՛չ ֆրանսերենի արտասանությանն էին համապատասխանում, ո՛չ էլ հայերենի: Դրանք հանդիպում են 16-րդ դարի և նույնիսկ հետագա բնագրերում, սակայն դրանցից ոչ մի հետևություն չի կարելի անել>>⁶⁵:

Իսկ Գ. Գասպարյանը, օրինակ, իրավացիորեն նշում է. <<Սակայն ինչպիսին էլ լինի այդ բառացանկը, յուր անճշտություններով հանդերձ, մի թանկագին գանձ է՝ խոր հնությունից պահպանված և արժանի է լուրջ ուշադրության և ուսումնասիրության, մանավանդ արտասանական որոշ հարցերի տեսակետից>>⁶⁶: Սա ճիշտ նկատառում է, մանավանդ հետագա ուսումնասիրության պահանջ ներկայացնելու տեսանկյունից:

1980-ական թթ. Օտունի բառացանկը քննության առարկա է դառնում հայ բարբառների տեսական հարցերի առնչությամբ⁶⁷: Այս դեպքում նկատում ենք, որ հնարավոր հարցադրումը, այն է՝ հին (X դ.) հնչյունական երևույթները համեմատել նոր բարբառների տվյալների հետ, որքան էլ ինքնօրինակ, կարող է հանգեցնել փակուղու թեկուզ այն պատճառով, որ համեմատության եզրերի միջակա օղակները ոչ մի կերպ չեն բացահայտվում և սահմանվում:

⁶⁵ Նույն տեղում:

⁶⁶ Գ. Գ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 46:

⁶⁷ *J.J.S.Weitenberg*, Armenian dialects and the Latin-Armenian Glossary of Autun //.- <<Medieval Armenian Culture (University of Pennsylvania Armenian Texts and Studies 6)>>, Chico, CA: Scholars Press, 1983, էջ 13-28: *Հ.Դ. Մուրադյան*, (գրախոսություն), *J.J.S.Weitenberg*, Armenian dialects and the Latin-Armenian glossary of Autun. Տպագրված Medieval Armenian Culture (University of Pennsylvania Armenian Texts and Studies 6), Chico, CA: Scholars Press, էջ 13-28 // <<Պատմա-բանասիրական հանդես>>, 1985, 3, էջ 219-226:

Այսպես, Յ. Վայտենբերգը փորձում է <<բառացանկի լեզուն կապել Հայաստանի որևէ բարբառային տարածքի հետ՝ հաշվի առնելով, անշուշտ, հազար տարվա բացը բառարանի և ժամանակակից հայ բարբառների վկայության փաստի միջև>>⁶⁸:

Սա տեսականորեն լավ նախադրյալ է, սակայն, արդյո՞ք հնարավոր է այն լիովին իրականացնել, այսինքն՝ ըստ այդմ քննարկել բառացանկի թե՛ հնչույթային և թե՛ բառային երևույթները: Ի դեպ՝ բառային քննություն չի կատարվում, մանավանդ ծագումնային և բառակազմական բաղադրիչների բնույթի տեսակյունից. հմմտ. *լինդ* (փխ. *լինդր* / *լինդր*), *ութանասուն* (փխ. *ութսուն*), *ինը* (փխ. *ինն*) և այլն: Բառերին ուշադրություն է դարձվում ըստ ներլեզվական (գրական կամ խոսակցական) հանգամանքի, որպիսի փորձ առաջին անգամ կատարել էր Օ.Կարիերը:

Նշենք, որ Մեյեի դիտարկումը Կարստի քերականության մեջ *ե* և *է*, այլև *ո* ձայնավորների տարբեր արտասանության առնչությամբ և համեմատությունը Օտունի բառացանկի տվյալների հետ արդեն կար, որն այնքան հնարավորություն կրնձեռեր հայ բարբառների մեջ դրանց արտացոլումների հիման վրա իրական համեմատություն անցկացնելու և ճիշտ եզրակացության գալու, որ փորձում է անել Յ. Վայտենբերգը, իսկ հետագայում՝ նաև Հ. Մուրադյանը:

Ավելի կոնկրետ կարելի է նշել հետևյալը:

ա) Ձայնավորին հաջորդող *յ*-ի անկում (հմմտ. *լուսնկա*):

բ) Միջձայնավորային դիրքում *ա*-ի սղում (հմմտ. *երսուն*, *քսսուն* և այլն):

գ) Շեշտված վանկում *ե*, *ո* ձայնավորների երկբարբառայնացում. հմմտ. *երիեկ* [eriec] <<երեք>>, *երիեսկ* [eriesc] <<երեսք>>, *կուելկ* [uelc] <<կողք>> և այլն (հայերեն ձևերն ըստ մեր տառադարձման): Վերջին կետի հետ կապված նշվում է հետևյալը. <<Այստեղ ուրվագծվող իրավիճակը հայտնաբերված է կիլիկյան հայերենում: Սա իհարկե չի նշանակում, թե բառացանկի բարբառը ճշգրիտ նախորդն է գրական կիլիկյան հայերենի: Ժամանակակից բարբառների երկբարբառացման տարածումը պետք է հաշվի առնել մինչև այս զուգահեռի համար հավաստի փաստարկ գտնելը⁶⁹:

դ) Բերված աղյուսակում համեմատության եզրեր են դիտված մի կողմից՝ դասական հայերենի (գրաբարի), մյուս կողմից՝ Սվազի, Երևանի, Տրապիզոնի, Սասունի, Մալաթիայի, Ագուլիսի, Վանի և Ղարաբաղ-Լոռիի (բարբառների) առաջնալեզվային պայթական

⁶⁸ J.J.S. Weitenberg, նշվ. աշխ., էջ 14-15:

⁶⁹ J. J. S. Weitenberg, նշվ. աշխ., էջ 16-17:

բաղաձայնների երկու՝ բառասկզբի և միջձայնավորային դիրքում ի հայտ գալու հիման վրա որոշելու բառացանկի բարբառային հիմքը, թեև տեսականորեն ընդունում է, որ դրանցից ոչ մեկի հետ այն չի կարող մերձավոր գծեր ունենալ, որովհետև ժամանակային հեռավորությունը բավականին մեծ է, միջանկյալ օղակների անհայտ լինելը խանգարում է նման եզրակացությանը⁷⁰: Այս դեպքում, թերևս, հարկ կար դիմելու համեմատաբանության մեջ լայն տարածում գտած ներքին վերականգնման մեթոդի տվյալներին, որն այս դեպքում անտեսված է:

ե) Բառացանկի միավորների բարբառային պատկանելությունը որոշելու համար տարբերակիչ հատկանիշ է ընտրված միջին բարձրացման *t* և *n* ձայնավորների անկմամբ բառերի առկայությունը, որն այնքան էլ հուսալի չէ, մանավանդ եթե այն սահմանված ենք գտնում ժամանակակից բարբառների մի մասի համար, ընդ որում այդ դեպքում անգամ այն բառացանկում միանշանակ ձևով չի դրսևորվում:

Վայտենբերգի եզրակացությունը հետևյալն է. «Օտունի բառարանում ներկայացված բարբառի ծագման վայրի և տիպի մասին նախնական եզրակացությունը առաջին մոտեցումն է, որ արվում է այս հետաքրքիր փաստաթղթի միայն մի քանի յուրահատկությունների հիման վրա»⁷¹: Այս մասին նշում է նաև Հ. Մուրադյանը՝ հետևյալ ձևակերպմամբ. «...հայ տեղեկատու անձը կարող էր եկած լինել Զեյթուն-Մալաթիա-Սասուն-Վանա լիճ գծին մոտիկ որևէ վայրից: Վայտենբերգը իր այս եզրակացությունը համարում է նախնական և լեզվական այս սկզբնաղբյուրը արժանի է համարում ավելի մանրամասն քննության»⁷²:

Հարկ ենք համարում շեշտել, որ հմուտ հայագետը ձեռնպահ է մնում հնչյունական անցումների մի այնպիսի հաջորդականություն հաստատելուց կամ մատնանշելուց, որ հնարավոր լիներ այս կամ այն չափով միջակա օղակներ առանձնացնել այդ անցումների մեջ: Օրինակ՝ հնդեվրոպական լեզուների մեջ հե. *p > f > h > ø (զրո) անցումային օղակներ են նշվում, որոնցից այս կամ այն աստիճանին համապատասխանում է ցեղակից լեզուներից մեկնումեկը կամ մի քանիսը. ըստ այդմ՝ հայերենի դեպքում, օրինակ, ունենք հե. *p > հայ. *h* (*l*, *ø*). հմմտ. հե. *pes > *հետ-ք*, հե. *pos > *nut-ն*, հե. *pater > *հայր*, հե. *oËipaH- > (*h*)*ովի* և այլն:

Ուշագրավ է Հ. Մուրադյանի հետևյալ գնահատությունը. «...եթե նկատի չունենանք վիմական արձանագրությունները, բառացանկը և Մաշտոցի անվան Մատենադարանի 887 թ.

⁷⁰ J. J. S. Weitenberg, նշվ. աշխ., էջ 19-20: Հմմտ. Հ. Դ. Մուրադյան, նշվ. գրախոս., էջ 221-222:

⁷¹ J. J. S. Weitenberg, նշվ. աշխ., էջ 21:

⁷² Հ. Դ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 223:

գրչագիր ավետարանը հայերենի ամենահին գրավոր աղբյուրներն են, թեև հնարավոր է նաև, որ բառացանկը լինի ավելի հին»⁷³: Նկատենք, որ այս դեպքում անվանի բարբառագետը անում է մի քանի հարցադրումներ, որոնց շուրջ էլ բերում է իր առարկությունները, հայտնում իր կարծիքը: Վերջինս, անշուշտ, պետք է ըստ ամենայնի նկատի ունենալ բառացանկի հնչյունաբանության և բարբառային հիմքի դեռևս չպարզաբանված խնդիրը լուծելու համար:

Այնուհետև, ելնելով հայ. *լ > ղ* (*լ*-ի վերահնչյութավորումը *ղ*-ի) անցումից՝ Մուրադյանը գտնում է, որ «...բառացանկի լեզուն, որը հայերենի *ղ*-ի դիմաց հետևողակնորեն հանդես է բերում *լ*, չի կարող լինել IX-X դդ. ծնունդ, այն առնվազն մեկ դարով ավելի հին է, քան կարծվում է»⁷⁴: Սա ևս նոր վարկած է, ուստի կարևոր է խնդրի համոզիչ լուծման համար:

Իսկ իբրև ամփոփում՝ Հ. Մուրադյանը գրում է. «Սակայն անկախ այս բոլորից, լատին-հայերեն բառացանկի լեզվի վերաբերյալ Վայտենբերգի արած դիտարկումները, այդ սկզբնաղբյուրի և հայ բարբառների լեզվական նյութի շուրջ արած դատողություններն ու եզրակացություններն ինքնին հետաքրքիր և ուսանելի են, իսկ բառացանկի լեզվի բարբառային պատկանելության մասին նրա առաջ քաշած կարծիքը՝ գիտական վարկածի կառուցման մի գեղեցիկ փորձ է»⁷⁵:

Շարունակելով նկատենք, որ Հ. Մուրադյանը գրախոսականի վերջում դնում է բառացանկն ավելի մանր խմբավորմամբ՝ «մարմնի մասեր» (30 բառ), «թվային արժեքներ» (18 բառ), «շաբաթվա օրեր» (3 բառ), «բնության երևույթներ» (6 բառ), «սնունդ» (7 բառ), «անձինք» (4 բառ) և «կրոնական» (4 բառ), ընդամենը՝ 72 բառ, այսինքն՝ դուրս է մնում 18 բառ, որն ուշագրավ է, եթե տարօրինակ չէ: Այնուհետև՝ մի քանիսը, կարծում ենք, բերվում են ոչ այնքան ճիշտ ընթերցմամբ. հմմտ. *ատամունք* [atamunc]⁷⁶, փխ. *ատմունկ* [atmunc], *շունչ* [scunch], փխ. *ծունկ*, *արմունկ* [armunc], փխ. *արմունկ*, *կոչ* [cuech], փխ. *կոճ* և այլն:

Նորացված ցանկից դուրս է մնում շուրջ երկու տասնյակ (իմա՝ 18) բառ, որոնցում, կարծում ենք, հայերենի պատմական հնչյունաբանության համար ուշադրության արժանի ոչ պակաս իրողություններ են պարփակված:

Վերջապես, կարևոր ենք համարում ուշադրություն դարձնել նաև հետևյալին:

⁷³ Հ. Դ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 219:

⁷⁴ Հ. Դ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 223:

⁷⁵ Հ. Դ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 225:

⁷⁶ Մխալը գալիս է Կարիերից: St' u A. Carrière, նշվ. աշխ., էջ 14:

ա) Մինչև այժմ եղած դիտարկումներում հեղինակները (Կարիեր, Վայտենբերգ, Մուրադյան) լատիներենին զուգահեռ հայերեն (տառադարձված) ձևերը վերականգնում են ոչ թե ըստ եղածի (ինչպես որ բնագրում է), այլ, այսպես կոչված, հին կամ ավանդական (գրաբարյան) ձևով, որը <<փակում>> է դրանց հիման վրա բառացանկի լեզվի բարբառային հիմքը գտնելու ճանապարհը: Հակված ենք կարծելու, որ բնագրի նման միջամտությունը ամենին տեղին չէ:

բ) Լատինատառ հայերեն ձևերը հայատառ դարձնելիս խախտված են տառադարձման (գրադարձման) առանձին դեպքեր, այսինքն՝ ոչ միշտ է լատիներեն տվյալ գրանշանը հայերեն արտահայտվում նույն նշանով, և հակառակը:

գ) Բառացանկի որոշ բառեր կա՛մ ամենին չեն վերծանվել, կա՛մ ոչ ճիշտ են վերծանված: Ունենք նման մի քանի օրինակներ, որոնց այստեղ չենք անդրադառնում, որովհետև այն պահանջում է գրչագրական, տառադարձական հմտությանը, դրանց <<ընթերցմանը>> վերաբերող ապացուցողական լայն քննարկում:

Անվերապահորեն կարելի է նշել, որ Օտունի <<Հայերեն-լատիներեն բառացանկը>> շարունակում է մնալ հայերենի պատմական հնչյունաբանության և բարբառագիտության կնճռոտ հարցերի լուծման ճանապարհին ոչ ըստ ամենայնի պարզաբանված գրավոր հուշարձան:

ԲԱՌԱՐԱՆԸ

ԱՆ՞յս ուշագրավ ձեռագիր բառարանը, ցավոք, չենք տեսել: Կողմնակի աղբյուրներից տեղեկանում ենք, որ բառարանը (երկու ամբողջական «օրինակությամբ») այժմ պահվում է Վիեննայի Մխիթարյան միաբանության գրադարանում (Ձեռ. № 6) և Կ. Պոլսի «նույն հարց Մատենադարանին մեջ» (որ «այժմ փոխադրուած է Զմմառ Վերափոխման Ս. Աստուածածնի մենաստանը»)⁷⁷: Նշվում են նաև այլ վայրեր (ըստ Սադովկ Պարոնչի՝ «Կանոնիկոսներու գրադարանին մեջ»), «Չարտորսկի իշխանական թանգարանին մեջ»), ժամանակի մեկ-երկու անհատի մոտ (օրինակ՝ «Լեմբերդի հայ Արքեպիսկոպոսին մօտ») և այլն⁷⁸: Այնուհետև, Վիեննայի Մխիթարյանների գրատան մեջ պահված ամբողջական ձեռագրից բացի կա ևս մեկ օրինակ բառարանի երկրորդ հատորից, այլև «նույն մատենադարանին մեջ կայ «Բառք ինչ խրթինք հանեալք ի բառարանէ Ստեփան վարդապետին Կամենիցացոյ», որ քաղուածոյք մըն է վերոյիշեալ ընդարձակ բառարանէն եւ դժբախտաբար թերի, զի կը հասնի մինչեւ Մ գրի սա բառը՝ *Մարմարագործ*» (№ 225, անդ էջ 585)⁷⁹: Վերջապէս, բառարանի մատենագիտական ամբողջական նկարագրությունը գտնում ենք հ. Հ. Տաշյանի կազմած ձեռագրացուցակում⁸⁰:

Այդ ձեռագրի վերաբերյալ համեմատաբար ծավալուն (ընդհանուր՝ բանասիրական և լեզվաբանական բնույթի) աշխատանքները երեք են՝ գրված 100 և ավելի տարի ընդմիջումով, Մխիթարյան հայրերի ձեռքով. առաջինի հեղինակը հ. Ղ. Ալիշանն է, երկրորդինը՝ հ. Ս. Ճանաշյանը, վերջինինը՝ հ. Հ. Ոսկյանը: Բառարանը առաջինում ունի «Գանձ լեզուին հայոց կամ Ստեփանեան բառարան» վերնագիրը, իսկ երկրորդում՝ «Գանձ հայոց լեզուին»: այս դեպքում նախընտրում ենք այն վերնագիրը, որ նշել է հեղինակը և տալիս է հ. Հ. Տաշյանը՝ «Գանձ հայոց լեզուի»⁸¹: Իսկ հ. Գ. Զարբհանայանը բառարանը գնահատում է որպէս «ամենէն աւելի կատարելագոյն, իր անուանը արժանաւոր ու հեղինակին մեծապէս պատիւ ընող երկասիրութիւն»⁸²:

⁷⁷ Հ. Հ. Ոսկեան, Ստեփանոս վ. Ռոշքա,- «Հանդէս ամսօրեայ», 1966, էջ 148: Հմմտ. Հ. Ն. Ալիինեան, Յուցակ Անտոնեան Ձեռագրաց, թ. 2 (անտիպ) (հղումն ըստ նախորդի):

⁷⁸ Հ. Հ. Ոսկեան, նշվ. աշխ., էջ 145:

⁷⁹ Նույն տեղում, էջ 145-146: Ի դեպ՝ Նոր հայկազյան բառարանը չունի *մարմարագործ* բառը:

⁸⁰ «Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեան ի Վիեննա», կազմեց հ. Յակոբոս վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 22-24 :

⁸¹ Հ. Ղ. Ալիշան., Ճառ ընթերցեալ ի Հայկական ճեմարանիս. Տեսութիւն ի Գանձ լեզուին հայոց կամ Ստեփանեան բառարան // «Բազմավէպ» (ամսագիր), 1852, 6, էջ 86-95: Հ. Ս. Ճանաշեան, Ստեփանոս Ռոշքեանի բառարանը (քննական տեսութիւն մը) // «Բազմավէպ» (ամսագիր), 1955, 6-7, էջ 130:

⁸² Հ. Գ. Զարբհանայեան, Պատմութիւն հայերէն դպրութեան, հ. Բ, Վենետիկ, 1878, էջ 410:

Այնուհետև, Ռ. Ղազարյանի վերջերս լույս տեսած աշխատություններից մեկում՝ «Նոր հայկազյան բառարանը» հոդվածում կա անդրադարձ բառարանի աղբյուրներին, որոնցից մեկն էլ Ռոշքայի ձեռագիր բառարանն է, և որն էլ հեղինակը ներկայացնում է բավականին սեղմ շարադրանքով⁸³:

Ստորև այդ բառարանին անդրադառնում ենք հարակից փաստերի և լեզվական նյութի օգտագործման հնարավորության սահմաններում՝ նպատակ ունենալով, նախ՝ այն տեսնել հայ բառարանագրության պատմության լայն ծիրի մեջ իրեն պատշաճող տեղում, այնուհետև՝ ըստ այդմ առաջ բերել գիտական նոր տրամադրվածություն՝ այն ըստ ամենայնի ուսումնասիրելու համար:

Լեհահայ գաղութի երևելի դեմքերից է եղել Ստեփանոս Ռոշքան (1670-1739), որի կրոնական, առավել ևս գիտական գործունեությունն առ այսօր մնում է ոչ ամբողջովին կամ համեմատաբար ոչ լիովին լուսաբանված և գնահատության արժանացած: Նրա անձը, եկեղեցական գործունեությունը, գրավոր պատկառելի ժառանգությունը ուսումնասիրողները ոչ միշտ են ստույգ գնահատել⁸⁴:

Ունենալով ժամանակի առումով բավականին լավ կրթություն՝ *Ստեփանոս Ռոշքա վարդապետը* (ինչպես ինքն է գրում իր ձեռագրերի վերջում), եկեղեցական գործուն հանձնառության իրականացումից բացի առաջ է տարել գիտական բավականին բեղուն աշխատանք: Մատենագիտական և բանասիրական տվյալներ կան, որ Ռոշքան գրել է կրթական նպատակ հետապնդող մի շարք աշխատություններ՝ 1) «Փիլիսոփայութիւն Ստեփանեան կամ Ներածութիւն ի բովանդակ փիլիսոփայութիւն Արիստոտելի» (երկու՝ բուն փիլիսոփայություն և տրամաբանություն բաժիններով), 2) «Կենսագրութիւն եպիսկոպոսաց Հայոց ի Լեհս», 3) «Բարոյական աստուածաբանութիւն» (1725 թ.), 4) «Մաշտոց Հայոց», 5) «Ժամանակագրութիւն կամ Տարեկանք եկեղեցականք» (1739 թ.)⁸⁵, 6) Նամականի» և այլն⁸⁶: Դրանք այսօր (թերևս ավստասլի) գրեթե մոռացության են մատնված, նույնիսկ մի տեսակ դուրս են մնացել ընդհանուր հայագիտական ուսումնասիրությունների տեսադաշտից:

⁸³ Ռ. Ս. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, էջ 52-53:

⁸⁴ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948:

⁸⁵ Այս երկը հրատարակվեց բավականին ուշ՝ հ. Ն. Ոսկյանի աշխատասիրությամբ (Վիեննա, 1964): Ի դեպ՝ գրքին կից առաջաբանում նշվում է, որ Ռոշքան հեղինակ է նաև «Քերականութիւն» գրքի («ըստ իսկական ոճոյն լեզուին հայոց շարադրեցեալ ի Ստանիսլաւով յամի Տեառն 1718 և հայոց ՌՃԿԷ») (ն. տ., էջ 6), ընդ որում այս տեղեկությունը քաղված է իրեն ծանոթ մի աղբյուրից, որ գտնում ենք նաև հ. Ղ. Ալիշանի «Կամենից»-ում (էջ 201) (E. Tisserent, Codices Armeni Bibl. Vaticanae, Romae 1927, p. 18):

⁸⁶ Հմմտ. Հ. Ս. Ճանաչեան, նշվ. աշխ., էջ 130: Հ. Հ. Ոսկեան, նշվ. աշխ., էջ 199-206:

Թվարկվածների կողքին, մեր թեմային առնչվող, անհամեմատ մեծ արժեք ունի «Գանձ հայոց լեզուի» վերնագրով ձեռագիր աշխատանքը, որը 18-րդ դ. բառարանագրության մեծագույն նվաճումներից է եղել՝ ծավալով, նյութի բացատրության և թարգմանության առումով: Այն առ այսօր անհայտ մնացած գրական հուշարձաններից է, որովհետև ո՛չ ժամանակին և ո՛չ հետագայում չի արժանացել տպագրության և ըստ այդմ՝ դուրս է մնացել լայն ուշադրությունից, որին հասան, օրինակ, Մխ. Մեքաստացու (և աշակերտների) «Բառգիրք հայկազեան լեզուի» (հհ. 1-2, Վեն., 1749-1769), առավել ևս՝ Գ. Ավետիքյանի, Խ. Սյուրմելյանի, Մ. Ավգերյանի «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (հհ. 1-2, Վեն., 1836-1837), Գ. Փեշտրմալճյանի «Բառգիրք հայկազեան լեզուի» (հհ. 1-2, Կ.Պոլիս, 1844-1846) աշխատությունները⁸⁷:

Դա ունի իր հիմնավոր պատճառները. նախ՝ Ռոշքայի բառարանը, որքան էլ հեղինակն, ինչպես տեղեկանում ենք, իր կենդանության օրոք ջանք է թափել և բանակցել նյութական հնարավորություն ունեցողների, նաև Վենետիկի Մխիթարյանների հետ, այնուամենայնիվ արդյունքի չի հասել, բառարանը մնացել է ձեռագիր, չի տպագրվել՝ ունենալով ընդամենը մեկ ինքնագիր, մեկ անգամ գրագրողի ձեռքով՝ ամբողջովին (հեղինակի ծախքով), մեկ-երկու անգամ էլ հատվածական արտագրություն, երկրորդ՝ վենետիկյան հայրերը կարողացան լույս ընծայել իրենց բառարանները, որպիսով հետ մղվեց այս բառարանը, երրորդ՝ հայագիտությունը, մասնավորապես բանասիրությունը մինչ օրս անգերազանցելի է դիտում Հին և Նոր հայկազյան բառարանները, ուստի մոռանում է ուրիշ, թեկուզև ձեռագիր մնացածները՝ նույնիսկ փորձ չանելով դրանց անդրադառնալ, առավել ևս նոր պայմաններում տպագրության արժանացնել, որը, ինչ խոսք, մեծապես կընդլայներ մեր օրերի ուսումնասիրողի պատկերացումը հայոց լեզվի ընդհանուր բառապաշարի, վերջինիս պատմության վերաբերյալ:

Ձեռագիր այդ բառարանը զգալի տարբերություններ ունի հետագայում լույս տեսած բառարանների համեմատությամբ՝ թե՛ կազմողի ձեռքին եղած գրավոր աղբյուրների, թե՛ վերջիններիս պարունակած նորանոր բառերի և բառային նոր իմաստների առումով: Ինչպես հ. Ղ. Ալիշանն է հատուկ անդրադառնում, Ռոշքայի բառարանի աղբյուրների մի զգալի մասն այդպես էլ անհայտ է մնացել հայ մատենագիտությանը՝ դրանց կորստյան պատճառով:

⁸⁷ Գ. Ավետիքեան, Խ. Սյուրմելեան, Մ. Ավգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837. Բառարանը բազմացվեց վերջին տարիներին (արտատպությամբ՝ ֆաքսիմիլե, Երևան, 1979-1981 թթ.):

<<Նոր հայկազյան բառարանի>> հեղինակները, ինչպես իրենք են գրում, ինչ-որ չափով օգտվել են ձեռագիր այդ բառարանի այն հատվածների բառանյութից, որ հնարավոր է եղել ունենալ ձեռքի տակ. 17-րդ դ. լեհահայոց միջավայրում Ստեփանոս Լեհացիներից կամ Լեոպոլսեցիներից առաջին՝ Ստեփանոս (Ռոշքայի) <<ոճ առաւել ընտիր քան գերկրորդին. նորին առաջնոյ է և բառգիրք ընդարձակ և բազմավաստակ՝ չն ելեալ ի լոյս, գորոյ զհատուածս նեթ եղև մեզ տեսանել, ուստի նշանակեցաք և զքանի մի բառս, և զանց արարաք զայլովք՝ որք քննութեան և ստուգութեան երևէին պէտս ունել>>⁸⁸:

Հ. Ղ. Ալիշանը սույն բառարանի թեմայով ժամանակին ունեցած իր բանախոսության մեջ, սկզբում թռուցիկ անդրադառնալով նախկինում եղած բառարանային փորձերին (<<Բառք>> ընդհանուր վերնագրով ժողովածուներին՝ երևան եկած <<անդստին յԺԳ և յառաջնոց իսկ դարուց>>) գրում է. <<Իսկ ի ծանօթիցն մեզ ազգային Բառարանաց՝ ճոխութեամբ բառից և պատշաճ դասաւորութեամբ, և լատին թարգմանութեամբ, քաջ ի բաց գերազանցէ զայլովքն՝ Հայկազնեան Բառարանսի Ստեփանոսի Ստեփանեան վարդապետի Ռօշքեանց Կամենիցացոյ, որոյ համբաւ վաղ ուրեմն հասեալ առ մեզ հանդերձ մասամբ ինչ փոքրու գործոյն՝ աճեցուցանէր զփափագ բոլորին ևս ծանօթութեան, որում և հասաք անագան յետ գլխաւորելոյ տպագրութեան մեծիս մերոյ Հայկազեան Բառագրոց>>⁸⁹:

Նա առաջինն է, որ մանրամասն կարդացել և ի վիճակի է եղել պարզելու բառարանի ոչ միայն լեզվական ամբողջ նյութը՝ սովորական, հայտնի բառամթերքի և սրա հետ միաժամանակ նորի հաշվով, այլև այն գրավոր աղբյուրների գոյության փաստով, որոնք վենետիկյան միջավայրի համար եղել են անհայտ, ինչպես նաև բառերի բացատրության, լատիներեն և հունարեն աղբյուրների օգտագործման առումներով և այլն⁹⁰: Նա առարկում է իր պաշտոնակիցներին, որոնք այդ բառարանին տևականորեն ծանոթանալուց, նույնիսկ իրենց մեջ մասերի բաժանելով արտագրելուց հետո, հավանաբար, այնքան էլ բարեհաճ չեն գտնվել, թերևս անտեսելու աստիճանի ձեռնպահությամբ են արտահայտվել:

Այդուհանդերձ, Ալիշանի հանճարը չէր կարող կողմնակալ լինել այդ դեպքում ևս, ուստի իր ճառը կառուցել է հիմնական դրույթների վրա, որոնք 6-ն են՝ <<Նախ, թե ընդէ՞ր յոմանց ի մենջ կեղակարծելի դատեցաւ մատեանն, կամ թե ո՞րչափ հաւատարմութեան արժանի իցէ հեղինակն. Բ. Թե ո՞ իցէ հեղինակն և ուստի կամ ո՞ւր հաւաքեաց զբառսն. Գ.

⁸⁸ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 19:

⁸⁹ Հ. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 86:

⁹⁰ Հ. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 87:

Ո՞ր այնքիկ իցեն թարգմանութիւնք յունականք և լատինականք. Դ. Ջի՞նչ պատմական գրեանք յիշատակք ի նմա. Ե. Եւ զի՞նչ այլ նշանաւոր բանք կամ աւանդութիւնք կամ ականաւոր մատենագրաց վաստակք յիշատակեալք ...»⁹¹:

Հետագա շարադրանքում Ալիշանը մեկ առ մեկ քննարկում է այդ հարցերը, երբեմն հանդիմանական երանգով գնահատում եղած վերաբերմունքը «Բառգրքի» շուրջ: Նկատելի է, որ գործընկերներն այս հարցում եղել են մի տեսակ կողմնակալ, այնինչ Ալիշանը միանգամայն անաչառ է, այն է՝ վերլուծությունների և գնահատությունների միջոցով փորձում է վերաբժնորել այդ աշխատանքը, որ տասնամյակների ընթացքում (շուրջ երեսուն տարի) արել և ավարտին է հասցրել այդ «հայոց լեզվի գանձը», ընդ որում «երկու անգամ սրբագրեալ է, և յերրորդ սրբագրութեան հանգեալ ի Տէր»⁹²:

Շեշտվում է, որ Ռոշքայի բառարանը ինչ-որ տեղ ունի առավելություններ վենետիկյան բառարաններից: Դրանք նկատելի են Ալիշանի առաջ քաշած դրույթներում, մի մասում՝ բազմակի փաստերով, մյուս մասում՝ համեմատաբար սակավ, սակայն առկա է առարկայորեն (օբյեկտիվ) վերլուծողի մոտեցումը, այն է՝ իզուր են իր միաբանակիցներն անտարբեր այդ բառարանի գիտական արժեքի նկատմամբ:

Ստորև նշենք Ալիշանի առարկություններից մի քանիսը, որոնք բանասիրական և լեզվագիտական կարևորություն են ներկայացնում, բնականաբար հիմնված «Բառգրքի» դրական կողմի վրա:

ա) Ալիշանը դեմ է այն առարկություններին, թե բառարանում երբեմն ստուգաբանական մասը անհավաստի է, կամ էլ նշվում են հեղինակներ, որոնք հայտնի չեն (ընդ որում ոչ միայն հայ, այլև լատին մատենագիրներ): Այս կետի առաջին մասի վերաբերյալ նա գրում է, որ «<յայսմ թերութենէ և ոչ գոք ազատ համարիմ ի ստուգաբանից, զոմն առաւել և զոմն նուազ, և բազում ուրեք զիմաստունս անգամ հակակարծիս յայդոսիկ>», իսկ երկրորդի վերաբերյալ՝ հիշեցնում, որ նախ՝ Ռոշքայի հեղինակներից մի քանիսը հետագայում հայտնի դարձան (օրինակ՝ «ցուցակաւ մատենից դիւանացն Էջմիածնի»), «<իսկ օտարազգի մատենագրաց

⁹¹ Նույն տեղում:

⁹² Հ. Դ. Ալիշան, Կամենից: Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռուսենիոյ. հաւաստջեայ յաւելուածովք, Վենեռիկ, 1896, էջ 201: Տե՛ս նաև Հ. Հ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 145, 147 : Ի դեպ՝ հ. Հ. Ոսկյանը բերում է մի հիշատակագրություն բառարանի վերաբերյալ, որում կա բառի՝ ժամանակի խոսակցական լեզվից եկող այլ գրություն (ընդգծումը մերն է), որը կա նաև Ալիշանի մոտ (ն. տ.) ուղղագրությունը շտկված. «Եթէ որ կամիցի զկատարելագոյն Բառգիրք հայկական լեզուով ունիլ, նմա պարտ է որոնել զՍտեփանոս վարդապետին շատադրեալն, որ յորջորջի Գանցարան լեզուին Հայոց շարադրեալ ... մեծաւ աշխատութեամբ, այս(ինքն) երեսուն և երրորդ ամս մինչեւ աւարտեալ է, զնա երկու անգամ սրբագրեալ է եւ ի յերրորդ սրբագրութանն հանգեալ ի տէր...» (ն. տ., էջ 144):

վկայությունք՝ ոչ այնքան ցանկագոյն են, որչափ կարծիսն, այլ բաց ի միոյ կամ յերկուց՝ յոլովիցն երկու կամ երեք վկայությունք հազիւ գտանին»» և այլն⁹³:

բ) Հստակ քննությամբ պարզելով բանասիրության մեջ առկա շփոթը երկու՝ Ստեփանոս Լեհացու և Ստեփանոս Կամենիցացու անձի վերաբերյալ՝ երկրորդի համար ասում է. «...իսկ կրսերն Ստեփանոս մականուանի Ստեփանեան Ռոշքայ կամ Ռոշքեան և սա ի Լեհաց, բայց ոչ ի Լովայ, այլ ի Կամենիցայ, որպէս նշանակեալ է ի գլուխ Բառարանին...»», այնուհետև խոսում է վերջինիս վկայաբերած գրավոր աղբյուրների մասին, այն է՝ դրանք Անիից և Սսից գաղթած ունևոր հայերի բերած գրականությունն է եղել Լեհաստանի տարբեր քաղաքներում, «...յորոց ի Լով միայն աւելի քան հազար ձեռագիր մատեանք գտանէին յաւուրս Նիկոլայ, զորս ցրուեաց և վաճառեաց նա, բայց և յետ նորա գտանէին մնացորդք ոչ սակաւք, յորոց և յիսնիւ չափ յետ հարիւր և աւելի ևս ամաց մահուան Ստեփանոսի փոխադրեցան այսր ի մերս թանգարան»»⁹⁴:

գ) Նշվում են օտար հեղինակների (մատենագիրների) անուններ (Պլինիոս, Կիկերոն, Սենեկա, Տերենտիոս, Կիպրիանոս, Պրոսպերոս և այլք), որոնց երկերի թարգմանությամբ, փաստորեն, հայերենում ստեղծվում են նորանոր բառեր: Ալիշանը գրում է, որ ««գլխաւորք ի թարգմանութեանցդ են լատինականք. երկու կամ երեք մատեանք, յորս զառաջին տեղին ունի Աշխարհագրութիւն ընդարձակ, յորմէ բառս յոլովս քաղեալ է, և բազում ինչ յայնցանէ պիտանիք են ի թարգմանութիւն նորագիւտ իրաց և զործեաց, որոց վասն առ մեօք նորանոր հնարին բառք. այսպիսիք են, օրինակ իմն, *հրետ* փոխանակ *թնդանօթի* կամ *հրանօթի*, *աղելից* կամ *խճուղ*՝ փոխանակ *խճողակի*, *ախաւեղ*, զորոյ ցարդ զբարդեալն գիտեաք *ախաւեղագէս*, *ակնաւորիլ որթոյ* և այլն, և այլն»»⁹⁵:

դ) Ալիշանը գտնում է, որ այս բառարանի վկայությունների շնորհիվ է, որ մեզանում հայտնի են դառնում ««գլխաւորք ի պատմչացս ըստ պատուականութեան հնութեան և ճոխաբանութեան թուին ինձ հինգ կամ վեց, և այլ տասնիւ չափ յետ նոցա»»՝ նշելով անունները և բնորոշելով կարևորությունը հայ պատմագրության համար (Մովսէս Խորենացին՝ իր Դ գրքով, Հովհաննէս պատմիչ, Մեսրոպ պատմիչ, Մատթեոս պատմիչ, Մխիթար պատմիչ՝ ««որ և Անեցի թուի ինձ»», Ստեփաննոս պատմիչ՝ ««ոչ Ասողիկն և ոչ Ուսպելեանն, այլ հնագոյն և հնագունից ճառող»», Հակոբ պատմիչ և ուրիշներ)⁹⁶:

⁹³ Հ. Ղ. Ալիշան, ճառ ընթերցեալ ի Հայկական ճեմարանիս, էջ 87:

⁹⁴ Հ. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 88: Ալիշանն իր հերթին հղում է այդ մասին եղած աղբյուրները (ն. տ.):

⁹⁵ Նույն տեղում, էջ 89:

⁹⁶ Նույն տեղում, էջ 90-93: Տե՛ս նաև Հ. Հ. Ոսկյան, նշվ. շխ., էջ 146: Հ. Մ. Ճանաչեան, նշվ. աշխ., էջ 125-138:

ե) Ռոշքայի բառարանի մեջ եղած մատենագրական վկայությունների բանասիրական բաղդատությամբ հնարավոր է պարզել բնագրագիտությանը մութ մնացած շատ հարցեր: Այդպիսին են, օրինակ, Պիտոյից գրքի, Խորենացու Պատմության Բ մասի (կամ հավելվածի) վերաբերյալ տեղեկությունները, այլև՝ Մամբրեի առնչությամբ, որ <<գտրա բաց ի միոյ կամ երկուց ճառից՝ չունիմք մեք այլ ինչ գրուած, բայց զիտեմք զի է նորա գրեալ և Պատմութիւն, և կարծիք են, թէ և մեկնութիւն Յովհաննու աւետարանին>>⁹⁷: Ուստի կարելի է մտածել, որ ավելի է մեծանում բառարանի արժեքը հայ հին գրականության պատմության ամբողջացման առումով:

զ) Ոչ պակաս կարևոր է համարվում այն, որ բառարանում վկայություններ են բերվում ոչ միայն հին, այլև հետագա քերականներից, որոնց մի քանիսի անունն իսկ հայտնի չէ (Հովհաննես Երզնկացու հիշատակած ցանկում չկան): Օրինակ՝ <<քերական յիշի կրճատ անուամբ Գագ կամ թուի Գագիկ, թէպէտ և այլուր չիք իմ լուեալ քերական Գագիկ անուն, բայց չիք տեղի անհաւանութեան ընդունել և զդա ի թիւս քերականաց կամ մեկնչաց նորին>>⁹⁸:

է) Առավել ուշագրավ է Ալիշանի հետևյալ վերջնական դիտարկումը. <<Իսկ ի կնիք բանիցս ի պարծանս հեղինակի Բառարանին արժան համարիմ յիշել և զճոխութիւն բառիցն, զոր թէպէտ ոչ արկի ի թիւ, այլ ոչ շատ պակաս քան զմերոյս մեծի բառարանի կարծեմ, իցեն իբրև 4500 կամ 5000 բառք նորագիւտք ի նմա, զի իմ 4200 բառս նշանակեալ է անտի յիմում Առձեռն օրինակիս>>⁹⁹:

Այսպիսով, ստացվում է այնպես, որ բառարանին նվիրված առաջին իսկ հոդվածը (մինչ այդ ասված՝ ճառը) բանասիրական առումով բավականին մանրամասն է, բառագիտական գնահատության մեջ՝ բարձր, երախտիք է հեղինակի տասնամյակների աշխատանքը, և դա հետագա ուսումնասիրողների կողմից միշտ հաշվի է առնվում¹⁰⁰:

19-րդ դ. 70-ական թթ. վերջում լույս է տեսնում Ն. Բյուզանդացու մի աշխատությունը, որում, ի թիվս այլ հեղինակների երկերի (պատմագրական, թարգմանական, քերականական,

⁹⁷ Նույն տեղում, էջ 93:

⁹⁸ Նույն տեղում, էջ 94:

⁹⁹ Նույն տեղում, էջ 95:

¹⁰⁰ Ուշադրության է արժանի նաև այն, որ հետագայում՝ Ալիշանը հայերեն բուսանուններին անդրադառնալիս նկատի է ունեցել նաև Ռոշքայի բառարանի նյութերը: Հմմտ. Հ. Ղ. Ալիշան, Հայբուսակ, հայկական բուսաբառութիւն, Վենետիկ, 1895: Տե՛ս նաև Հ. Հ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 144: ,

այլն բառարան և այլն), մի քանի բառի բնագրային ճշգրտման բերումով խոսվում է նաև Ռոշքայի այս բառարանի մեջ տեղ գտած «անճշտությունների» մասին¹⁰¹:

Այդ բառերն են՝ *շերամ* (ուղղելի՝ *շերաս*), *անխալատ* (ուղղելի՝ *անխալատ*), ինչպես նաև՝ *աղբղբուկ*, *ամար*, *բաստեռն*, *բլիթեն*, *գետնախնձոր*, *գոյգոստատ*, *խարի*, *կոյշ*, *շագանակ*, *քերքէշ*:

Ի՞նչ նկատի ունի Բյուզանդացին:

1) Ռոշքայի բառարանում, ինչպես նշում է Բուզանդացին, բերված է *շերամ*, հետևյալ ձևակերպմամբ. նախ՝ «*Շերամ*. որդն որ գապիրշում գործէ. լտ. Bombyx. *Շերամ* առնէ գապիրշում. Աշխ., լա>>», այնուհետև՝ «Ապրէշ, որդն փոքրիկ յորմէ ի վեց ամիսս լինի *շերամն*, որ է ապրիշմագործ ճճին, լտ. Necydalus. Յապրիշէ լինի *շերամն*. Քաղ.»¹⁰²: Նկատի ունենալով իր ձեռքի տակ եղած տվյալները՝ Բարսեղ Կեսարացու «Վեցորեայք»-ի մի բնագիրը, այլև, ինչպես ինքն է գրում, Անտոնյան հայրերի մի ձեռագիրը՝ Բյուզանդացին առաջարկում է բառն ուղղել *շերաս* ձևով՝ ըստ հետևյալ գործածության. «*Քանզի* յայնմ զեռնոյ որ կոչի *շերաս*, այսինքն կերպասաբեր, գանձէ զվաստակս նոցա ի հանդերձս կակուղս և ի սպաս ազնուական» (Բարս., Ը, էջ 177): Այս ուղղումը համաձայնեցվում է նաև «*Նոր հայկազյան բառարանի*» հետ, որում ևս *շերաս* է, որ «*ըստ յետնոց կոչուի շերամ*» (ՆՀԲ, հ. 2): Այսուհանդերձ Բյուզանդացին հարցի վերջնական լուծումը թողնում է այնմ, որ «*Բարսղի Վեցորեից հին ձեռագրաց մեջ քննելու է այս բառիս գրութիունը*». այս վերջին նկատառումը, իրոք, տեղիք է տալիս այն ասելիքին, թե արդյո՞ք Ռոշքային հայտնի չի եղել նման մի «*հին ձեռագիր*»:

2) Բուզանդացին գտնում է, որ Խորենացու «*Պատմության*» մեջ գործածված *անխալատ գէտք* («*առանց խալամի կամ առանց գլխու մազերը*») կապակցության առաջին բաղադրիչի դեպքում Ռոշքան «*մ եւ տ նշանագրաց նմանութենէն խաբվելով, իւր Հայերէն-Լատիներէն բառարանին մեջ Խորենացւոյն անխալատ բառը կը կարդայ անխալատ, եւ կը մեկնէ. «Անխալատ. Անսխալ, որ ոչ ունի զխալատ (իմա՛ տողատակին նշվում է՝ «արաբերէն ղալաթ բառն է, որ կը նշանակէ սխալ, վրիպակ»*. - Վ.Հ.). անխափան, լտ. Inerrans, infallibilis»¹⁰³: Նման ուղղում առաջարկելու հիմք է համարվում, օրինակ, Ք.Պատկանյանի՝ Սեբեոսի

¹⁰¹ Տե՛ս ն. *Բիւզանդացի*, նշվ. աշխ., էջ 13-14, 104-105, 110-126: Հմմտ. Հ. Հ. Ոսկեան, նշվ. աշխ., էջ 144:

¹⁰² Ն. *Բիւզանդացի*, նշվ. աշխ., էջ 13:

¹⁰³ Ն. *Բիւզանդացի*, նշվ. աշխ., էջ 15:

<<Պատմության>> մեջ նույնպիսի մի սրբագրումը *Բագարաւ* (ուղղելի՛ *Բագարատ*), *Բիրաւ* (ուղղելի՛ *Բիրատ*) ձևերի:

3) Բյուզանդացին համամիտ է Ռոշքայի հետ, ըստ որի հայ. *աղբղբուկ* նշանակում է <<խոտ անուշահոտ պարտիզաց>> և ոչ թե <<աղտ. դիրտ կամ ծիրտ>>, որ դիտում են հետագա քննողները (Ջախջախյան, <<Առձեռն>>-ի հեղինակ, Հյուրմյուզյան և այլք)՝ տալով վերջնական բնորոշում. <<Աղբղբուկ բուսոյ մ'անուն է, և ոչ այլ ինչ>>: Գաղիանոսի <<Բժշկարան>>-ում գործածված այդ բառը Ռոշքան բացատրել և գուգահեռ է անցկացրել հետևյալ կերպ. <<Աղբղբուկ. -բկի, -կաւ. Խոտ անուշահոտ պարտիզաց, որ և վայրի նարդոս ասի, լտ. Phu, Valeriana. Գաղ. Բժ.>>¹⁰⁴:

4) Առարկություն կա *ամար* բառի հարցում: Ռոշքայի բառարանը տալիս է հետևյալ բացատրությունը. <<*Ամար*. հաւ ջրային գորշագոյն, սակաւ ինչ մեծագոյն քան զաղաւնին. լտ. Fulica, Larus. Մագ. Քեր. <<Որպէս ոչ եղելոյ լուղակաց, զամար հաւն կոչեն ամառ>>: Այդպէս են մեկնաբանում նաև Ստեփանոս Լեհացին, այլև հետագա գրեթե բոլոր բառարանները (ՆՀԲ, Ջախջախյան, <<Առձեռն>>): Բյուզանդացու ճշգրտումն այն է, որ <<*Ամար* ոչ է հաւ ջրային կամ թռչուն, այլ տեսակ մը ձուկ>>, ավելացնելով՝ <<Ստեփանոսի Կամենիցացոյ ի Մագիստրոսի Քերականէն յիշած վկայութիւնը այսպէս կը գրուի ի ստոյգ օրինակս Մագիստրոսի. <<Ոչ ունելով նոցա (Յունաց) ճէ՛ յորջորջեն զճուռակն ծուռակ, որպէս ոչ եղելոյ լողականացն որ ի մերում գաւառիս, նովին ձայնին կոչեն *զամարն*՝ ամառ>>¹⁰⁵:

5) Բավականին լայն քննարկման է առնված *բաստենն* բառը: Բերվում է Ռոշքայի բացատրությունը. <<*Բաստենն, ռան, ռամբ*, Յունաց. է փոքրիկ կառ ծածկեալ ի վերուստ, գոր ի վերայ երկուց ջորուց ոմանք դնեն. լտ. basterna, lectica. Պատմ. Հայ. Իրեն. Ե. <<Նախնեաց վեհքն *բաստռամբ* երբեմն շրջէին>>: Հետագա բառարանագրիչները, նաև <<քննասերները>> բառը մեկնում են իբրև <<դեսպակ կամ կուպա (լատ. culia)>>, <<գահաւորակ (ֆրանս. litière)>>, <<կակուղ և փափուկ նստարան (իտալ. canape, sofa)>>, <<բազմոց (ֆրանս. tapis)>> և այլն: Բյուզանդացին, ոչ անկախ Անտոնի Ռիչի բառարանի (<<Dictionnaire des Antiquites romaines et grecque>>) տվյալից, գտնում է, որ <<*Բաստենն* կը նշանակէ տեսակ մը գահաւորակ կամ դեսպակ Գ դարու, որու կը լծուէին ջորիներ, լտ. basterna>>, և համամիտ է ոչ միայն Ռոշքայի, այլև <<Բառք քերթողական>>-ի բացատրությանը, որին հաջորդում է այն, թե միջին դարերում Ֆրանսիայում *բաստենն*-ը (ֆրանս. basterne < լատ. basterna) ինչի է ծառայել,

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 104-105:

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 105-106:

այդպես նաև հայ իրականության մեջ (հմմտ. Ոսկեբերան՝ «և զոսկեհուռ նուարտանսն զբաստեռամբն տարածանէ», Եղիշե՝ «գրգեալք և գգուեալք էին յիրաքանչիւր բաստեռունս և ի գահաւորակս»)՝ նկատելով, որ «Ոսկեբերանի և Եղիշեի վկայութեանց մէջ բաստենն յայտնապէս դեսպակ կամ կառք կը նշանակէ և ոչ թէ բազմոց, canapé կամ sofa»¹⁰⁶:

6) Ըստ Ռոշքայի՝ *բլիթէն* բառը նշանակում է «խոտ բժշկական, լատ. meliphylum, apiastrum»՝ հիմնված Գաղիանոսի բառացանկի վրա: Գրեթէ նույն կերպ են բացատրում հետագա բառարանները (ՆՀԲ, Ջախջախյան, «Առձեռն», Սր. Էմինյան): Այնինչ Բյուզանդացին գտնում է, որ «*Բլիթէն* է գղ. fenugrec կոչուած տունկն, որ հայերէն կ'ըսուի նաև *բլթենի*, հացհամեմ: Գաղիանոսի բառերուն մէջ կը գրուի. «Տեղիս. *Բլիթէն*». Տեղիս է յն. *դի չիս*, և լատ. telis կոչուած տնկոյն անունն, որու գղ. կ'ըսեն fenugrec», ընդ սմին տալով բառի՝ ՆՀԲ-ի ոչ ճիշտ մեկնաբանությունը և ավելացնելով, որ «*Բլիթենի* կը յիշուի Ամիրտովլաթի Անգիտաց անպէտ գրոց մէջ. «*Բլթենի*, որ է հացահամեմն , որ է հապափ ըլ սավտան»»¹⁰⁷:

7) Ըստ Բյուզանդացու՝ Ռոշքան *գետնախնձոր*-ը բացատրում է իբրև «Խոտ որ զհոտ խնձորոյ ունի, լատ. unedo, tuber, arbutum, chamaemelon. Գաղիանոսի բառք», իսկ ՀՀԲ-ն (հ. 2) ունի՝ «պտուղ ինչ ուտելի խորտաբորտ խնձորանման բուսեալ յարմատս աղտանման բուսոյ իրիք որ յաճախ լինի ի կողմանս Արգրումոյ. ոմկ. *գետնախնձոր*... ի հին բժշկարանս», իսկ ՆՀԲ-ն և «Առձեռն»-ն ունեն երկու՝ 1) «գղ. pomme de terre» և 2) «գղ. camomille» իմաստներով: Այնինչ, հմուտ բանասերը գտնում է, որ «*գետնախնձոր*, որ է բառական թարգմանութիւն յն. *խամէ միլոն* բառին (*խամէ՝* գետին, *միլոն՝* խնձոր) կը նշանակէ միայն գղ. camomille բուսած ծաղիկը, զոր հայերէն կը կոչենք նաև խնձորխոտ կամ երիցուկ. յոյնք *գետնի խնձոր* անուանած են երիցուկը՝ իւր ծաղկանց խնձորի հոտ ունենալուն պատճառաւ. գղ. camomille բառէն ալ յն. *խամէ միլոն*-ն է: Գաղիանոսի բառերուն մէջ ուր գրուած է. «Քամեմեդոն. *Գետնախնձոր*». camomille տունկը հասկնալու է, և ոչ թէ pomme de terre, որ Ամերիկայի յատուկ բոյս մ'է, որ Եւրոպա ԺԶ դարու մէջ մտած է, և կարծեմ թէ Գաղիանոսի անձանօթ էր և թէ իւր հայ թարգմանչին: Pomme de terre-ի կրնանք ըսել գետնախնձոր, բայց նոր առմամբ: Հետեւաբար այն բառարանք որ միայն նախնեաց բառերը և բառից նշանակութիւնքը կը յիշատակեն, պէտք չէ որ դնեն բառի մը այժմեան առումը, որմէ շփոթութիւնք կրնան առաջ

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 110-111:

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 111-112:

գալ>>¹⁰⁸: Ըստ այսմ՝ Ռոշքայի բառարանում *զեսնախնձոր*-ին տրված բացատրությունը հիմնված է նախնական իմաստ վրա, ուստի հավաստի է:

8) Ռոշքայի բառարանում *զազոստատ* բառը ճիշտ է մեկնաբանված է, թեև հետագա բառարանագիրները և ուրիշ հեղինակներ այն հասկացել են տարբեր իմաստներով: Բյուզանդացին դա ապացուցում է բավականին հմուտ ձևով, նախ՝ բերում է Ռոշքայի մեկնությունը. <<*Ձայզոստատ*. Ստեփանոս Կամենիցացի կը գրէ. <<*Ձիզոստատ*. Յունաց բառ. կշռապետ. առ հինսն էր, որ նախ քան զգտանիլն արծաթեայ և ոսկեայ դրամոցն, զպղինձ ի թռչակ զինուորաց կշռեր և հայեր զի մի խաբէութիւն ինչ ի դրամս լինէր. լտ. *libripens, zygostat*>>՝ նշելով նաև Խորենացու բնագրում տեղ գտած գործածությունը, այն է՝ <<Ընդ այն ժամանակս առաքեաց (Ադրիանոս) զօր ծանր զկողմամբ Ասորեստանեաց, և մերոյն Արտաշիսի հրամայեաց երթալ ի Պարսս հանդերձ իւրովք *զիզոստատօք*, զորոյ զհետ քարտուղարութեամբ լեալ այս այր, որ զայս պատմութիւնս ետ մեզ, հանդիպի Արտաշիսի ի Մարսս, ի Սոհունգ անուանեալ տեղուջ>> (Խոր., Բ, կ.): Այնուհետև՝ մանրամասնորեն մերժում է ոչ միայն Մխիթարյան հայրերի մեկնաբանությունը՝ տեղ գտած բառարաններում (ՆՀԲ, Ջախջախյան, <<Առձեռն>>), գործածված Բագրատունու ֆրանսերենի քերականության մեջ (Վեն., 1824, էջ 99) և <<Հայկ Դիզագն>> պոեմում (գլ. Զ, տող 743), այլև մյուս հեղինակների մոտ՝ Ամբ. Գալֆայանի <<Հայերեն-ֆրանսերեն բառարան>>-ում և այլն): Դրանից հետո Բուզանդացին հայտնում է հետևյալը. <<Ըստ իս՝ ուղիղ է Ստեփանոսի Կամենիցացույ տուած մեկնութիւնն, և սխալ միւս երեք բառարանացը: *Ձիզոստատ*՝ է բառ յոյն *զիզօստադիս*. կամ *զիզօստադիս*, որ կը նշանակէ՝ կշռող, *զիզօ՛ւ* բառէն որ է կշիռ: Նոյն է և լտ. *zygostata, zygostates*, զոր այսպէս կը մեկնէ Տիւ Գանժ իւր Միջին և ստորին լատիներէնի բառարանին մէջ (*Glossarium modiae et infimae latinitatis*)>>: Մերժվում է նաև Վ. Լանգլուայի՝ Խորենացու հիշյալ հատվածի մեջ բառի՝ <<*les nobles de sa garde*>> թարգմանությունը¹⁰⁹:

9) Բյուզանդացին անդրադառնում է նաև Ռոշքայի բառարանի մեկ այլ բառի. <<*Խարի*. Ստեփանոս Կամենիցացի կը գրէ. <<*Խարի*. խոտ նման լախանայի. ի թաւոտ տեղիս լինի, լտ. *anchusa, brenthia*. Գաղիանոսի բառք>>, որ ՆՀԲ-ի և <<Առձեռն>>-ի հեղինակները բառը բոլորովին սխալ ձևով են մեկնաբանում: Բանասերի եզրակացությունն այն է, որ <<... ուղիղ է Ստեփանոսի Կամենիցացույ տուած մեկնութիւնն, և բոլորովին անընդունելի Նոր Հայկագեան

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 112-113: Իր բացատրությունը հիմնավորելու համար համեմատում է. <<ինչպես որ *հրացան* անականէն ետքը չեն դներ *հրացան* գոյական, իբր գո, *fusil*, տճ. *թիւֆէք* և այլն, և այլն>>:

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 113-114:

և Առձեռն բառարանաց գրածը: Գաղիանոսի բառերուն մէջ կը կարդանք. <<Անկիւղա (կամ Անկիւրա). Խարի>>: Ի լրացումն ասվածի նշվում է նաև, որ Ռոշքայի նույն բառարանում կա նաև <<Շէկիսարի, -րոյ. խոտ որով կանայք զերեսս իւրեանց կարմիրս առնեն. լտ. Enchusa. Յակ. Ճառ. ԺԳ, Մի ըստ Եզաբելի շէկիսարի գդեմս այլագունել>>¹¹⁰:

10) Բավականին ընդարձակ քննվում է Ռոշքայի բառարանի, օրինակ, *կոյշ* բառը: <<Ստեփանոս Կամենիցացի կը գրէ. <<Կոյշ, կուշի, որովայնի շատ հոսումն, բայց առանց խոցման. լտ. diarchaea, Գաղիանոսի բառք>>: Նույն կերպ են բացատրում նաև ՆՀԲ-ն, Ջախջախյանը և <<Առձեռն>> բառարանը: Այնինչ, Բյուզանդացին սրբագրում է բառը, <<Ըստ իս՝ *կոլ* կամ *կոյլ* (և ոչ թէ *կոյշ*. 1 զիրն սխալմամբ 2 կարդացուած է՝ հղելով իր մէկ այլ աշխատության) է տեսակ մի որդ. Գաղիանոսի բառերուն մէջ կը գրուի. <<Դարիրէ. *կոյշ* (կարդա՛ *կոյլ*). Այս դարիրէ բառը Ստեփանոս Կամենիցացի և Նոր Հայկազեանն սխալմամբ կ'իմանան յունարէն *տիւ՛րրիս*, որով լուծումն որովայնի կը մեկնեն, բայց ԺԳ դարու մէջ գրուած բժշկարան մը կ'ըսէ. <<Դարահրէհ. *կոլ*>>, և Ամիրտովլաթ Ամասիացի հետեւեալ պատուական տեղեկութիւնը կու տայ մեզ իւր Անգիտաց անպէտս մատենին մէջ. <<Ջարարէհ, որ հայերն *կոլ* կու ըսեն>> և այլն: Իսկ վերջում նշում է, որ <<Արաբերէն լեզուին մէջ քննելով *դարիրէ*, *դարահրէհ* կամ *զարարէհ* բառը, կրնայ ստուգել հայերէն *կոլ* ըսուած որդի նշանակութիւնն>>¹¹¹:

11) Անդրադառնում է մէկ այլ բառի՝ կապված Ռոշքայի բառարանի հետ: <<Շագանակ: Ստեփանոս Կամենիցացի կը յիշէ զայս բառ յԱշխարհագրութենէ Մովսիսի Խորենացոյ, բայց չի դնէր նշանակութիւնը. յայտնի է որ տճ. *քէսթանէ* չի հասկնար, վասն զի առանձինն կը յիշատակէ իւր բառարանին մէջ *կաստանայ՝* պտուղ, *կաստանենի՝* ծառ, և *կաստանոց՝* կաստանենեաց ծառաստան>>, և բերվում են վկայություններ երեքի համար՝ առանձին-առանձին. 1. <<Կաստանայ. ծանօթ պտուղն, զոր արեւելեայք շահպալութ կոչեն, մեք՝ կաստանայ. ամենայն լեզուաւ բաց յԵբրայեցոցն կաստանայ ասի, լտ. castanea, balanus. <<Մի կերիցէ զկաստանայ մաղաստոն>> (Բժշկ.), 2. <<Կաստանենի, ծառ յորմէ կաստանայ պտուղն ելանէ, լտ. castanea. <<Ընդ ծմակաւ կաստանենոյն նստեալ>> (Քաղ.), 3. <<Կաստանոց. Տեղի կաստանենեօք տնկեալ. լտ. castanetum. <<Ի կաստանոցն երթեալ իսաղան, իբր>> (Տաղ.): Բյուզանդացին նշում է նաև Միսիթարյան հայրերի բառարաններում և առանձին երկերում բացատրված կամ գործածված ոչ միայն շագանակ, այլ նաև *շագանակ*, *շաղգանակ*,

¹¹⁰ Նույն տեղում, էջ 117:

¹¹¹ Նույն տեղում, էջ 117-119:

շաղղանակ ձևերը՝ համարելով ոչ հավաստի կազմություններ, և գրում է հետևյալը. «<Ըստ իս՝ անվաւեր է թե՛ շագանակ ընթերցուածն և թե՛ քէսթանէ-ի նշանակութիւնն. հարազատ բառն է ի վերոգրեալ վկայութեան Աշխարհագրութեան Խորենացոյն ըստ ընտրելագոյն ձեռագրաց թուի շահղանակ կամ շահղնակ, որոյ մերձաւոր է ձայնի, և թերևս նշանակութեամբ, պարսկերէն շահտանէ կոչուած պտուղն: Քէսթանէ-ի համար Ստորին հայերէնի մէջ սովորական եղած է ըսել օտար բառով շահպալութ, կամ կաստանայ՝ ինչպէս տեսանք ի վեր անդր ի վկայութիւնս Ստեփանոսի Կամենիցացոյ, որ ունի նաեւ կաստանենի, կաստանոց. նոյնպէս ի գիրս Վաստակոց կը գտնենք կաստանայ, և ծառն՝ կաստանայի կամ կաստանի>>¹¹² :

12) Բյուզանդացին գտնում է, որ հայ. քերքէշ բառը սխալ է հասկացվել թե՛ Ռոշքայի և թե՛ հետագա մյուս բառարաններում. «<Ստեփանոս Կամենիցացի կը գրէ. «<Քերքէշ, -քիշի, -շաւ, որ անուշահոտ արմատս ունի, բայց կծուս, ի ճախինս լինի, դեղ է սրտի, լտ. acorum, acorus. Գաղիանոսի բառք: Սխալին որ զկեղն քերքէշ մեկնեն, զի քերքէշիլ բայ է>>¹¹³: Եվ հայտնում է հետևյալը. «<Ըստ իս՝ կը սխալին ամենայն բառարանք. քերքէշ է տեսակ մը վերք կամ կեղ երեսաց և գլխու. յն. ախո՛ռ, լտ. achores, իտ. a՛cori, գղ. achores, տճ. րուֆեա>>, այլն՝ «<Ստեփանոս Կամենիցացի, և ըստ նմանէ՝ Նոր հայկագեանն և միւս բառարանք փոխանակ իմանալու լտ. achores կոչուած կեղը, կ'իմանան լտ. acorum կամ acorus բոյսը, որով քերքէշ և բալխ կամ բալխտակ կ'ըլլան նոյնանշան: Քերքէշ կը գտնուի նաեւ ի գիրս Երեմիա Մեղրեցոյ. «<Կեղ և խաղաւարտն. քերքէշ խոցն է, որ եռացուցանէ և մորմոքեցուցանէ զմարմինն>>¹¹⁴:

Ռոշքայի ձեռագիր բառարանի մատենագիտությունը, ինչպէս վերը նշեցինք, կազմել է հ. Շ. Տաշյանը՝ մանրամասն տեղեկություններով, որոնցից մի քանիսին, թերևս հիմնականին, կարելի է անդրադառնալ ըստ այդմ:

ա)Նախ այն, որ Ռոշքան բառարանի մէջ որևէ կերպ չի նշում իր անունը՝ իբրև հեղինակ: Այս առումով Տաշյանը գրում է. «<Ինչպէս կը տեսնուի ձեռագրիս մէջ ո՛չ գրութեան տարին եւ ո՛չ ուրիշ տեղեկութիւն կը գտնենք Բառագրքիս վրայ հեղինակին, այսինքն Ստեփանոս Լեհացոյ Նամակաց մէջ, որ կը գտնուի թիւ 266 (հին թիւ 7Բ) ձեռագրին՝ Ստեփանոսի Ժամանակագրութեան վերջը>>¹¹⁵:

¹¹² Նույն տեղում, էջ 119-121:

¹¹³ Նույն տեղում, էջ 124:

¹¹⁴ Նույն տեղում, էջ 124-125:

¹¹⁵ Նույն տեղում: Ի դեպ՝ Ռոշքան նամակներից մեկում ինքն է բառարանը կոչում՝ «<Գանձ հայոց լեզուին>>:

բ) Բառարանը ինքնագիր է, գրվել է 1730-1731 թթ., տառատեսակը՝ նորագույն նոտրգիր, կանոնավոր է և դյուրընթեռնելի: Բառահոդվածների յուրաքանչյուր գլխաբառերի առաջին գիրը մեծատառ (գլխագիր) է: Բառարանն ունի երկու մաս, Ա մասը՝ հայերեն-լատիներեն, պարունակում է 943 էջ, գրիչ՝ «նույն ինքն Ստեփանոս Ռոշքա», գրվել է Ստանիսլավում, իսկ Բ մասը՝ 336 էջ, հիշատակարան չունի¹¹⁶: «Մատենա է «Գանձ Հայոց լեզուի կամ Բառարան Ստեփանեան» Ստեփանոսի Ստեփանյան Ռոշքա Լեհացոյ բառգիրքն է իւր իսկ ձեռքէն՝ ամբողջը կանոնաւորապէս գրուած, բայց շատ տեղեր յետոյ յաւելուածներ ու սրբագրութիւններ ըրած կա՛մ լուսանցքի վրայ եւ կա՛մ բազմաթիւ թղթիկներով որ կպցուած են իրենց տեղը: Երկմասնեայ է Բառագիրքս»¹¹⁷: Նշվեց, որ առաջին մասը պարունակում է 1-943 էջերը՝ «Բառարան հայերեն-լատիներեն»»: Հեղինակը օգտագործել է հայ մատենագրական երկերի, մանավանդ Ս. Գրքի հայերեն թարգմանության համապատասխան օրինակները՝ «եւ երբեմն ուրիշ տեղեկութիւններ տալով»¹¹⁸:

գ) Ներկայացվում են բառարանի ներքին բաղադրիչները՝ ըստ բառահոդվածի կառուցվածքի, բացատրությունների, համապատասխան բնագրային վկայությունների, դրանց համառոտագրման սկզբունքի: Այս հարցում, իհարկե, Հ. Տաշյանը հանդես է բերում ժամանակի մատենագիտական տեսության ներհուն իմացություն, գործադրման մեծ հմտություն և այլն: Իբրև բառարանային նմուշ ձեռագրացուցակում դրված է *Ա* տառի բառահոդվածը, որն էլ հարկ ենք համարում բերել ամբողջությամբ՝ պատկերացում տալու առհասարակ բառարանի կամման սկզբունքների և մանրամասնության վերաբերյալ. «Կը սկսի՝ էջ 1ա. «Այբ. իբր՝ աբբայ, որ է հայր՝ զի է առջին ձայնաւոր գիր ամենայն լեզուաց: ի թիւս արժէ մի (մէկ) 1: Ի նշանագիրս այսպէս գծեալ ա՝ նշանակէ տասն հազար: Շիք (= Շիրակացի): // Ա. եղեալ ի մէջ նոյնագոյ ածականաց զանուն գերադրական առնէ, որպէս մեծամեծ, չարաչար: // Ա. Նոտր կամ բոլոր գրեալ է նշան Ամենասուրբ Երրորդութեան. Կլ. Յիսուս. Այբն առաջին ըզքեզ տղայ... Երրորդութեան մերձակայ, լինիս երիւք ստեղամբք նորա: - Ա. մինչ է նախադրութիւն բաղադրեալ նշանակէ առանց, ոչ, in, im, non. որպէս ակամայ, ոչ կամայ: Ածուիս, առանց ծխոյ. բայց իբր միշտ առնու զգիրսն *ւ, ն, պ*. որպէս Ամբիծ, Անարատ, ապերախտ եւ ա. // Եւս է միջարկութիւն զարմանալոյ եւ ցասնոյ. *ո՞, ո՞վ, օ՞, eho, Մէսր. Պատ. Ե. Ա*՝ շուն այդպէս խօսիս

¹¹⁶ «Յուցակ Հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեան ի Վիեննա», էջ 22: Հմտ. «Ստեփանոս Ռոշքա ծնած է ի Կամենից Բոտոլիոյ. Յամի 1670 մարտ 28, եւ վախճանեալ յամին 1739 Հոկտ. 31, ինչպէս նշանակուած է ի գիրս մեռելոց Սղանիսլավ քաղաքի»¹¹⁶:

¹¹⁷ Նույն տեղում:

¹¹⁸ Նույն տեղում:

Բազմավեպի մեջ (1852, էջ 86 եւն) սա վերնագրով. <<Տեսու-//թին ի Գանձ լեզուին Հայոց կամ Ստեփանեան Բառարան: -Ամբողջն նաեւ այսօր հրատարակութեան արժանի գործք մըն է>>¹²²:

Մատենագիտական գնահատության առումով Տաշյանը ուշադրություն է դարձնում նաև այն հանգամանքին, որ բառարանի հեղինակը լավ գիտի իր ստեղծածի արժեքը, որ այն ավելի կատարյալ աշխատանք է, քան նույն ժամանակում նման բառարան կազմող ուրիշներինը: Այսպես, բերվում է Ռոշքայի նամակներից մեկը, որում հեղինակը գրում է. <<Եւ ոչ զմի բառ թարց վկայութեան դնեմ. զբառսն ըստ իսկական նշանակութեանց եւ ստուգաբանութեան նոցին մեկնեմ, առագրելով եւ գլատինականն վասն թարգմանութեան>>, այնուհետև՝ <<Արդ՝ ով որ էւ իցէ, գովելի արդեօք, այն չեւեպի Մաղաքիասն, որ ԺԸ. տարիս ցայժմ ի վերայ բառարանին իւրոյ մաշեաց, ասեմ թէ էւ զհազար գլուխս ունիցի, ոչ կարէ զկատարեալ բառարանս շինել, եթէ ոչ հիմնարար տեղեակ իցէ Յունաց եւ Լատինացոց լեզուին, եւ զԵբրայեցոյն եւս զմեկնութիւնն ունիցի, որոց ամենեցուն բազում բառք գտանին յԱստուածաշունչն, եւ յայլ գրեանս Հայոց. բաց յայսցանէ պիտոյ է գիտել եւ զփիլիսոփայութիւնն, զԱստուածաբանութիւն եւ զայլ գիտութիւնս, ապա թէ ոչ զիա՞րդ կարասցէ մեկնել, զոր ինքն ոչ հասկանայ: Քանիք եղեն որք ի ձեռս առին զգործս զայս, բայց վասն պակասութեան գրեանցն Հայոց, եւ օտար լեզուացն անտեղեակութեան ի բաց թողին>>¹²³:

զ) Այնուամենայնիվ, նկատվում է, որ բառարանի Ա և Բ մասերը, թեկուզ ըստ ծավալի առումով, իրար հավասար չեն, Բ մասը մի տեսակ կազմված է Ա մասի հենքի վրա. <<Բ մասն, էջ 1-336. Բառարան լատիներէն-հայերէն: Այս մասն աւելի համառօտ շինուած է՝ իբր լրացումն Առաջին մասի>>¹²⁴:

է) Տաշյանն անդրադառնում է նաև բառարանի հեղինակի այն մտահոգ փորձերին, որոնք ուղղված են եղել հրատարակության գործը իրականացնելուն, որն էլ չի պսակվել որևէ հաջողությամբ: Տաշյանը, հենվելով Ռոշքայի այդ նպատակով գրված նամակների վրա, գրում է. <<Ասկէ յայտնի է որ Ստեփանոս ԺԸ դարուն սկիզբները հիմ դրած է Բառգրքին, վերջնական օրինակը գրած է 1730ին (երբ Դեկտեմբերին Տիւն գիրն հասցուցած էր) եւ աւարտած 1731

¹²² Նույն տեղում, էջ 22-23:

¹²³ Նույն տեղում: Տե՛ս նաև *Հ. Հ. Ոսկեան*, նշվ. աշխ., էջ 143:

¹²⁴ Նույն տեղում, էջ 23:

Հոկտեմբերին: Մեր այս ձեռագիրն Ստեփանոսի իսկական եւ վերջին ձեռքն է, ինչպէս յայտնի է նաեւ գրէն, որ նույն Տարեգրութեան եւ Նամակաց պատճէններու (թիւ 268) գրին հետ>>¹²⁵:

Տաշյանը ևս անդրադառնում է այն իրողությանը, որ ձեռագիր բառարանի մի օրինակը ուղարկվում է Վենետիկ՝ տեղում տպագրության համար, որն այդպէս էլ չի իրականանում. <<Գրագրի մը ձեռք մաքուր օրինակ մ'ալ գրուած է Բառագրքէն, եւ կ'ենթադրենք՝ խաւրուած Վենետիկ: Այս վերջնական մաքուր օրինակն անցած է յետոյ Մեծ Հարց Անտոնեանց ձեռքն ի Հռոմ, որչափ մեզ ծանօթ է, եւ այժմ կը գտնուի ի Կ.Պոլիս նոյն Հարց մատենադարանին մէջ՝ միաձայլ երեքհատոր գրութիւն մ'որուն համար է անշուշտ Ստեփանոսի վերը յիշատակածը թէ Բառգիրքն 230 <<տապաղայ>> է: Ասկէ մասնական նոր օրինակութիւն մը կայ, որչափ գիտենք, ի Վենետիկ. (հմմտ. այս մասին նաեւ Բազմավէպի վերոյիշեալ յօդուածը 1952, էջ 86+ եւն)>>¹²⁶:

Տաշյանի ձեռագրացուցակի մատենագիտական տվյալները բավարար պատկերացում են տալիս ձեռագիր բառարանի թե՛ արտաքին հանգամանքների, թե՛ բառահոդվածների բառարանային մշակման առանձնահատկությունների մասին: Այդ տվյալները հետագայում օգտագործել են այլ ուսումնասիրողներ:

Ս. Ղազարի Հայկական ճեմարանի մեջ Ռոշքայի բառարանի թեմայով բանախոսություն է ունենում հ. Ս. Ճանաշյանը, որում ուշադրության առարկա են մի շարք հարցեր՝ մեծ մասամբ ոչ այնան նոր (հեղինակի կենսագրությանը, բառարանը գրելու ժամանակին, տպագրութեան մտահոգությանը, բառարանի նկարագրությանը, բնագրի ընդօրինակությանը, Ալիշանի գնահատությանը վերաբերող և այլն), նոր են երկուսը՝ Հին և Նոր հայկազյան բառարանների հետ համեմատությունը և <<Ռոշքեանի եզականութիւնները>> (իմա՛ տարբերությունները), որոնք բառարանագիտական արժևորման տեսանկյունից սույն հոդվածի ամենաուշագրավ մասն է¹²⁷:

ա) Կենսագրականի հետ կապված, օրինակ, ճշգրտվում է Աճառյանի մի վրիպումը. Ռոշքայի հայրը շատ վաղ է մահացել՝ զավակի ծնունդից 5-6 ամիս առաջ, ուստի մայրը հոր անունը տվել է որդուն (*տե՛ս հ. Յ. Տաշյան, Ձեռագրացուցակ*)¹²⁸:

բ) 1731 թ. օգոստոսի 3-ին Առաքել վարդապետին ուղղված նամակում Ռոշքան գրում է. <<Յուսալով Տերամբ և զբոլոն Փիլիսոփայութիւնն գրել, յետ աւարտելոյս *զԲառարանն իմ, Գանձ*

¹²⁵ Նույն տեղում, էջ 24:

¹²⁶ Նույն տեղում:

¹²⁷ <<Բազմավէպ>> (ամսագիր), 1955, թ. 6-7, էջ 129-138, թ. 8-10, էջ 185-191, թ. 11-12, էջ 249-255:

¹²⁸ <<Բազմավէպ>> (ամսագիր), 1885, 7-9: *Հ. Աճառյան*, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան,

Հայոց լեզուին մակագրեալ, գոր ի գալ Հոկտեմբերի ամսոյս յուսամ վճարել, զի պատրաստի ունիմ զամենայն բառս, և այժմ աւարտեմ զգիրն *Տիւն: Քառասուն ամք են* յորմէ հետէ սկսայ գրել զսայ, բայց ոչ շարունակաբար, զի երբեմն իբր հինգ ամս, երբեմն աւելի կամ պակաս, գոյով իմ այլովք պարապեալ, ի ձեռս ոչ առի>>¹²⁹ : Այնուհետև, Ռոշքան նամակներից մեկում <<...կը շեշտէ իր ծրագրին կարելոր մէկ պայմանը. բառերուն պատմութիւնը ընել, բառերը խօսեցնել անցեալով: Յատուկ ճիգ թափած է իւրաքանչիւր բառին իմաստը ճշտող և միանգամայն զայն հաստատող վկայութիւն մը կցել բառին բացատրութեան: Նախնեաց գործերը հետեւաբար նկատի ունեցած է, և փառք կու տայ Աստուծոյ որ իր գաղթավայրին մէջ ալ բախտը ունեցած է ձեռքին տակ ունենալու նախնեաց գործեր: Յիշատակած չէ թէ ո՛ր գործերը ձեռքին տակ ունենալու բախտաւորութիւնն ունեցած է, բայց կ'երեւի թէ ըստ բաւականի ճոխ եղած է, քանի որ Սոյ իսկ թագաւորներու զանձարանէն Լեհաստան տարուած գրքերու գոհացուցիչ թիւ մը իր տրամադրութեան տակ եղած է: Կիլիկիայէն գաղթող հայեր, գուցէ և ազնուականներ, շատ բան կրցած են տանիլ հետերնին, որոնք կը յիշատակուին իրմէ իր գործին մէջ, սակայն յայտնի չեն բանասիրութեան>>¹³⁰:

գ) Տարիների աշխատանքը տպագրված տեսնելու հույսը երբևէ չի լքել հեղինակին, և ինչպես հ. Մ. Ճանաչյանն է գրում, <<տպագրութիւնը, ուրիշ կարելոր հարց մը, ամենէն աւելի մտհոգիչ կ'էտն է իրեն համար>>, ուստի նախաձեռնում է մի օրինակ ուղարկել է Վենետիկ՝ տպագրության, սակայն պահանջել են, իբրև ծախս, <<աւելի քան Ռ (=1000) ոսկիք>> ¹³¹: Ռոշքան երկու անգամ դիմում է գեր. Աբրահամ վարդապետին՝ 1732 թ. հուլիսին և 1733 թ. յուլիսի 15-ին՝ <<բացատրելով իր ահաւոր դժուարութիւնները, և փափաք կը յայտնէ որ գէթ Էջմիածնի մէջ տպուի իր գործը>>¹³²: Բառարանի տպագրության չի լուծվում, իսկ ձեռագիրն ընդօրինակելու փորձեր լինում են: Ըստ Ճանաչյանի՝ <<Տէր Գրիգոր Ռոմանշքի 1842, Յուլիս 2-ին Ս.Ղազար բերած է հետը Ստեփանեան բառարանին բնագիրը Իլովէն: Մխիթարեան վարդապետները, թոյլտուութեամբ բերողին, կը լուծեն հատորները և բաժանելով մասերու, հաւաքական աշխատութեամբ մը մէկ ամսուան ընթացքին կ'օրինակեն զայն և յետոյ վերստին կազմելով բնագիր հատորը՝ կը վերադարձնեն զայն Տէր Գրիգոր Ռոմանշքիին, որ կը տանի հետը: Այդ բնագիրն է որ յետոյ ժառանգութիւն կ'իյնայ Վիեննայի Մխիթարեան

¹²⁹ Հ.Մ.Ճանաչեան, նշվ. աշխ., էջ 132:

¹³⁰ Նույն տեղում, էջ 133:

¹³¹ Նույն տեղում, էջ 134: Տե՛ս նաև Հ. Հ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 147:

¹³² Նույն տեղում:

հայրերուն»¹³³: Ի դեպ՝ 1842 թ. մասնատված և արտագրված այս բառարանից, արդյո՞ք քաղված չեն բառեր, որոնք կարող էին ներմուծվել «Առձեռն» բառարանի մեջ, որ հետագայում հայտնի է, որ 5000 բառով ավելին է, քան ՆՀԲ-ն: Մա, կարծում ենք, առանձին ուսումնասիրության թեմա է: Գ. վ. Ճելալյանը, «Առձեռնի» կազմողը գրքի «Գիտելիք»-ում գրել է. «Ի գլուխ երկրորդի տպագրութեան Առձեռն բառագրոց Հայկազնեան լեզուիս զայս ներքի հարկէն ասեմք, որ ինչ նշմարեալ էին ցարդ ի մատենիդ ուղղելիք՝ փոյթ յանձին կալաք կարևոր քննութեամբ ուղղել. և որ ինչ անկան ի ձեռս երկասիրութիւնք նախնեաց նորագիւտք, կամ որ խուսափեալն էր յաչաց ի հինսն, յաւելաք բառս աւելի քան զհինգ հազար, և ոճս բանից բազումս»¹³⁴:

դ) Ալիշանը Վենետիկ բերված ձեռագրի արտագրության ժամանակ պաշտոնավարում է Ռաֆայելյան վարժարանում, և, ըստ Ճանաչյանի, միայն 1850 թ. է մոտիկից ծանոթանում այդ գործին, մինչ այդ «լսած է դիտողութիւններ օրինակողներէն», թե՛ բերված վկայությունները չեն արդարանում գոյություն ունեցող աղբյուրներով, հույն կամ լատին գործերու թարգմանություններից առնված վկայությունները կեղծ են թվում, կամ էլ ինքն է թարգմանել և հարմարեցրել, ստուգաբանություններն իր մտքի արդյունքն են, ընդ որում անհավանական լուծումներով: Կարծում ենք, որ սրանք ոչ լուրջ, ընթացիկ առարկություններ են. ինչպես վերը նշեցինք, Ալիշանը մեկ առ մեկ պատասխանել է այդ դիտողություններին՝ մերժելով դրանք, տալով իրական բացատրություններ և գնահատություն: Այս առումով Ճանաչյանը գրում է, որ Ալիշանի «քննութեան շարժառիթը եղած է անտիպ բառերու (որոնք կը պակսին մեր հրատարակութեանց մեջ) հաւաքածոյ մը պատրաստել, և այդ առթիւ բնականաբար ծայրէ ծայր կարդացած է Ռոշքեանի Բառարանը, հավաքելով անտիպ բառերը և պատմական հատուածները այն գործերուն, որոնց բնագիրները կը պակսին: Աւարտելով իր քննութիւնը՝ կը հաստատէ թէ այդ գործը զուրկ չէ արժէքէ, գովելի վաստակ մըն է մանաւանդ»¹³⁵:

Այժմ առավել ուշագրավ երկու հարցերի մասին (տե՛ս հոդված՝ էջ 185-191, 249-255):

ա) Հոդվածի էջ 186-188-ում երեք սյունակով համեմատված են բառական օրիակներ. Առաջին՝ Ռոշքայի սյունակում բերվում են *արբանայ, արեղանոց, արբայ, ազեկալ, ազոնավոր, ազոնարան, ազուռելի, ազուռեմ, այգորելի* («սխալ է. տե՛ս ազուռելի»), *լալագնարար,*

¹³³ Նույն տեղում, էջ 125:

¹³⁴ Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, 2-րդ տպ., Վենետիկ, 1865: Տե՛ս նաև Գ Գասպարյան, նշվ. աշխ., էջ 130-132:

¹³⁵ Նույն տեղում, էջ 136:

լալականութիւն, լալակցիւմ, լայնաբաց, լայնագին, լաշիւմ, լապատ բառերը, որ ունի միայն Ռոշքայի բառարանը, երկրորդ՝ Մխիթար Աբբահոր սյունակում՝ *աբանոս, աբիոն, ազահակամ, ազահասիրտ, ազանովթ, ազոր, ազուցիկ, լազութիւն, լազուցանեմ, լազանի, լալօք, լափլիզող* բառերը, որ չունի Ռոշքայի բառարանը, իսկ երրորդ՝ Նոր հայկազյանի սյունակում՝ *աբիոն, աբոն* կամ *արբոն, ազանովթ, ազարակային, ազարականալ, ազարակիկ, ազաւորեմ, ազետակ, ազեւորեմ, ազոնարար, ազոնիստայք, ազորանք, ազուռ, ազուցիկ* բառերը, որ չունի Ռոշքայի բառարանը և այլն¹³⁶: Համեմատական ցանկի հիման վրա արվում են եզրակացություններ, որոնցում ընդգծվում է այս կամ այն բառի բառային-բառագիտական արժեքը հայերենի ընդհանուր բառապաշարի համար. մասնավորապես անդրադարձ կա *լաստենի* <<մի ծառատեսակ>>, *լաստել* <<կազմել, պատրաստել>>, *լատրատել* <<հաչել>> բառերին, որոնք <<Նոր հայկազյան բառարանին>> են անցել Ռոշքայի բառարանից:

Իսկ թե ինչպիսին է Ռոշքայի բառարանի բառահոդվածի կառուցվածքը, բերենք հետևյալը օրինակը. <<ԼԱԼԱԿՅԻՄ, իս, ի միասին լամ. apploro. <<Լալակցին իրերօք, ողբակցին թաղծանօք>>. Տաղ. ննջ.>>, այսինքն՝ բերվում է գլխաբառը, կից նշվում են խոնարհման մյուս ձևերը, բացատրություն, լատ. համարժեքը, բնագրային օրիակը և աղբյուրը: Մեկ այլ օրինակ՝ <<ԼԱԼԱԳՆԱԲԱՐ. մկ. Flebiliter. <<Առ պաղատողս լալագնաբար, զգութ շարժեա՛ գորովաբար>>. Տաղ>> և այլն:

բ) Հոդվածի էջ 249-255-ում բնագրագիտական և բառագիտական վերլուծության են ենթարկվում վերը բերված բառերը: Նման տարբերությունները, մանավանդ Ռոշքայի բառարանի բառերը <<անտարակոյս կը կազմեն հայերենի հարստութիւնը, բայց մնացած են, գեթ մեծ մասը, անծանօթ>>, և թվարկվում են հետևյալները. *աժանութիւն, ալ* <<մթութիւն, դժոխք, խորք>> (որից՝ *ալական*), *ալերոտ, ալէբէկ, ալէլից, ախաւեղ, ականաբեր, ականազարդ, ականալից, ականեմ* <<հաչել>>, *աղեցաւ, բաստենն, գետնասարդ* <<(պարտեզի) խոտ>>, *գետնարմաւ, գթաւոր, գերբնական, գիշերաբեր, գիշերաշրջիկ, գիջակնութիւն* <<աչքի արցունկակալելը>>, *գիսակաւոր, գլխակոյս*:

Նման բառերի առկայությունը այս բառարանում և բացակայությունը մյուսներում, ինչ խոսք, ամենից առաջ հետևանք է գրավոր աղբյուրների տարբերության: Ուստի Ստեփանոս Ռոշքայի <<Գանձ հայոց լեզուի>> բառարանի սպառիչ քննությունը հայ բառարանագրության հետագա խնդիրներից մեկն է:

¹³⁶ Հ. Մ. Ճանաչեան, նշվ. աշխ., էջ 186:

ԵՐԵՄԻԱ ՄԵՂՐԵՑՈՒ «ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-Ը

Մի քանի առիթ ունեցել ենք խոսելու սույն բառարանի մասին, մանավանդ նրանում տեղ գտած որոշ բառերի մեկնաբանության կամ ստուգաբանության առիթով: Այդ բառերը մինչև վերջին ժամանակներս մնում էին չքննված:

«Բառգիրք հայոց»-ին տվյալ դեպքում տալիս ենք «կասկածելի և անստույգ» համարված որոշ բառերի, ինչպես նաև բնագրում առկա լատինաբան հայերենին բնորոշ ձևերի և գրաբարից տարբեր գրություն ունեցող բառաձևերի վերլուծությունը:

1. «*Կասկածելի և անստույգ*» բառերի մեկնություն: «Բառգիրք հայոց»-ի ձեռագիրը լույս է տեսել 17-րդ դ. վերջին տասնամյակում, Երեմիա Մեղրեցու ստեղծմամբ («արարեալ») և Սարգիս եպիսկոպոսի աշխատակցությամբ («աշխատասիրեալ»): Հայագիտական աշխատություններում կա՛մ որևէ հեղինակ չի նշվում (օր.՝ քննական բնագրի հրատարակման դեպքում), կա՛մ տրվում է միայն Երեմիա Մեղրեցու անունը¹³⁷: Գիրքը ուշադրության է արժանացել գրեթե միշտ: Շատ բառարանագիրներ ժամանակին այս կամ այն չափով օգտվել են «Բառգրքի» նյութերից¹³⁸: Անկախ նրա ծավալի, բացատրական մասի, տպագրական որակի և այլ հանգամանքների առնչությամբ եղած բնութագրերից՝ այն բնավ չի անտեսվել: Մխիթար աբբա Սեբաստացին, երբ ձեռնամուխ է լինում ծավալով աննախադեպ, բառարանագրական մշակման տեսանկյունից համապարփակ, ժամանակի եվրոպական բառարանագրության չափանիշներով կազմվող «Բառգիրք հայկազեան լեզուի» աշխատության ստեղծմանը, բարձր գնահատության է արժանացնում այդ բառարանը: Մխիթարյանները «Բառգիրք հայոց»-ի շատ բառահոդվածներ՝ *Հին բռ.* (= *Հին բառարան*) նշումով ներառել են իրենց բառարանի մեջ: Օրինակ՝ հայ. *անգեղոս* «հրեշտակ, պատգամավոր» բառը, որը փոխառություն է՝ հուն. *ἄγγελος* (լատ. *angelus*) (նույնը), վկայված է միայն «Բառգիրք հայոց»-ում, որից էլ վերցրել է «Հին հայկազյան բառգիրքը» (այլև հետագա բառարանները) և տվել բառի ճիշտ մեկնությունը¹³⁹: Հետագայում մի շարք

¹³⁷ Բառգիրք Հայոց, ի Յալիկոնայ, 1698, 2-րդ տպ.՝ Կ.Պոլիս, 1728: Հմմտ. Հ. Մ. Ամսլյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (V – XV դդ.), Երևան, 1966: *Նույնի՛* Հայ միջնադարյան բառարանագրությունը, Երևան., 2007: Գ. Կ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Երևան., 1968:

¹³⁸ Տե՛ս Մխիթար Սեբաստացի (*եւ աշակերտք*), Բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1749-1769: Գ. Աւետիքեան, *Խ. Միրսիլեան, Մ. Աւգերեան*, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837: Գ. Փեշտըմսլաճեան, Բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Կ.Պոլիս, 1844-1846: Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Երևան, 1971-1979:

¹³⁹ Հմմտ. Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 183:

<<դժվարին>> բառեր քննվեցին համեմատական-ստուգաբանական աշխատանքներում¹⁴⁰: Իսկ քննական բնագիրը լույս տեսնելուց հետո գրվեցին բոլորովին նոր ուսումնասիրություններ, որոնցում ուշադրության առարկա են նաև այդ բառարանում տեղ գտած անհասկանալի կամ անբացատրելի մնացած մի շարք բառեր¹⁴¹:

Հ. Աճառյանը <<Արմատական բառարանի>> առաջաբանում խիստ է խոսում Եր. Մեղրեցու <<Բառգիրք հայոց>>-ի մասին. <<Մանրամասն քննելուց յետոյ աշխատութիւնը, տեսայ, որ մեծագոյն մասամբ վրիպակների մի հաւաքածոյ է այն>>, և եզրակացնում է, որ <<պէտք է շատ զգուշութեամբ վերաբերուիլ սոյն բառագրքի հետ և նրա յիշած ձևերը իբր ճշմարտութիւն չընդունիլ: Այսպէս արի ես էլ և բառերը ուշադիր քննելուց յետոյ, եթէ կեղծ չգտայ, անցկացրի իմ բառարանի մէջ, այն էլ միշտ իբր կասկածելի և անստոյգ>>¹⁴²: Այդուհանդերձ, նա <<Բառգիրք հայոց>>-ի միջոցով մեզ հասած բառերը գրեթէ ամբողջովին ընդգրկել է բառարանի մէջ՝ միշտ նշելով՝ <<ունի միայն Բառ. երեւ.>>, կամ <<գիտէ միայն Բառ. երեւ. [=Բառգիրք Երեւմիայի]>>, անկախ նրանից, թէ ինչքանով են այդ բառերը քննված կամ ստուգաբանված:

Հ. Ն. Ակինյանը ժամանակին իր տարակուսանքն է հայտնել այդ մոտեցման առիթով¹⁴³: Իսկ Գ. Ջահուկյանը գրել է, որ <<Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանների ուսումնասիրությունը կարևոր նյութ է տալիս հայոց լեզվի պատմությանն ու ստուգաբանությանը: Այդ տեսակետից Հ. Ամալյանի <<Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները>> (Երևան, 1974) աշխատության, և ապա <<Բառգիրք հայոցի>> քննական բնագրի հրատարակության (Երևան, 1975) նշանակությունը շատ կարևոր է: Կարելի է ասել, որ Հ. Աճառյանի <<Հայերեն արմատական բառարանը>> մեծապես շահած կլիներ, եթէ նման աշխատանք կատարված լիներ նախքան այդ բառարանի հրատարակումը. շատ բառեր կճշգրտվեին և կստանային ավելի հավաստի մեկնաբանություն>>¹⁴⁴: Բառարանը

¹⁴⁰ Գ. Ա. *Капанцян*. Общие элементы между хеттским и армянским языками. Эриван, 1936: *Он же*. Историко-лингвистические работы: К начальной истории армян. Древняя Малая Азия, Ереван, 1956, էջ 329 - 408: *Նույնի*. Հայոց լեզվի պատմություն, Ե., 1961 և այլն:

¹⁴¹ Տե՛ս Գ. Բ. *Ջահուկյան*, Ստուգաբանություններ // <<Լրաբեր հասարակական գիտությունների>>, 1976, 12, էջ 41-51: Լ. Շ. *Հովհաննիսյան*, Բառաքննական նկատառումներ <<Բառգիրք հայոց>>-ի մէջ տեղ գտած մի քանի բառերի վերաբերյալ // <<Լրաբեր հասարակական գիտությունների>>, 2000, 2, էջ 213-221 և այլն:

¹⁴² Հ. *Աճառեան*, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 9-10:

¹⁴³ Հ. Ն. *Ակինեան*, Հայերեն արմատական բառարան // <<Հանդէս ամսօրեայ>> (ամսագիր), 1930, էջ 491:

¹⁴⁴ Գ. Բ. *Ջահուկյան*, նշվ. աշխ., էջ 41:

բարձր է գնահատել նաև վերջին տարիներին միջին հայերենի լավագույն ուսումնասիրող Ռ. Ղազարյանը¹⁴⁵:

Եվ ինչպես ցույց տվեցին հետագա աշխատանքները, <<Բառգիրք հայոց>>-ի կարևորությունը ավելի էական է դառնում հայերենի բառապաշարի ամբողջական վերհանման և նկարագրության համար. իրոք <<Ճշգրտվում և հավաստի մեկնաբանություն են ստանում>> մի քանի տասնյակից ավելի բառեր ու բառաձևեր:

Գ. Ղափանցյանը խեթերենի և հայերենի բառային զուգադիպումների համար օրինակներ է վերցնում Մեդրեցու բառարանից. *անգունել* (զուգահեռ խեթ. *kuš-* <<վճարել>>, *kusata* <<վճարել հարսի համար>>, *kušhahat* <<վճար, վարձ>>՝ ձևերին), *թոռուպ* <<ցնցոտի, վատ զգեստ>> (հմմտ. խեթ. *tarup(p)-* <<մանել, հյուսել, գործել>>), *հպիտ* (այլև *հտպիտ*, *հպտիլ* <<ծամածովել, խեղկատակի տալ>>) <<խեղկատակ, ծաղրածու. թեթևաբարո>> (փոքրասիական *Hepit* (*Hepat*, *Hipta* <<դիցանուն>>) և այլն:

<<Բառգիրք հայոց>>-ի քննական բնագրի ծանոթագրություններում, ինչպես նաև առանձին ուսումնասիրության մեջ Ամալյանը կատարում է բնագրային-բառաքննական մի շարք ճշգրտումներ, իսկ <<դժվար>> մեկնաբանվող, <<անհայտ ծագման>> բառերի ստուգաբանությունը, իր ձևակերպմամբ, թողնում է այդ բնագավառի մասնագետներին¹⁴⁶:

Է. Աղայանն անդադարձել է հետևյալ բառերին. *աղունք* (եզ. թ.՝ *աղն*) <<աղետ, եղեռն>> (հմմտ. *աղէտ* // *աղետ* <<փորձանք. պատուհաս>>, *աղճատ* <<խեղված, ոչնչացված>>, նաև *եղծ* <<ոչնչացում, հերքում>>) (< հե. **el-//ol-* <<փչացնել, ապականել. ոչնչացնել, կործանել>>), *արգատ* (< հ.-ե. **u(e)rad-* արմատի **urəd-* տարբերակից), *բողջ//բղջուն* (< հ.-ե. **bhel- // *bhōl-*)¹⁴⁷, (ըստ Աղայանի՝ *քանն-* // *քան-*) (< հ.-ե. **sue-* <<խոսել>>) և այլն¹⁴⁸:

Գ. Ջահուկյանը քննել է <<Բառգիրք հայոցի>> երեք տասնյակից ավելի բառեր, որոնք մասամբ ներկայացված են բառարանում. *աբբայ*, *ագդար*, *ագեկայ*, *առօթ*, *ասագ*, *աքսա*, *բանջար* (<<երածշտական մի գործիք>>), *բալիդ*, *դանդիոն*, *ետր* (նաև *ետրոնին*), *իւբիդէոս*, *լակոնիայ*, *խել*, *խեղակ*, *կոշնել* // *կոշնել*, *ճողոպուտ*, *մագիդոն*, *մաժառոս*, *ներացիկ*, *ոյագիոս*,

¹⁴⁵ Ռ. Ս. Ղազարյան, Ե. Մեդրեցու բառարանը և նրա աղբյուրը.- Ռ. Ս. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, էջ 5-17:

¹⁴⁶ <<Բառգիրք հայոց>>, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ս. Ամալյանի, Ե., 1975: Հ. Ս. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, Երևան, 2007:

¹⁴⁷ Ըստ Ջահուկյանի՝ ծագում է հե. **bholdhio* կամ **bholtio* ձևից: Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Ստուգաբանություններ // <<Պատմա-բանասիրական հանդես>>, 1965, 1, էջ 252:

¹⁴⁸ Է. Բ. Աղայան, Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974, էջ 17-18, 30-31, 153 և այլն:

պաժա, պարակղետուս, պեղագոս, պոսել, պօտփիւռիփօնոս, ջալամուկ, սալա, սիկիրա, սիւ, սիփիւնքա և այլն¹⁴⁹:

Լ. Հովհաննիսյանը քննել է երկուսուկէս տասնյակ բառեր. *ակադեմիական, աղու, այենակ, աշխուժուհի, աւիժ, քենդիկ, քրաշակ, գէաթ, ոմոզի, գրուակ, զաւօդ, մանի, յաւան, նամեճական, նեւանդակ, շիղշայք, ռափիկ, ռիմակալ, սիւ, ստնանաւորք, վաշին, վարագ, ումանակ, փիր, փսոր* և այլն¹⁵⁰:

<<Բառգիրք հայոց>>-ի որոշ բառերի անդրադարձել է Պ. Բեդիրյանը՝ իր հոդվածներից երկուսում քննության առնված բառերի¹⁵¹:

Անհայտ ծագման մի շարք բառեր քննվել են տողերիս հեղինակի հոդվածներից մի քանիսում, ի մի բերվել գրքում¹⁵²: Այստեղ սեղմ նշենք դրանցից մի քանիսը՝ ավելացնելով նորերը:

ա) *Աղանդումն* <<խելագարումն>> (< հե. *alyo- (*ailo-) ձևից. հմմտ. հուն. ἄλλος <<այլ, ուրիշ>>, լատ. alius (նույնը), գոթ. aljis (նույնը), հիբլ. aile (նույնը), կիմր. ail (նույնը) և այլն) [հմմտ. ՀԱԲ, 1971, էջ 168-169]:

բ) *Աղիփատոս* (նաև *ափիատոս*) <<հոփարձու>>, փոխառություն հուն. (դոր.) ἄλιβατος, այլև ἡλιβατος (<ήλι-βάτος <<դյուրանցանելի, հեշտ հաղթահարելի>>), <<բարձր, զառիվեր. վեր բարձրացած. բարձրուղեշ. խորը, անհատակ>> ձևից (ըստ Ջահուկյանի՝ հուն. ἄλιπητος ձևից, որը հնչյունապես անբասիր չէ [հմմտ. Дворецкий, 1958, էջ 79, 749]:

գ) *Աղտամուղտ* (*աղջամուղջ*) <<աղջամուղջ, խավար>> բառը կրկնավոր է *աւ* մասնիկի միջարկումով. կա այդ և նման միջամասնիկով կամ առանց միջամասնիկի բառերի երեք խումբ. 1) *-աւ-* (տարբերակ՝ *-ում-*) միջամասնիկով՝ *արհ-աւ-արհ-* (*արհ-աւ-արհ-անք, արհ-աւ-արհ-եւ* և այլն) <<անարգ, խոտելի>>, *աղխամաղխ* <<խառնիխուռն, խառը (իրեր)>>, *հեղձ-աւ-(ը)ղձ(ուկ)* (*հեղձ* <<խեղդվել>>) <<հեղձուցիչ>>, *աղամող* (*աղամողիլ* <<շեղվել, ծովել, խոտորվել>>), *այղումայղ* (հմմտ. *այլնայլ* <<զանազան, պեսպես, տարբեր>>) (< հե. *alio-), 2) -

¹⁴⁹ Գ. Բ. Ջահուկյան, Ստուգաբանություններ // <<Պատմա-բանասիրական հանդես>>, 1963, 4, էջ 85-98, 1965, 1, էջ 251-261, 1991, 2, էջ 36-44, 1996, 1-2, էջ 39-46: Նույնի, Ստուգաբանություններ // <<Լրաբեր հասարակական գիտությունների>>, 1976, 12, 41-51, 1979, 3, էջ 23-34, 1988, էջ 69-75: Նույնի, Ստուգաբանություններ // <<Բանբեր Երևանի համալսարանի>>, 1993, 2, էջ 22-30 և այլն:

¹⁵⁰ Լ. Շ. Հովհաննիսյան, *նշվ. աշխ.*, էջ 213-221:

¹⁵¹ Պ. Ս. Բեդիրյան, Ստուգաբանական վերլուծություններ // <<Տեղեկագիր>> (հասարակական գիտություններ), 1956, 7, էջ 39-48), Նույնի, Մի քանի ստուգաբանություններ // <<Պատմա-բանասիրական հանդես>>, 1962, 1, էջ 139-147:

¹⁵² Վ. Գ. Համբարձումյան, Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Երևան, 2012, էջ 113-168:

աւ- (տարբերակ՝ *-ել-*) միջամասնիկով՝ *աղ-աւ-աղ* (*աղ-աւ-աղ-ել*) <<փճացած, այլասերված, տկար>> (հնագոյն ձևը՝ *աղեւաղ*), *այլեւայլ* (*այլեւայլել*) <<տարբեր>> (< հե. **alio-*) (հմմտ. հուն. ἄλλος <<այլ, ուրիշ>>, լատ. *alius* <<այլ, ուրիշ>>, գոթ. *aljis* <<այլ, մեկ ուրիշ>> և այլն), 3) առանց որևէ միջամասնիկի. *աղջ-աղջ* <<մշուշ>>, *աղտ-աղտ(-ուկ)* <<աղուտ>>, *այլ-այլ* (*այլ-այլ-ել*) <<զանազան, պեսպես, տարբեր>>, *անդ-ունդ* <<անհատակ խորություն, խորք>> (հմմտ. *ունջ* <<տակը, խորքը, հատակ>>) և այլն¹⁵³:

դ) *Աճապել* բառը դրված է քննական բնագրի տողատակում (վկայված ձեռագրերից երկուսում), իսկ վերևում՝ *աճապարել* <<յառաջել, կամ հասանել>>, թերևս Աճառյանի հետևություններ, որը տեղին չէ [ԲՀ, 1975, էջ 13]: Ըստ Աճառյանի՝ *աճապարել* <<շտապել, արտորալ, ճեպել>>, որի <<աղաւաղեալ ձևն>> է *աճապել* <<հառաջել կամ հասանել>> [ՀԱԲ, 1971, էջ 138]: Ջահուկյանն ունի *աճ(ա)պ* <<զարմանք, զարմանալիք>>, նշում է ըստ Հյուբշմանի՝ փոխառյալ արաբ. *'aġab* (*'aġib*) ձևից [Ջահուկյան, 1987, էջ 393, այլև ՋՀՄԲ, էջ 40-41]: Ըստ այսմ կարելի է մտածել, որ *աճապել* (<*աճապ*) բառը ևս փոխառյալ է արաբ. *'aġab* <<(այստեղ) արդյոք, իրոք>> ձևից. հմմտ. (բրբռ.) *աջէք* <<զարմանք, ապշություն. չտեսնված>> (*Մուշ, Ալշ*. և այլն) [տե՛ս *Քոչոյան*, 1963, էջ 38, ՄՀԲ, 1987, էջ 36]:

ե) *Ամասայ* բառը կա երկու բառահոդվածով, հաջորդաբար բացատրված՝ <<ի ձեռն ալֆայ՝ հզօր կամ քաջ>> և <<ի ձեռն այինոյ՝ ժողովրդեան ընծայ>>, այլև *ամասարկովթ* <<բուրվառ>>, *ամասել* <<արկանել, քաշել>>, *ամասցես* <<արկցես, ձգեսցես>> և այլն [ԲՀ, 1975, էջ 13-14]: Թերևս փոխառություն է հուն. *ἀμάω* բայի (*ηηρ.*) անց. դերբ. *ἀμάσας* (*ἀμά*) ձևից, բուն իմաստով՝ 1) <<հնձել. հավաքել (բերք)>>, 2) <<կտրատել, վերցնել. ազատության պտուղները քաղել>>, 3) <<դատարկել>>, 4) <<(վրան) լցնել՝ ցանել. հողը տալ գլխին>> և 5) <<վերացնել. ոչնչացնել, բնաջնջել>>, փոխաբերական իմաստով՝ 1) <<օգուտ ունենալ, հաջողել>>, 2) <<ձեռք բերել>> և այլն (հմմտ. հուն. *καλώς ἡμεσων* - նրանք հավաքեցին առատ հունձք, *ψηφ.*՝ նրանց հաջողվեց. նրանց բախտը բերեց) [տե՛ս *Дворецкий*, 1958, էջ 92]: Ըստ այսմ՝ <<ի ձեռն ալֆայ>> ձևակերպումը, թերևս, կարելի է հասկանալ հունարեն բառի բուն կամ սովորական, իսկ <<ի ձեռն այինոյ>> ձևակերպումը՝ փոխաբերական իմաստի նշանակում, եթե ոչ այն, որ բառի բացատրությունը առաջին դեպքում վերաբերում է իգ. սեռի ձևին՝ -α վերջավորությամբ (= <<ի ձեռն ալֆայի>>), իսկ երկրորդ դեպքում՝ չեգ. սեռի ձևին՝ -η

¹⁵³ Հմմտ. Վ. Գ. *Համբարձումյան*, նշվ. աշխ., էջ 129-133:

վերջավորությամբ (= <<ի ձեռն այիտյ>>. է - ի բրբռ. արտասանությամբ) [հմմտ. *Широков*, 1983, с. 118-122]¹⁵⁴:

զ) *Անարգասիպ* <<անձև>> [ուղղելի՝ **անարգատ* - անտիպ, անձև), *անարգատ* բառը փոխառություն է հուն. *αναρκτος* *τύπος* <<առանց իշխող ձևի, անձնիշխան>> (փխբ.՝ <<սովորական, պարզ>>), իսկ *անարգ*-ը՝ հուն. *αν-αρκτος* <<ոչ մեկին չենթարկվող, անկախ, անձնիշխան>> [*ἀρκτέον* <<իշխած՝ իշխող>> <*ἀρχω* <<առաջ տանել, առաջնորդել, իշխել>>] ձևերից և այլն [հմմտ. *Дворецкий*, 1958, էջ 130, 235, 244-245, այլև 1654-1655]:

է) *Անարդակ* <<զառ ի վեր, անգանակ>>, կազմված *անարդ* բաղադրող հիմքով և *-ակ* ածանցով, փոխառություն է հուն. *ἀν-άρτιος* (*ἀν-άρσιος*) 1) <<անբարյացակամ, անբարեհաճ. թշնամական>>, 2) <<անհաճո, ամոթալի>> ածականական ձևից (<*ν-άρτάω* <<տակից՝ ներքինից կախել, կախ տալ>>, փխբ. <<կապել, գամել. ամրացնել>>) [տե՛ս *Дворецкий*, 1958, էջ. 131]:

ը) *Անդուքն* <<ամբարտաւանութիւնք>>՝ փոխառյալ հուն. *αναδύομαι* (առրիստ *ανέδύν*) բառից, որ ունի 1) <<(խորքից՝ ջրի տակից, լողալով՝ ջրի երես) դուրս գալ, բարձրանալ (մակերեսին)>>, 2) <<հետ քաշվել (դեպի խորքը), ծածկվել, թաքնվել>>, 3) <<(մի կողմ քաշվելով) ազատվել, խույս տալ>> իմաստները, և բավականին մոտ՝ բառարանում նշված <<ամբարտավանություն(ներ)>> իմաստին, մանավանդ ոչ առարկայական, այլ իմացական առումով, որը միանգամայն հավանական է. նույն արմատից՝ հուն. *αναδύσις*, *έως* <<նահանջ, (որևէ բանից) հրաժարում, շեղում, փչացում, խորամանկություն>> և այլն [*Дворецкий*, 1958, էջ 115 և 140]:

թ) *Անտար* <<ապրայ, կշռորդ>>, իբրև աբրա (արաբ. 'abra <<տարա>>?) փոխառություն է հուն. *ἀντᾶραι* (ապառնի անց. *ἀντέρομαι-ի*, ապառնին՝ *ἀντερόω*, առրիստը՝ *ἀντερόμην*, *հոն.* *ἀντειρόμην*) <<դիմադրելը՝ դիմադրում. հետ մղելը՝ հետ մղում>> (իմա՛ <<հակակշռելը՝ հակակշռում>>). հմմտ. *փարսանգ* <<քար, որ դնում են կշեռքի թեթև կշռող թաթի կողմը՝ հավասարակշռելու համար>>:

ժ) *Բուղարար* <<մատանի, կնքոց>> [*բուղ* (**բուլ*)]՝ փոխառություն է լատ. *bullā* <<կնիք>> (տարբերակ՝ *վուլ*), *բուլ* տարբերակի դեպքում նշում են՝ լատ. *bullā*, որից հուն. *βούλλα*, *βούλλη*, իտալ. *bollo* // *bolla* <<պալար՝ որպես զպղպջակ. ուստի նմանութեամբ՝ ճարմանդ, շինգո, և նշխար կնքոյ. կնիք, կոնդակ>> [ՆՀԲ, 1836, էջ 511], [ն. տ., 1837, էջ 830]. ծագում է հե. *b(h)el- // *b(h)ol- <<փչել, ուռցնել>> արմատից, որից հայ. *պալար*, *պղպջակ* և

¹⁵⁴ Այսպիսի ձևակերպմամբ բացատրություններ բառարանում հանդիպում են (մեր հաշվումով) հինգ դեպքում, որոնց անդրադառնալու ենք ստորև:

այլն [հմմտ. *Дворецкий*, 1958, էջ 138-139. հմմտ. ՀԱԲ, 1971, էջ 480, այլն 1979, էջ 4-5, 90-91. ՋՀՄԲ, 2010, էջ 615, 640]:

ժա) *Գաղգաղ* <<անիւ, ժողովումն, յայտնութիւն>> բառը կազմված է արմատի կրկնությամբ, չունի <<Արմատական բառարանը>> [ԲՀ, 1975, էջ 61, ՀԱԲ, 1971]: Ջահուկյանը տալիս է *գաղ(գ)աղել* <<խոշորել>>՝ հղելով *գաղգաղիլ* (վրիպակ, փխ.՝ *գաղգաղիլ*) ձևին, ծագման վերաբերյալ չունի որևէ դիտարկում (տե՛ս նաև *գաղել*) [*Ջահուկյան*, 1987, էջ 155, 199, այլն ՋՀՄԲ, էջ 146-147]: Պարզ *գաղ* արմատի նախնական իմաստն է <<պտույտ>>, բնագրում այն բացատրվում է <<անիվ>> բառով¹⁵⁵: Նույն իմաստն ունեն նաև *սայլ* (<<հին անվավոր փոխադրամիջոց>>) և *գալգալի*, (բրբռ.՝ քմայնացած) *գ՛ազ՛ալի* <<երկանիվ՝ միասունի փոխադրամիջոց>>) բառերը (< հե. *k^{[h]oel}- <<պտտվել, շարժվել>>, <<անիվ, սայլ>>). հմմտ. հին. *cul* <<սայլ>>, պրուս. *kelan* <<անիվ>>, լատվ. *du-celis* <<երկանիվ>>, հսլավ. *kolo*, սեռ. հոլ. *kolese* <<անիվ>>, լատ. *colus* <<ճախարակ>> և այլն) [հմմտ. *Гамкрелидзе, Иванов*, 1984, էջ 718-719. *Համբարձումյան*, 1998, էջ 34-38]:

ժբ) *Գամ* <<անգամ, ժամ>> բացատրությունը հետագայում մնացել է մեկուսի, ավելին՝ շրջանցվել է ՆՀԲ-ի նկատառումը, թերևս այն պատճառով, որ այն նշվում է *գամ* <<անցք, դեպք, էլք, հնարք և այլն>> բառին հարակից, ենթադասված՝ <<դեպք ժամանակի, այսինքն՝ անգամ, նուազ, հաղ>> բացատրությամբ [ԲՀ, 1975, էջ 62, ՆՀԲ, 1836, էջ 526]: Աճառյանը և Ջահուկյանը չունեն *գամ*, իսկ *անգամ*-ը և *ժամ*-ը, ոչ անկախ Հյուբշմանից, դիտում են իբրև փոխառություն [անգամ - իրան. *hangām* <<ժամանակ, միջոց, տարվա եղանակ>>, *angām* (նույնը) (վերջին ձևն ըստ Աճառյանի՝ <<չէ յիշած Հիբշման, աւելի ուղիղ է ներկայացնում մեր բառը>>), *ժամ* - իրան. *žamān* <<ժամ, ժամանակ>>, ըստ Ջահուկյանի՝ <<առանձնացված է իրանական *žamān* ձևից՝ -ān և հայ. -ան ածանցների բաղաբերակմամբ>>)] [ՀԱԲ, 1971, էջ 182-186 և 221-224. հմմտ. ՋՀՄԲ, 2010, էջ 52 և 279]¹⁵⁶: Կարելի է մտածել, որ հայ. *գամ* և *ժամ* (այլն *ժում* <<անգամ, հեղ>>. հմմտ. բրբռ.՝ օրը երկու *ժում* ուտել <<օրը երկու անգամ ուտել>>, Ազլ. Ալշ., Եր. և այլն, *ժուկ* <<ժամանակ>>. հմմտ. *ժուկով-ժամանակով* <<մի ժամանակ>>) բառերը բնիկ են, հանդես են գալիս *q//θ* տարբերակմամբ (հմմտ. *q//ջ*, *p//ջ* տարբերակում. *գայլ - գէլ //*

¹⁵⁵ Եթե *գաղ* արմատի համար ընդունում ենք <<պտույտ>> ընդհանուր իմաստը, ապա այն թերևս կարող է ներառել ոչ միայն <<անիվ>>, այլև մյուս երկու՝ <<ժողովումն>> և <<յայտնութիւն>> իմաստները:

¹⁵⁶ Լ. Հովհաննիսյանը հավանական է համարում հայ. *ժամ*-ը կապել հայ. *գ-ամ* <<ամանակ, ժամանակ. տարի>> ձևի հետ: Տե՛ս Լ. Շ. *Հովհաննիսյան*, Հայերենի իրանական փոխառությունները, Երևան 1990:

ջել, քոյր - քիրա // չիրա, մօրաքոյր - մոքիր // մոչիր. Աշտ., Նորադուր և այլն), և ջ-ի փոխարեն ժ-ն, հավանաբար, իրանականի հետ բաղարկման հետևանք է:

ժգ) *Գաղփայ* // *գողփայ* <<տրտնջող>> բառի համար Ամալյանը հետազայում գրում է. <<*Գաղփայ*, տրբորնջող. նույն մեկնությամբ կա նաև *գողփայ*>> [ԲՀ, 1975, էջ 62, 68, 355, *Ամալյան*, 2010, էջ 180]: Ըստ Աճառյանի՝ <<*Գաղփայ* <<տրտնջող>>. ունի միայն Բառ. երևմ. էջ 61, որ և էջ 63 կրկնում է նոյնը *գողփայ* ձևով>>՝ համարելով անհայտ ծագման [ՀԱԲ, 1971, էջ 507, հմմտ. ՋՀՄԲ, 2010, էջ 147]: Բառը չկա Ամատունու <<Հայոց բառ ու բան>>-ում, Աճառյանի <<Հայերեն գաւառական բառարան>>-ում, սակայն կա Մալխասյանցի <<Բացատրական բառարան>>-ում (հ. 3, Ե., 1944, էջ 183)՝ *ղահպա* (արաբ. kahbe), <<Հայոց լեզվի բարբառային բառարան>>-ում (հ. Գ, Ե., 2004 էջ 346) նշվում է՝ <<*Ղահպա* [*ղահպա*], ընդհ. պոռնիկ>> ձևով: Ուստի անհնարին չէ միջին հայերենում փոխառյալ լինելը արաբ. kahbe ձևից, մանավանդ եթե նկատի ենք ունենում նաև <<Բառգրքի>> աղբյուրները¹⁵⁷:

ժդ) *Դասուն* <<խոսել>> բառն, ըստ Ամալյանի՝ <<գուցե, ծագում է եբր. lāsōn (<<լեզու>>, die Sprache) բառից՝ սկզբնատառի վրիպակով>> [ԲՀ, 1975, էջ 74, 359]: Այս ենթադրությունը տեղին է, եթե ընդունենք, որ այս դեպքում ևս գործ ունենք հնչյունական մի այնպիսի երևույթի հետ, ինչպիսին կարող է լինել եբր. l // d (լմա՝ lāsōn // dāsōn <<լեզու>>) տարբերակումը: Հմմտ. 1) իսթ. tabarna <<կառավարիչ, տիրակալ>> // Labarna (հատուկ անուն), 2) հլատ. lingua // լատ. lingua <<լեզու>>, նաև հինդկ. jihvā, ավեստ. hizū-, hizvā (նույնը), հայ. լեզու, հիռլ. teng (նույնը), (ligur ձևի հետ՝ <<լեզու>>), գոթ. tuggō (նույնը), հանգլ. tunge (նույնը), (անգլ. tongue <<լեզու>>), ֆրանս. langue և այլն (< հ.-ե. *t'nh^[h]uH- <<լեզու>>), 3) հուն. δάκρυ, δάκρυμα <<արտասուք>>, լատ. lacrima, lacruma // dacrima, dacruma (նույնը), հիռլ. dnr, վալլ. deigr, (հոգն. թ.) dagrau, գոթ. tagr (նույնը), հանգլ. tæhher, tēar, teagor, անգլ. tear (նույնը), հայ. *արտասուք* (< հե. *t'ak^[h]ru- <<արտասուք>>) և այլն, 4) լատ. larix <<կվեճի, փիճի>>, հինդկ. tarú - (dāru) <<ծառ>> (< հե. *t'oru-)>¹⁵⁸:

ժե) *Դնոց եւ պատգարակ* <<մահիճ, դավոնիս>> [ԲՀ, 1975, էջ 81] գլխաբառի *դնոց* [< *դնել* (**դհ-ն-ել*) <<դնել, զետեղել>>] բաղադրիչը ծագում է հե. *d^[h]eH- [*dhē-n (< *dhē-)] <<դնել>>

¹⁵⁷ Տե՛ս Ռ. Մ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 7-16:

¹⁵⁸ Տե՛ս E. Laroche, Les noms des Hittites, Paris, 1966: J. Tischler, Hethitisches Etymologisches Glossar, 1-3, 1983-1993: Հմմտ. Т.В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры. тт. 1-2, Тбилиси, 1984:

արմատից. հմմտ. իւեթ. taŭŭi, հինդկ. dádhami, հուն. τίθημι <<դնում եմ, գետեղում եմ>> [Гамкрелидзе-Иванов, 1984, էջ 166, 203 և այլն, ՋՀՄԲ, 2010, էջ 201]:

ժգ) *Եկթափիստել* <<հիանալ, տխրել, մտայնոյգ, զարհուրել>> բառը [ԲՀ, 1975, էջ 86] փոխառություն է ոչ թե (ըստ Ամայանի) հուն. «κληξίς <<հիացումն>>, «κλεκτικός <<հիացական>>, (ըստ Ջահուկյանի՝ վրիպակով) «κθαμβέσμαι (փիս. «κθαμβέομαι) <<զարմանալ, ապշել>>, այլ հուն. «κ-τάπαζις, εος 1) <<շփոթ, սաստիկ հուզմունք>>, 2) <<խանգարում, խախտում, վշտացածությունն այլն>> ձևից. հմմտ. հուն. «κ-τάρασσω, *ատտիկ*. «κ-τάραττω <<շփոթ՝ հուզմունք առաջ բերել>>, <<խռովել, ալեկոծել, անհանգստացնել>> (բուն իմաստով՝ «κ-τάπεινόω <<ստորացնել, նվաստացնել>>, <<պակասեցնել, փոքրացնել>>, <<խոնարհ՝ հնազանդ դարձնել>>, <<հանդարտեցնել, խաղաղեցնել>>) [հմմտ. *Дворецкий*, 1958, էջ 499]:

ժե) *Եկիտ* <<ծածուկ>> [< հուն. τικτω <<ծնեցի, ծնել եմ>> («τεκον <<ծնել, առաջ բերել, արտադրել>>)] [հմմտ. *Дворецкий*, 1958, էջ 1627]:

ժը) *Եմման* (*եմմանու*) <<եղեալ յումեքէ>>, այլն *եմաթ* <<անտիոք, սպասաւոր, բարկացումն>>, *եմանուն* <<հաւատացեալ>>, *եմերոն* <<խորհուրդ>>, *եմանովթ* <<հաւատ>> և *եմմաւուս* <<երկնչող խորհրդոյ>> բառերը, թերևս, ծագումով նույն աղբյուրից են, իմաստային (թեմատիկ) միևնույն խմբի մեջ միավորելի՝ կապված հավատքի, վերջինիս խորհրդի, նրա նկատմամբ հնարավոր երկյուղի, հարուցած վախի հետ և այլն [ԲՀ, 1975, էջ 89, այլն ՀԱԲ, 1971, էջ 26, ՋՀՄԲ, 2010, էջ 216]¹⁵⁹:

Ըստ այսմ կարելի է կարծել, որ հայ. *եմմանու* բառը փոխառություն է հուն. «μ-μόνης <<խելացնոր, իւելքը թոցրած. մոլեգնած, կատաղած>>, «μ-μόνω (գերադր. աստիճան՝ «μ-μόνερστατα) <<խենթորեն, իւելացնոր կերպով. մոլեգնաբար, գազազած>> բառից [Дворецкий, 1958, էջ 26]:

ժթ) *Եսեն* <<դարան, լուրթին, աղբիւր>> բառն ըստ Աճառյանի՝ << ունի միայն Բառ. երեմ. էջ 89>>, իսկ ըստ Ջահուկյանի՝ <<Անստույգ բառ: Ծագումն անհայտ է>> [ԲՀ, 1975, էջ 91, ՀԱԲ, 1971, էջ 26, ՋՀՄԲ, 2010, էջ 218]: Ելնելով բառի <<աղբյուր>> բացատրությունից, որին կից նշվում են նաև <<դարան, լուրթյուն>>, կարելի է ենթադրել, թե վերջիններս աղբյուրի <<թաքուն, դեռ չբխած վիճակ>> են նշանակում, և ըստ այդմ՝ հավանական է դառնում եսեն

¹⁵⁹ Քննական բնագրում կա նաև *եսերոն* <<խորհուրդ>> բառը, որն այլ քննարկման առարկա է (ն. տ., էջ 206): Ի դեպ՝ մեր <<Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ>> գրքում (էջ 151) վրիպակով տպագրված է *եմման* // *եմանու*, փիս.՝ *եմման* // *եմմանու*:

բառի (նախնական ձևը՝ *էքսեն⁶⁰) փոխառյալ լինելը հուն. էջիֆ (սահմ. եղ. անցյ. անկատ. եզ. 3-րդ դ. էջեյմ բայի) <<բխում է, հորդում է, դուրս է գալիս՝ տալիս>> փոխառյալ լինելը. հմմտ. նաև հուն. էջեյմ (< εյմ) (սահմ. եղ. ապանի՝ էջէրօմա) 1) <<դուրս գալ, տարածվել, ձգվել>>, 2) <<մոտ գալ, մոտենալ>>, 3) <<տարածվել, ցրվել>>, 4) <<հորդել, լցվել, թափվել>> և այլն [Дворецкий, 1958, էջ 570]:

ի) *Եստորոզի* <<զմամանէ>> բառի բացատրությունը ենթադրել է տալիս, որ նրան նախորդել է *եստոր* <<թեզանիք>> բառը, որն ըստ ՆՀԲ-ի նշանակում է՝ <<զգեստի երկար թև, որպես բազպան>>, ըստ Աճառյանի՝ նաև <<կտաւի լայնքի թելերը>> (հմմտ. ԲՀ, 1975, էջ 91, 118, ՀԱԲ, 1971, էջ 86, 1973, էջ 27 և այլն), իսկ *եստորոզի* բառի մեջ *ոզի* բաղադրիչը աղավաղյալ *ազի* <<պոչ>> (այստեղ՝ <<ծայր, եզր, փեշ և այլն>>) բառն է (հմմտ. *եստորազի*. ձեռագիր № 3202), ուստի *եստորոզի* (ուղղելի՝ *եստորազի*) բառը պետք է հասկանալ <<թեզանիքի եզր՝ ծայր՝ երիզ>> իմաստով: Այն, հավանաբար, փոխառություն է՝ հուն. էստօր, սեռ. հոլ. էստօրօս <<հեղույս, գնդերիթ. դրոշմ, երիթ (լուծը առեղին ամրացնելու)>> [տե՛ս Дворецкий, 1958, էջ 674]:

իա) *Ետրաղիճ* <<անառակ. անբարո (աղջիկ)>> բառի համար քննական բնագրի ծանոթագրության մեջ ասվում է՝ <<Հմմտ. Արմ., *Ետր*>> [ԲՀ, 1975, էջ 91, 364, այլն *Ամայյան*, 2007, էջ 206]: Հայ. *ետր*, *ետրոնին* բառերի ստուգաբանությունը պատկանում է Ջահուկյանին, որը ժամանակին ընդունել է Աճառյանը [*Ջահուկյան*, 1963, էջ 85]: *Ետրաղիճ* բառի դեպքում ևս ունենք *ետր* (հուն. էտօր, այլն *էպ. էտօրի, իոն. էտօրի* <<ընկերուհի, սիրուհի>>, <<հետերա>>, <<անառակ>>) բառը, որը բաղադրվել է *աղիճ* (> **աղիճ-իկ*) բառի հետ, և այն նախկինում նման որևէ քննության չի առնվել¹⁶⁰:

իբ) *Թեսաղ/թեսել* <<ժողով, ժողովել>> բառը չունի գրչագրական տարբերություն, էլ ծանոթագրություն [ԲՀ, 1975, էջ 74, 359]: Ըստ Աճառյանի՝ <<*Թեսաղ* <<ժողով>> և *թեսել* <<ժողովել>>. Ունի միայն Բառ. երեմ. էջ 118>> [ՀԱԲ, 1973, էջ 173], իսկ ըստ Ջահուկյանի՝ <<*Թեսել* <<ժողովել>>(ԲՀ): Բաղադրություն՝ *թեսաղ* <<ժողով>> (ԲՀ): Ծագումն անհայտ է>> [ՋՀՄԲ, 2010, էջ 264]: Կարելի է կարծել, որ *թեսաղ/թեսել* ձևերի բայաբնագրը կապ ունի հուն. տօսօ (*ատտիկ. տօտտ*) <<դնել, կանգնեցնել. տեղավորել, դասավորել>>, <<ընդգրկել, ներառել, մեկտեղել>>, <<շարել, շարք կանգնեցնել>> ձևերի տօսօ- (*ատտիկ. տօտտ*-) արմատի հետ, ընդ

¹⁶⁰ *Ետրաղիճ* բառի երկրորդ բաղադրիչի մասին մանրամասն տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Հայերեն *աղջիկ* բառի ստուգաբանությունը // <<Պատմա-բանասիրական հանդես>>, 1997, 2, էջ 149-152: *Նույնի*, Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության, 1, Երևան, 1998, էջ 29-33:

սմին եթե ոչ ծագումնային զուգադիպում, ապա փոխառություն հունարենից [հմմտ. *Дворецкий*, 1958, էջ1604]:

իզ) *Ի մակագոյն* <<երկրագոյն>> (այլ ձեռագրեր՝ <<երկարագոյն>>). երկրորդ բացատրությունը ճիշտ է [ԲՀ, 1975, էջ 129, 376, *Սմայլան*, 2007, էջ 226]: Բառը փոխառու է հուն. *μηκος*, (*ηηρ.*) *μακος* ձևից, որն ունի մի քանի իմաստ՝ 1) <<երկարություն, ձգվածություն 2) տևողություն, տևական լինելը>>, 3) (բառացի) <<չափս, մեծություն>>, (*ψηυρ.*) <<խորք, խորություն>> [տե՛ս *Дворецкий*, 1958, էջ 1047, 1092]: Ըստ այսմ՝ հայերենում այն պիտի ունեցած լինի հետևյալ զարգացումը՝ **մակ*, **ի մակ(ագոյն)*, *իմակագոյն* (<<երկարագոյն>>):

իդ) *Իրայոն* <<տեսիլ>> նշվում է միայն այս բառարանի օրինակով՝ իբրև <<անհայտ ծագման>> բառ [ԲՀ, 1975, էջ 132, ՀԱԲ, 1979, էջ 143, ՋՀՄԲ, 2010, էջ 287]: Այն, հավանաբար, փոխառու է հուն. *φρα*, (*հոն.*) *φρά τά* 1) <<զոհաբերման տուրք. զոհաբերում, զոհ>>, 2) <<զոհաբերման անասունի ներքինը (որով քրմերը ուշակում էին)>>, այլ կերպ՝ <<խորհրդանիշ, սուրբ նշան>>, 3) <<սրբազան ծես>> ձևից [հմմտ. *Дворецкий*, 1958, էջ 813]: Ըստ այսմ՝ *իրայոն* բառի *յ*-ն հայերեն *ա*-ից հետո է հնչվել և գրվել, համաձայն հայտնի կանոնի, իսկ -*ոն* մասնիկը, թերևս, եղել հունարեն ածանց կամ վերջավորություն:

իե) *Լեդեալ* <<լքյալ, ձանձրացյալ>> բառը ճիշտ ձև է, թեև ունի *լերդեալ*, այլև <<*լեթելոց*. *լքելոց*, *ձանձրացելոց*>> կամ <<*լեթել*. *լքել*, *ձանձրանալ*>> տարբերակներ [ԲՀ, 1975, էջ 133, 377]: Ըստ Աճառյանի՝ *լեդեալ*-ը սխալագրություն է, ուստի բառարանն ունի *լերդեալ* [ՀԱԲ, 1973, էջ 277]: Սա ոչ ճիշտ սրբագրում է, մանավանդ բառի իմաստի, ձեռագրերի մեծ մասի տվյալների տեսանկյունից: Ջահուկյանը ևս դնում է *լերդեալ*, թերևս ոչ անկախ Աճառյանից [ՋՀՄԲ, 2010, էջ 295]: Մալխասյանցն ունի ոչ միայն բարբառային (կամ խոսակցական) *լեթել* <<թուլանալ, տկարանալ, լքվել>>, այլև *լեթվել* <<1. շատ ուտելուց զգվել, տաղտկանալ, 2. երես առնել, լրբանալ, 3. երկար տևել ու չլավանալ (վերքի մասին)>> բառերը [ՄԲԲ, 1944, էջ 192]: Այստեղ *լեթել* և *լեթվել* չեզոք սեռի բայերի ընդհանուր իմաստն է <<թուլանալ, լքվել. ձանձրանալ>>, ուստի կարելի է ենթադրել, որ այն լատինաբան հայերենում գործածված *լատ. letäre* <<վնասել. սպանել, մեռցնել, ճնշել>> բայն է, և <<Բառզիրք հայոց>>-ում տեղ է գտել ինքնաբերաբար՝ իբրև գրքային բառ. հայերեն գրավոր աղբյուրներում այն նշվում է *ledëre* (<<վնասել>>) ձևով [հմմտ. <<*Բազմավէպ*>>, 1873, էջ 323. *Ջարբհանալեան*, 1878, էջ 53, *Աճառյան*, 1951, էջ 323, *Համբարձումյան*, 2010, էջ 149 (լատիներեն բառը տպագրված է վրիպակով)]:

իզ) *Խել* <<հեշտ>> (այլև <<հեշ, փխ. հեշտ>>) բառը ծանոթագրվում է՝ <<Հմմտ. Արմ.>>, հետագայում՝ <<Խել. հեշ: Մեկնությունը պետք է լինի <<հեշտ>>>> [ԲՀ, 1975, էջ 142, 379, *Ամայյան*, 2010, էջ 232]: Ըստ Աճառյանի՝ <<Խել <<հեզ>>. ունի միայն Բառ. երեմ. էջ 140. ի՞նչ լինելը յայտնի չէ>> [ՀԱԲ, 1973, էջ 355], ըստ Ջահուկյանի՝ <<Խել <<հեշտ>> (ԲՀ, այլ ձեռ. <<հեզ>>, որից Աճ. ՀԱԲ 2, 355): Ծագումն անհայտ է>> [ՋՀՄԲ, 2010, էջ 325]: Այս *հեշ//հեշտ* բառերը ձեռագրական տարբերակներ են՝ <<արթնացում, սթափեցում. ուշադրության հրավիրում (մի բանի վրա)>> ընդհանուր իմաստով, որից, թերևս, բրբռ. *հեշար, հեշ(ա)րանալ* <<ուշքի գալ, զգաստանալ>> (Մոկս, Մուշ, Մասուն, Վան և այլն), այլև *հուշտ (հուշտ անել* <<խրտնեցնել>>, *հուշտ լինել* <<խրտնել>>) (Արարատյան, Թրիլիսի, Ղարաբաղ, Կարին) բառերում՝ անկախ արմատի բնիկ կամ փոխառյալ լինելուց [տե՛ս ՀԼԲԲ, 2004, էջ 272, 314]:

Նման հիմք տալիս է մի կողմից՝ բառի <<հեշ>> կամ <<հեշտ>> իմաստը, որը կա հայերենի բարբառներում, մյուս կողմից՝ այն նկատառումը, որ *խել(ք)* բառը լեզվի գրական տարբերակում ամրակայվել է իմացական կողմի վրա՝ հեռանալով նախնականից, որը զգացական է՝ <<զգաստ՝ արթուն լինելը, զգաստանալը՝ արթնանալը, ուշքը վրան պահելը. սթափ լինելը և այլն>>: Ըստ այսմ *խել* բառը, հավանաբար, նշանակել է նաև <<զգաստ, արթուն, ուշքը տեղը>>, որն էլ <<Բառգիրք հայոց>>-ում բերվում է <<*հեշ*>>//<<*հեշտ*>> բացատրությամբ:

իէ) *Խշել* <<դադարել>> բառը չունի ձեռագրական տարբերակներ, իսկ ծանոթագրության մեջ նշվում են նաև <<յանկողին հանգչել>>, <<դադարել, կամ հանգչել>> իմաստները [ԲՀ, 1975, էջ 144, 380]: Ջահուկյանը ճիշտ է ենթադրում՝ <<կապ ունի՞ արդյոք *խիշտ* <<անկողին>> բառի հետ>> [ՋՀՄԲ, 2010, էջ 336]: Դա կարելի է հիմնավորել ոչ միայն, ինչպես ինքն է գրում, <<խիշտ <<անկողին>> (*<<հանգստավայր>>, *խշտիք* <<խղճուկ անկողին>>, *խշտել* <<հանգիստ տալ, օթևանել>>) -իւեթ. ^Բheštiā-, ^Բhešti- (կամ ^Բhištiā-, ^Բhišti- - Վ.Ն.) <<դամբարան>> (?) զուգահեռի անցկացմամբ [*Ջահուկյան* 1987, էջ 314]¹⁶¹, այլև այն ավելի հիմնավոր դարձնող լուվ. hi-šhiĀa- <<կապել, առնչել>>, հհնդկ. ṣiṣṭhati <<կանգնած է>>, ավեստ. hi-štaiti <<կանգնած է, դրված է>>, հուն. ἐστᾶμι <<դնում եմ>>, լատ. si-stō <<դնում եմ>>, հիոլ. -si-ssiur <<ինձ պահում եմ>> ձևերի հավելմամբ. հմմտ. նաև հայ. *խշ-//խշտ-* արմատից կազմված *խշել*, *խշտելի*, *խշտի* (հմմտ. *զետնախշտի* <<զետնին պառկած>>), (բրբռ.) *խրշտ*, *խրշտիկ* <<ցցուն, ցցված, կանգնած>>, <<հպարտ, գոռոզ>> (Մշ., Ալշ. և այլն), *խրշտ ընել*

¹⁶¹ Ջահուկյանի գրքում ^Բhešti- է, փխ.՝ ^Բhešti- (այն է՝ ī-ն երկա ձայնավորմամբ):

<<սպանել>>, <<մորթել>> (տե՛ս ՀԼԲԲ, 2002, էջ 320). ցեղակից լեզուների հիշյալ ձևերը ծագում են հե. *s/t^[h]ist^[h]aH- արմատից [հմմտ. *Гамкрелидзе, Иванов, 1984, էջ 220*]:

իբ) *Կալոն* <<սեղեխ, հոմանի>> (ըստ <<Բառգրքի>> հին հրատարակության), այլև *տլոն* (*սեղեխ* բառի բացատրության մեջ) [ԲՀ, 1975, 286, *Աճառյան*, 1973, էջ 486]: Ըստ Ջահուկյանի՝ <<կալոն. տե՛ս *տլոն*>>, այլև <<*տլոն* <<հոմանի, սիրեկան>>: Ծագումն անհայտ է>> [ՋՀՄԲ, 2010, էջ 373, 730]: Կարելի է կարծել, որ *կալոն* և *սեղեխ* նախ՝ նույն արմատի տարբերակներ են՝ *կալ-//սեղ-* (հնչյունական երեք կարգի զուգակցմամբ), այլև՝ ծագում են հե. *k^[h]-ól-e(s)- արմատից (հմմտ. իսթ. *kalleš* <<կանչել, ձայնել>>, հուն. *κἄλέω* <<կանչել, ձայն տալ. անվանել>>)՝ կրելով իմաստային փոփոխություն (զարգացում՝ սոցիալական որոշակի պայմանականությամբ) [հմմտ. *Гамкрелидзе, Иванов, 1984, էջ 220*]:

իթ) *Հաս* <<տի(ք)>> (*հասակ* <<չափ, տի>> իմաստով մոտ են, եթե ոչ՝ նույնական [ԲՀ, 1975, էջ 180-181, 395, *Ամալյան*, 2010, էջ 259] (<հե. *Has- <<կրակարան, կրակի աղբյուր՝ կրակ>> (հիմքում՝ <<արև>>. հմմտ. հայ. *արևդ ապրի* <<երկար կյանք ունենաս>>, ավելի հին՝ <<օրդ՝ տարիքդ շարունակվի>> և այլն) [հմմտ. *Համբարձումյան*, 2002, էջ 30-31, այլև 2007, էջ 36-37]:

լ) *Հալան* <<հլու>> բառը թերևս նույնն է, ինչ *հալան* <<հավանություն, համոզում, հաճություն>>, որ նշում են բառարանները և ստուգաբանորեն բխեցնում հե. *Haë(Á)- նախաձևից [ԲՀ, 1975, էջ 182, հմմտ. ՆՀԲ, 2, 1937, էջ 72, *Meillet*, 1892, էջ 164-165, *Hçbschmann*, 1897, էջ 465, ՀԱԲ, 3, էջ 453, *Համբարձումյան*, 2012, էջ 30-31]:

լա) *Յալան* <<արտաբերող>> բառը բնագրում չունի տարբերություններ, այն չենք գտնում <<Արմատական>>-ում և <<Ստուգաբանական բառարան>>-ում [ԲՀ, 1975, էջ 227, ՀԱԲ, 1977, էջ 390, ՋՀՄԲ, 2010]: Բառի արմատն է *ալ*, որն ունի *լ* հավելված (աձանց), այլև *-ան* վերջածանց (աձականական, տվյալ դեպքում՝ դերբայական արժեքով՝ <<ձայն հանող, ձայնող՝ կանչող>>), ծագում է հե. *aus-//*us- (*Ē-es) <<լուսավորել. լույս տալ>> ձևից. հմմտ. հինդկ. *uṣáhi* <<արշալույս>>, հուն. (*hnl.*) *ήώς* <<(առավոտյան) արշալույս>>, լատ. *aurōra* <<արշալույս>> և այլն և նշանակում է՝ 1. (բուն իմաստով)՝ *առալալտ* <<օրվա սկիզբ>>, 2. (փոխաբերաբար)՝ *ալետել* <<(բարի) լուր տալ>>, *ալետիք* <<(բարի) լուր>>, 3. (բացարձակ իմաստով)՝ *յալտ* <<միշտ՝ անսկիզբ և անվերջ>> և այլն [*Гамкрелидзе, Иванов, 1984, էջ 223, 229, Ջահուկյան, 1994, էջ 57*]: Երկրորդ իմաստն առնչվում է ձայնական գործողությանը՝ <<լույս է առաջ բերում, բարին՝ իբրև լույս ավետվում է>>. հմմտ. <<Արդ բարիք է արեզակն և

բնութեամբ գեղեցիկ>> (Եգնիկ Կողբացի). <<Առաւօտ լուսոյ, արեգակն արդար>> (Ներսէս Շնորհալի) :

լբ) *Ոգորիլ* <<կռվել, մարտնչել, դիմակայել>> բայն, ունի *ոգոզել* <<գոռալ, հող հանել, հովանալ>>, այլն *ոգոշել* (նույնը) տարբերակները (<<գրչությունները>>) [ԲՀ, 1975, էջ 253, 419, *Սևայան* 2007, էջ 299]: ՆՀԲ-ն բառի *ոգոր-* (**n-qor-*) արմատը կապում է *եղջիր* բառի *եղ-* արմատի հետ, որն, ի դեպ, որքան էլ անհավանական կարող է թվալ, երբ համեմատում ենք զուգահեռ բերվող հուն. κέρως (սեռ. հոլ. κέρᾶτος, *էպիկ.* κέρᾶος, *հոն.* κέρεος, *աստիկ.* κέρως) <<եղջուր. պոզ>>, լատ. corn <<եղջուր, պոզ. եղջերվափող>> բառերի կեր-, cor- արմատի հետ (հմմտ. **n-qor-*), առաջ է գալիս, մեր կարծիքով, ծագումնային վերականգնման հնարավորություն [ՆՀԲ, 1837, էջ 503]: Ըստ Աճառյանի՝ ոգորիլ-ը <<անստոյգ բառ>> է, ըստ Ջահուկյանի՝ <<Ծագումն անհայտ է: Հավանաբար կազմված է *-որ* վերջածանցով և *ոգ-* արմատով, որ հազիվ թե կապ ունենա հե. **seu-* <<ծռել, կտրել, քշել>> արմատի հետ (**sou > ոգ-*)>>, իսկ *ոգոզել*-ի և *ոգոշել*-ի դեպքում՝ <<ծագումն անհայտ է: Կապ ունի՞ *ոգորիլ* բայի հետ (հմմտ. *տկլոզ - տկլոր*)>>, այլն <<Թերևս նույնն է *ոգոզել* բայի հետ>> [ՀԱԲ, 1977, էջ 549, ՋՀՄԲ, 2010, էջ 549]: *Ոգորիլ* (այլն *ոգոզել, ոգոշել*) բառերի մեջ ընդհանուր է *որ* արմատը, ծագում է հե. **ú^[h]er-* <<բարձունք>>, այլն <<գլուխ>>, <<պոզ. եղջուր>> արմատից. հմմտ. հվգերմ. *hirni* <<ուղեղ>> (գրո (ø) ձայնավորմամբ՝ *ú^[h]er-*), նաև հուն. κάρ, κάρη <<գլուխ>>, հինդկ. *îḍḍga-* <<պոզ. եղջուր>>, հանգլ. *horn* (< գերմ. **hornaz*), *heorot* (նույնը), լատ. *corn* (նույնը) [հմմտ. *Гамкрелидзе, Иванов*, 1984, էջ 173, 876]¹⁶²:

լգ) *Ողայ* <<ձայնք լալեաց>> բառը հանդիպում է քննական բնագրի *ողբա եւ ողբալի* բառակապակցություն-գլխաբառի բացատրության մեջ, որի տողատակին նշվում են *ողա//ողայ* և *ողբալ* գրչագրական տարբերակներ, ծանոթագրությունների բաժնում ավելացվում է՝ <<Այս բառը կա № № 4149 և այլ ձեռագրերում>> (հղելով նաև *ողայ* ձևին նախապատվություն տված <Արմատականին>>) [ԲՀ, 1975, էջ 254. հմմտ. ՀԱԲ, 1977, էջ 553]: Ըստ Ջահուկյանի՝ <<*Ողայ* <<լացի ձայն, ողբ ու կոծ>> (ԲՀ): Թերևս, *ողբալ*-ի սխալագրությունը (գրված է առանց *բ*-ի)>> [ՋՀՄԲ, 2010, էջ 600]: Բառի ծագումը կարող է առավել ստույգ լինել, եթե *ող-* արմատը դիտենք նույնը, ինչ (*բրբռ.*) *ուլուլալ* (**ուլ-ուլ-ալ*) <<լալ, ողբալ>> բառի *ուլ-* արմատը՝ *ու//ու*, այլն *ղ//ղ* տարբերակայնությամբ, որ ծագում է հե. **ul-* [**ul-ul-*]: Ի դեպ՝ Ջահուկյանն այս արմատի

¹⁶² Ի դեպ՝ միաժամանակ նշվում է, որ հնդեվրոպական նույն այս արմատից է փոխառյալ սեմ. **eam-* <<պոզ. եղջուր>> արմատը. հմմտ. ակկադ. *êarnu-*, ուգար. *êrn*, հիբ. *êeren*, արաբ. *êarn-* ձևերը:

կրկնականը դիտում է ավելի վաղ՝ նախագրային ժամանակաշրջանի մեջ՝ համապատասխան նախալեզվի համար վերականգնվող ձևին [*Ջահուկյան*, 1987, էջ 154, 164, 219 և այլն]:

լդ) *Ռաքաւ* <<ընթացք>> բառը չունի տարրնթերցում, իսկ ծանոթագրության մեջ նշում է, որ <<Բառք եբրայական>>-ում *ռաքաւ* է [ԲՀ 1975, 280, 427]: Աճառյանը նշում է միայն Մեղրեցուն, չի մեկնում կամ ստուգաբանում, իսկ *Ջահուկյանը* գրում է. <<*Ռաքաւ* <<ընթացք>> (ԲՀ): Ծագումն անհայտ է>> [ՀԱԲ, 1973, էջ 250, ՋՀՄԲ, 2010, էջ 657]: Կարծում ենք, որ բառը փոխառություն է՝ արաբ. *raḡam* (<եբր. *raqam*) <<ընթացք>>, <<հրամանագիր, (թագավորական) հրովարտակ, (պաշտոնական) գրություն>> [հմմտ. *Միմենն կաթողիկոս Երեւանցի*, 1873, էջ 20, ծան. 2, այլև 2003, էջ 29, 413]:

լե) *Սուքար* <<հովանոց>> բառը չունի գրչագրական տարբերություններ և որևէ ծանոթագրություն [ԲՀ, 1975, էջ 292]: Ըստ Աճառյանի՝ <<ունի միայն Բռ. երեւ. էջ 239>>, ըստ *Ջահուկյանի*՝ <<*Սուքար* <<հովանոց>> (ԲՀ): Ծագումն անհայտ է (եթե կապված չէ *շուք* բառի հետ)>> [ՀԱԲ, 1979, էջ 257, ՋՀՄԲ, 2010, էջ 690]: Կարելի է ենթադրել, որ *սուքար* <<հովանոց>> բառի արմատն է *սուք*- (հմմտ. *կոց-ար* <<մի տեսակ երկարակտուց թռչուն>>, *մթ-ար* <<մուր. մթություն>>, *փապ-ար* <<ծերպ, ճեղք, քարանձավ>> և այլն), իսկ <<հովանոց>> իմաստը հնարավոր է դարձնում այն, իրոք, համեմատելու հայ. *շուք* <<ստվեր, հովանի>> բառի հետ՝ իբրև արմատի տարբերակ. վերջինս *Ջահուկյանը* հարցականով՝ ոչ հավաստի ձևով բխեցնում է հե. *k'ëō-ko- [*k'eu-] <<լուսավորել, պայծառ>> արմատից [*Ջահուկյան*, 1987, էջ 57, 132, 207, 219, 232 և այլն]: Հայ. *շուք* բառի <<ստվեր, հովանի>> և <<պատիւ, փառք, վեհություն>> իմաստները հայտնի են մատենագրական հին վկայություններից, այլև այս բառարանից [ԲՀ, 1975, էջ 251]: Նույնպիսի ծագում ունի նաև հայ. *սուք* <<շուք, պատիվ>> բառը, որ հանդիպում է ոչ միայն <<Բառգիրք հայոց>>-ում՝ *սուքար* <<հովանոց>> բառի մեջ, այլև, օրինակ, Սայաթ-Նովայի հայերեն խաղերից մեկում [*Քոչոյան*, 1963]:

լզ) *Վարսանաւետ* (< *վարսանաւետից*) <<սպանդարամետական>> (<<սանդարամետականաց>>) (<<դժոխային>>) [ԲՀ, 1975, էջ 300]: Ըստ *Ջահուկյանի*՝ <<Անստույգ բառ: Ծագումն անհայտ>> (ՋՀՄԲ, 2010, էջ 708): Բառի *վարս* բաղադիրչը, իբրև առանձին արմատ, ծագում է հե. *uṣ-en- <<սերմ թափող՝ լցնող>>. հմմտ. ավ. *varñsna* <<արական>> և այլն [*Гамкрелидзе, Иванов*, 1984, էջ 566]: Հմմտ. նաև հայ. *վարսանդ* <<այն տեղը ծաղկի, ուր թափվում՝ լցվում է ծաղկափոշին՝ առեջներից>>:

լէ) *Փասքուս* <<շատախոս>>, որ Աճառյանը նշում է <<քուս, բամբասող>> իմաստով՝ իբրև անհայտ ծագման բառ, իսկ ըստ Ջահուկյանի՝ նշանակում է <<բամբասող, զագրախոս>>, որ համարվում է կազմված *փասս*- արմատից և *քուս* բառից [ՀԱԲ, 4, 484, ՋՀՄԲ, 2010, էջ 759]: Կարելի է կարծել, որ այն ծագում է հե. *pósk-ei* / **psk-* արմատից, զուգահեռներ ունի, օրինակ, իտերերենում:

լը) *Փոփոզել* (<*փո-փոզել* <<հոգի՝ շունչ տալ>>) բառ չունի Մեղրեցին, այլ ունի *փոփոքել* <<նուազեցուցանել>> [ԲՀ, 1975, էջ 328]. ըստ այսմ՝ *փոփոզել* / *փոփոքել* (<**փոզ-փոզ-*) կրկնավոր կազմություն է, կապ չունի *փոփ-* արմատի հետ (որ կարծում են Աճառյանը և Ջահուկյանը՝ ոչ անկախ Մեյեից) [*Աճառյան*, 1979, էջ 288, 530, *Ջահուկյան*, 2010, էջ 698, 769], ծագում է հե. **poĕo-* [**p(e)u-*, **phu-*] արմատից. հմմտ. սանս. *pĕ*, *pāvana* <<քամի>>, հուն. *πνέω*, *πνεῦμα* <<շունչ>>, *πῦρ* <<հուր>>, *πύω* <<հոտիլ>>, լատ. *put°re* <<հոտել, փսել>> և այլն (ինչպես որ հայ. *ոզի*, *հոզի* և այլն) [հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 145]:

2. *Լատինաբան հայերենին բնորոշ ձևերի քննություն*: <<Բառգիրք հայոց>>-ի մի հետաքրքիր երևույթ է այն, որ նրանում տեղ են գտել լատինաբան հայերենի տարաբնույթ ձևեր: Դրանք կա՛մ հանդես են գալիս բառահոդվածի տեսքով, կա՛մ գործածվում են նյութը շարադրելիս: Հայտնի է, որ լատինաբանությունը մեզանում սկիզբ էր առել 14-րդ դ. 10-ական թթ. և արհեստական միջամտությամբ տարբեր չափերով գործելիս է եղել մինչև 18-րդ դ. 70-80-ական թթ: Հայտնի է նաև, որ լատինաբանության հաղթահարումը Մխիթարյանների՝ այդ ուղղությամբ գործադրած ջանքերի արդյունք է¹⁶³:

